Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 12.01.2022թ. չորեքշաբթի թիվ 1 (1026)

# Առաջին

«**Կրթություն**» շաբաթաթերթի 2022 թվականի **առաջին** համարը սկսենք **ինքնավստահ** խմբագրականով. որպեսզի ինքնվստահ լինեն մեր հետագա բոլոր հրապարակումները ողջ տարվա ընթացքում... Ժողովուրդն է ասում, չէ՞, *ինչպես տարին սկսես, այնպես էլ այն կշարունակվի*: Իսկ ինքնավստահություն պետք է մեզանից յուրաքանչյուրին եւ մեզ՝ մեր հավաքական էության մեջ: Ինչո՞ւ հենց **ինքնավստահություն**, որ առաջարկում ենք նաեւ որպես **տարվա նշանաբան**: Որովհետեւ մեր ժողովրդին դա՛ է պակասում ահա արդեն հազար տարի...

Յուրաքանչյուր հայ, կամ գոնե մեզանից շատերը, իբրեւ հանրագիտարանային ճշմարտություն, գիտեն, որ, ասենք, առաջինը մշակովի բույսերի ցանքսով զբաղվել են Հայկական Լեռնաշխարհի բնակիչները: Առաջինը ձին ընտելացրել, առաջինը մետաղը այստեղ են ձուլել: Ժամանակը բաժանել են օրերի, ամիսների, տարիների, առաջին հացը այստեղ են թխել: Անիվի գյուտը այստեղ են արել, աստղային երկինքն առաջինը այստեղ են դիտել... էլ չշարունակենք. միշտ առաջինը, միշտ առաջինը... Բայց արի ու տես, որ որքան էլ պարզ ու անհերքելի, այս ճշմարտությունները մեր քաղքենուն զայրացրել են միշտ, եւ նա շարունակել է կարդալ, խոսել, մտածել ա՛յլ լեզուներով, իրեն համարել ա՛յլ մշակույթի կրող, լավագույն դեպքում՝ աշխարհաքաղաքացի, որ սովորություն ունի միշտ խորհուրդ տալ. «*Դա եղել է անցյալում, իսկ այսո՞ր*»: Այս հարցը դիվային էություն ունի իր մեջ ամբարած, որ միանգամից անվստահության թույն է կաթեցնում մեր մտքի վրա ու կաշկանդում պարզ համեմատությամբ կրկին տեսնել, որ այսօր էլ, ինչպես միշտ, մենք մնում ենք նույնը՝ **միշտ առաջինը**...

**Էպոսը** ճշգրտորեն արտացոլում է տվյալ ժողովրդի հավաքական բնավորության առանձնահատկությունները: Որքան քաջ, այնքան միամիտ, որքան հզոր, այնքան անվստահ... Անպայման պիտի կողքից մեկը հուշի, որ **Դավիթը** իրեն թափ տա ու դուրս գա հորից: Անպայման այլազգի մի գիտնական պիտի հնարի *Ուրարտուն*, որ մենք մոռանանք *Արարատը*, կամ էլ այլազգին պիտի փորձի *հնդեվրոպական մայր լեզվի հայրենիքը* փնտրել **Հայկական Լեռնաշխարհում**, իսկ մեր պատմաբանները մեր պատմության հազարամյակները շարունակեն դիտել իբրեւ կազմավորմա՛ն ժամանակաշրջան ու մեր հայրենիքում տասնյակ անհասկանալի ժողովուրդներ, լեզուներ ու քաղաքակրթություններ հնարեն... Ինչ է թե հանկարծ մեզ չասեն **նացիոնալիստ**: Է՛, եղբայր, մեզ համար մի՞շտ է 1937 թվական... Այդ վախը դեռ չե՞նք հաղթահարել... Անցել է արդեն 85 տարի... Գոնե հիմա՛ դույզն-ինչ ինքնավստահություն ձեռք բերենք. գոնե օտա՛ր գիտնականների չափ փառաբանենք մեր հայրենիքը:

Այդ անվստահությունը չէ՞, արդյոք, պատճառը, որ հայը, ինչ երկրում էլ որ հայտնվի, բարվոք կյանք է ապահովում իր համար, թե տաղանդ ունի, դառնում է աշխարհահռչակ, իսկ իր հայրենիքում... Թույլ է տալիս, որ աղանդները գործեն, քրիստոնեության էությունը չըմբռնած օտարները իրեն քրիստոնեություն քարոզեն, աշխարհակալ թագավորությունների շարաններ ունեցած եւ իր հասարակության մեջ երբեւէ սոցիալական ընդգծված հակասություններ չունեցած հային քաղաքացիության դասեր տան կամ ամենաօրինակելի ընտանիքներին փորձեն տոգորել գենդերայի՛ն մտածողությամբ... Ի՛նչ է, մեզ միշտ Ձենով Օհաննե՞ր են պետք, որ թափ տանք մեզ ու մեր գիտակցության վրայից դեն նետենք օտարների փոշին ու մեր անվստահության ժանգը, որ ելնենք **ճգնաժամ** կոչված՝ ոմանց համար երանելի ճահճից եւ մեզ արժանի կյանքով ապրենք: Դրա համար մեզ ո՛չ դրամաշնորհ է պետք, ոչ էլ խորհուրդ. մեզ հերի՛ք է մեր մտքի ու բազկի ուժը: Մեզ միայն վստահությո՛ւնն է պակասում, հավա՛տը սեփական ուժերի հանդեպ...

Չերկարացնենք: Խոսքը որքան պարզ ու հասկանալի խնդրի է վերաբերում, նույնքան էլ կարող է լինել անսպառ: Ընթերցողն ինքը կդնի վերջակետ՝ ինքնավստահ շարժումով ծալելով «**Կրթության**» 2022 թվականի առաջին համարը եւ մտովի ելնելով անվստահության հորից դեպի **վստահ լավատեսություն ու աշխատանք**: Իսկ մենք կշարունակենք *Ձենով Օհանի մեր դերը* այնքան, որքան կկամենա **Աստված**:

***Գ.Մ.***

## ՀՀ վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ



Սիրելի՛ ժողովուրդ,
սիրելի՛ հայրենակիցներ.

Տարեմուտի այս րոպեներին մեր մտքերն ու սրտերն առաջին հերթին հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած մեր եղբայրների ու քույրերի, նրանց ընտանիքների հետ են:

2020 թվականի 44-օրյա պատերազմի ողբերգությունից հետո որդեկորույս բազմաթիվ ընտանիքներում զավակներ են ծնվել. վերածնվում են մարտի դաշտում ընկած մեր նահատակները:

Բառիս բուն իմաստով վերածնվում են, որովհետեւ 2021 թվականի շատ նորածիններ կրում են նահատակ եղբոր անունը, ազգանունը եւ հայրանունը: Միեւնույն անունը, ազգանունը, հայրանունը:

Խորախորհուրդ մի հայտնություն է սա, կյանքի հաղթանակ, առասպելաբանության մարմնավորում. ծնվել է 2001 թվականին, զոհվել է 2020 թվականին, վերածնվել է 2021 թվականին:

***շարունակությունը՝ էջ 2***

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Ամանորի առթիվ



Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս,

Նոր տարվա սեմին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունը, սերն ու բարեմաղթանքներն ենք բերում ամենքիդ:

Ցավով ու դառնություններով լեցուն տարի ապրեցինք: Արցախյան աղետալի պատերազմի հետեւանքները, Հայաստան եւ Արցախ մեր հայրենիքի շուրջ ծավալվող բարդ ու մտահոգիչ գործընթացները, երկրում տիրող դժվարին իրավիճակը զրկել են մեզ առօրյա, ինչպես եւ ամանորյա բնական ուրախությունից:

Այդուհանդերձ, Նոր տարին դիմավորում ենք հույսով ու հավատով, որ վերակերտելու ենք հայրենական մեր կյանքը եւ միասնական կամքով ամեն ջանք ի գործ ենք դնելու՝ հանուն Արցախի մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության:

***շարունակությունը՝ էջ 2***

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Ամանորի առթիվ

*սկիզբը՝ էջ 1*

Մենք Քրիստոսի հարությանը հավատացող ժողովուրդ ենք, դարերի հոլովույթում ցավը, տառապանքն ու մահը մեզ երբեք չեն հաղթել, վեր ենք հառնել Տիրոջ պարգեւած շնորհի զորությամբ, վաղվա օրվա հանդեպ լավատեսությամբ: Հավատում ենք, որ Աստծո ողորմածությամբ եւ մեր ժողովրդի հաստատակամ հանձնառությամբ փրկչական 2022 թվականը կկարողանանք դարձնել ազգօգուտ եւ հայրենաշեն իրագործումների տարի: Հայաստանի զորացման, Արցախի ազատ ու ապահով կյանքի, աշխարհասփյուռ մեր ժողովրդի վերելքի եւ հարատեւության ուղին մեր համախմբումն է ապագայի համընդհանուր տեսլականի շուրջ, ինչպես եւ՝ ազգային ու հոգեւոր արժեքների վրա խարսխված ապրելակերպն ու գործերը: Ամենուր, ի սեր հայրենիքի, վերատեսության ենթարկենք մեր ընթացքը, թոթափենք անհանդուրժողության եւ ատելության չարիքը, հրաժարվենք անպատասխանատու, ազգավնաս խոսքերից ու արարքներից, լինենք բարի, լինենք սիրով, լինենք միասնական, որպեսզի վերստին զգանք Աստծո շնորհաբեր ներկայությունը մեր կյանքում:

Մեր տարածաշրջանի բարդ զարգացումների եւ մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերների հանդիման՝ հզոր հայրենիքի կերտման ձգտումներում չենք կարող հաջողել, եթե նախ չվերականգնենք վստահության մթնոլորտը, չվերահաստատենք մեր ներքին խաղաղությունը: Մեր նահատակ զավակների սրբազան հիշատակի առջեւ խոնարհումով ու երախտագիտությամբ եւ հայրենիքի ու ազգի հանդեպ մեր հերոսների անձնվիրումի ու սիրո օրինակով ամեն կարելին ի գործ դնենք՝ երկրի ու պետության առաջընթացի, համայն մեր ժողովրդի բարօրության համար: Ամուր ու անսասան մնանք համազգային շահով առաջնորդվելու նախանձախնդրության մեջ, եւ Աստված մեզ համար պիտի աճեցնի արդարության պտուղները (հմմտ. Բ Կորնթ. 9.10):

Տարեմուտի նվիրական այս պահին հրավիրում ենք բոլորիդ միասնաբար աղոթելու, որ Բարձրյալ Տիրոջ օրհնությամբ իրականություն դառնան մեր բարի ձգտումները անձնական, ընտանեկան, ազգային ու հայրենական կյանքում: Աղոթենք Հայոց բանակի, հայրենիքի սահմանները հսկող մեր զինվորների համար: Աղոթենք բոլոր նրանց համար, ովքեր իրենց ծառայության մեջ են դիմավորում Ամանորը: Աղոթենք նեղյալների, կարիքավորների, հիվանդների, հաշմանդամ դարձած, գերեվարված եւ անհայտ կորած մեր որդիների եւ նրանց վշտակիր ընտանիքների համար: Աղոթենք Սիրիայում, Լիբանանում եւ Իրաքում դժվարությունների մեջ ապրող մեր զավակների համար, որպեսզի Երկնավոր Տիրոջ զորակցությամբ հաղթահարվեն նրանց առջեւ ծառացած խնդիրները:

Հայցենք խաղաղություն ու անվտանգություն Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին, աշխարհասփյուռ մեր ժողովրդին եւ համայն աշխարհին: Եվ Աստված, որ … մեզ տվեց հավիտենական մխիթարություն եւ բարի հույս, իբրեւ շնորհ, թող մխիթարի եւ հաստատ պահի մեր սրտերը ամեն բարի խոսքի եւ գործի մեջ (հմմտ. Բ Թեսաղ. 2.15-16): Թող Տիրոջ սերը, ողորմությունն ու օրհնությունը միշտ լինեն մեզ հետ եւ ամենքի: Բարի Նոր տարի:

## ՀՀ վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ

*սկիզբը՝ էջ 1*

Ես ուզում եմ նախ գլուխ խոնարհել այն հայրերի ու մայրերի առաջ, ովքեր կայացրել են այսպիսի որոշում, որովհետեւ նրանք ոչ միայն իրենց ընտանիքին, այլեւ մեր հայրենիքին ապրելու, հուսահատությունը հաղթահարելու, ապագային հավատալու եւ հանուն ապագայի ապրելու նոր լիցք են տալիս:

Հենց այս ընթացքով քաջալերված եւ բազմաթիվ ընտանիքների ցանկությունը հաշվի առնելով՝ կառավարությունը 2022 թվականի հունվարից զոհվածների ընտանիքներում վերարտադրողական առողջության վերականգնման պետական ծրագիր է սկսում: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ վերարտադրողական առողջությունը հնարավոր չի լինի լիարժեք վերականգնել, մեր նահատակ զավակների ընտանիքները պետական ֆինանսավորմամբ փոխնակ մայրերի դիմելու հնարավորություն կունենան:

2022 թվականի հունվարի 1-ից մեկնարկում է 3-րդ եւ յուրաքանչյուր հաջորդ նոր ծնվող երեխային պետական աջակցության ծրագիրը, երբ յուրաքանչյուր ընտանիքում, անկախ նրա սոցիալական վիճակից, նոր ծնվող 3-րդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխա մինչեւ վեց տարեկանը կստանա ամսական 50 հազար դրամ պետական աջակցություն:

Այս ամենն ասում եմ՝ ի ցույց դնելու, որ Վերածնունդը պետական քաղաքականություն է, եւ 2022-ի նշանաբանը հենց Վերածնունդը պիտի լինի: Հույս ունեմ, որ մեր բազմաթիվ ընտանիքներում հարազատ, ընկեր, բարեկամ, նույնիսկ ծանոթ ու անծանոթ նահատակների անունները կրող զավակներ կծնվեն 2022-ին:

Նման որոշումներն, իհարկե, կապվում են ոչ միայն ֆինանսական, որքան ավելի շատ սոցիալ-հոգեբանական գործոնների հետ: Նման որոշումները կայացվում են՝ առաջին հերթին ապագային հավատալով, եւ ապագայի նկատմամբ հավատի վերականգնումը, ամրապնդումն ու զարգացումը մեր մեծագույն առաքելությունն է:

Մեր հայրենիքի եւ տարածաշրջանի համար խաղաղ զարգացման դարաշրջան բացելու քաղաքականության հաջողությունն է ապագայի նկատմամբ հավատն ամրապնդելու միջոցը ու որքան էլ գիտակցում ենք, որ դա միայն մեզնից չէ կախված, հետեւողականորեն գնալու ենք այդ ճանապարհով՝ փոխելու համար իրադրությունը եւ մթնոլորտը Հայաստանի Հանրապետության շուրջ եւ մեր ողջ տարածաշրջանում: Անվտանգության ապահովումը մեր այսօրվա մեծագույն մարտահրավերն է եւ փորձը ցույց է տալիս, որ անվտանգության ապահովման ամենահուսալի միջոցը խաղաղությունն է:

Սրան զուգահեռ առանցքային խնդիր է մեր Զինված ուժերի՝ բանակի բարեփոխումը: Հայաստանը պիտի ունենա պրոֆեսիոնալ բանակ, ընդ որում՝ նաեւ կանանց ավելի ու ավելի շատ ներգրավմամբ: Ռազմավարական հեռանկարում ժամկետային զինծառայությունն էականորեն պիտի փոխվի՝ վերակերպվելով մարտական պատրաստականության պարտադիր հավաք-վարժանքների, որոնք կյանքի ընթացքում պիտի տեղի ունենան մի քանի անգամ, որոշակի պարբերականությամբ:

Ուզում եմ ընդգծել, որ քաղաքական առումով մեր բանակը տարածքներ նվաճելու խնդիր չի դնելու իր առաջ, նրա խնդիրը մեր երկրի անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելն է:

Սիրելի՛ ժողովուրդ,

Հենց վերածննդին եւ խաղաղ ապագային են միտված կառավարության բոլոր քայլերը: Տարածաշրջանային կոմունիկացիաների բացումը, սահմանների դելիմիտացիայի եւ դեմարկացիայի գործընթացները, այո բազմաթիվ ռիսկեր են պարունակում, բայց եւ նաեւ բազմաթիվ հնարավորություններ, եւ մեր քաղաքականությունը միտված է ռիսկերը կառավարելուն ու չեզոքացնելուն, իսկ առկա հնարավորությունները՝ օգտագործելուն:

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորումն Արցախի հայության իրավունքների լիարժեք պաշտպանությամբ՝ մեր ռազմավարական նպատակն է:

Մեր կառավարությունը թե՛ պատերազմից առաջ եւ թե դրանից հետո մշտապես եղել է Արցախի կողքին: Միայն 2021 թվականին կառավարությունն ավելի քան 128 միլիարդ դրամի՝ 267 միլիոն դոլարի աջակցություն է ցուցաբերել Արցախին: 2022 թվականի բյուջեով արդեն Արցախին նախատեսում ենք հատկացնել ավելի քան 144 միլիարդ դրամ՝ 300 միլիոն դոլար եւ նաեւ պիտի մտածենք մեխանիզմների մասին, որ այս հատկացումներն ու նրանց օգտագործումը լինի առավել արդյունավետ:

Սիրելի՛ ժողովուրդ,

2021 թվականը դժվար տարի էր, որը սկսվեց պատերազմի արհավիրքների արդյունքում առաջացած սոցիալ-հոգեբանական, քաղաքական ճգնաժամով: Երբեմն թվում էր, թե ետպատերազմական հուզումները կդառնան անկառավարելի, կվերածվեն քաոսի եւ քաղաքացիական բախումների: Բայց ուզում եմ նկատել, որ 2021 թվականը նաեւ Հայաստանի ու հայ ժողովրդի կենսունակության ապացույց դարձավ, որովհետեւ ի զարմանս շատերի, մենք կարողացանք պրոցեսները վերադարձնել լիարժեք քաղաքական հուն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին արտահայտվելու, ազատ կամարտահայտմամբ որոշումներ կայացնելու հնարավորություն ընձեռելով:

2021 թվականին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունները միջազգային մեծ ուշադրության արժանացան, որովհետեւ մինչեւ օրս էլ միջազգային հանրությունն ապշեցուցիչ է համարում, որ նման պայմաններում Հայաստանը կարողացավ ազատ, արդար, ժողովրդավարական ընտրություններ անցկացնել:

Այսօր, այո՛, միջազգային հանրությունը Հայաստանն ընկալում է որպես ժողովրդավարության առաջատար ուժ, եւ սա մի ձեռքբերում է, որը մենք չպետք է կորցնենք: Մեր խնդիրն է՝ ժողովրդավարությունը, ժողովրդավարական համարումը դարձնել իրական գործոն՝ մեր երկրի անվտանգության, բարեկեցության, զարգացման համար: Ժողովրդավարությունը պիտի դառնա վերածննդի ու ապագայի շարժիչ ուժը: Ժողովրդավարությանն ու ժողովրդավարական արժեքներին Հայաստանն իր նվիրվածությունը եւս մեկ անգամ ի ցույց դրեց 2021 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:

Եվ, այո՛, ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը պետք է անձեռնմխելի լինեն մեր երկրում, մարդու ազատ ապրելու, ստեղծագործելու, աշխատելու եւ արդյունք ստեղծելու հնարավորությունները պետք է աջակցություն ունենան եւ խթանվեն:

Այս առումով, մեզ համար սկզբունքային նշանակություն ունեն այն բարեփոխումները, որ իրականացնում ենք կրթության եւ գիտության ոլորտում, որովհետեւ հնարավորությունն այդպես էլ կմնա հնարավորություն, եթե մենք մեր քաղաքացուն դրանից օգտվելու հմտություն չհաղորդենք: Իսկ սա հնարավոր է անել միայն կրթության, գիտության եւ տեխնոլոգիաների զարգացմամբ: 2021 թվականին հաջողությամբ մեկնարկել է ուսուցիչների կամավոր ատեստավորման ծրագիրը, որի արդյունքներով բազմաթիվ ուսուցիչների աշխատավարձեր արդեն իսկ բարձրացել են 30-ից 50 տոկոսով: Կամավոր ատեստավորման գործընթացը շարունակվելու է 2022 թվականին եւ այդպիսով ոչ միայն ուսուցչի աշխատանքի գրավչությունն ենք բարձրացնում, այլեւ երաշխիքներ ենք ստեղծում, որ դասասենյակ մտնեն միայն պատշաճ որակավորում ունեցող ուսուցիչներ, որոնց գործունեության արդյունքում մեր երեխաներն ու սերունդները կլինեն առավել մրցունակ:

Արդեն իսկ մեկնարկել է 300 դպրոց եւ 500 մանկապարտեզ կառուցելու, վերակառուցելու կամ հիմնանորոգելու մեր ծրագիրը: 2022 թվականին գործընթացի մեջ գտնվող ավելի քան 100 դպրոց կունենանք, առնվազն 100 մանկապարտեզ: Որոշակի վերափոխումների ենք ենթարկում համայնքներին տրվող սուբվենցիոն ծրագրերի բանաձեւերը՝ համայնքների համար մանկապարտեզներ կառուցելու հնարավորությունն ավելի ընդլայնելու համար:

2022 թվականի պետական բյուջեով ավելի քան 80 տոկոսով ավելացրել ենք գիտության ֆինանսավորումը: Արդեն հունվարի 1-ից գիտության ոլորտի աշխատողների աշխատավարձերը կավելանան, ուշադրություն դարձրեք, 40-ից 165 տոկոսով՝ բայց սա ամենը չէ, եւ գործընթացը շարունակվելու է մինչեւ 2026 թվականը: Սրանով մենք գիտնականի աշխատանքը գրավիչ ենք դարձնում երիտասարդների համար, բայց նաեւ քաջալերում ենք գիտական հանրությանն ավելի ակտիվ ու մեծ ներդրում ունենալ մեր երկրի զարգացման գործում:

Սիրելի՛ ժողովուրդ,

սիրելի՛ հայրենակիցներ,

Ամանորի այս ուղերձը չեմ ուզում ծանրաբեռնել լրացուցիչ տվյալներով, ոչ էլ քավ լիցի, վարդագույն պատկեր եմ ուզում ստեղծել: Պարզ է, որ պատերազմի ցնցումը չենք հաղթահարել, ու տեւական ժամանակ չենք հաղթահարի: Այս իրավիճակն ահագնանում է COVID-19-ի շարունակվող համավարակով, որի բերած տնտեսական հետեւանքները հիմա արդեն յուրաքանչյուր ոք ավելի է զգում, քան 2020 թվականին: Աննախադեպ գլոբալ գնաճը, որը 2020-21 թվականներին COVID-ի պատճառով ի հայտ եկած սահմանափակումների հետեւանք է, յուրաքանչյուրի տուն է մտել եւ քաղաքացիների մեծամասնությունն այսօր ավելի վատ է ապրում, քան 2020 թվականի մեկնարկին:

Բայց պատերազմի ու COVID-ի հետեւանքներին մեր արձագանքը պիտի լինի մտածումը, աշխատանքը, ջանքը: Մտածումը, աշխատանքը, ջանքը: Հենց այսպիսին պիտի դարձնենք 2022 թվականը, Հայաստանի իրական եւ ռազմավարական վերելքի տարի: Պատերազմի հետեւանքով հայտնվել ենք զրոյական կետում եւ թերեւս ժամանակն է, որ ժամանակն աշխատի մեր օգտին: Ազատ, խաղաղ, վերածնվող եւ վերակառուցվող Հայաստանի ու Արցախի կենա՛ցը բարձրացրեք:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

Տարեվերջյան ասուլիս

# Վահրամ Դումանյանն ամփոփել է տարին

## Արժեքների պահպանություն, սպորտային նվաճումներ, նոր չափորոշիչ, բուհական ճգնաժամի դիմակայում

Տարեվերջին հաշվետու ասուլիսով հանդես է եկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը**՝ ամփոփելով 2021 թվականի ընթացքում կատարված աշխատանքները:

Ասուլիսի սկզբում Վահրամ Դումանյանը լրագրողներին է ներկայացրել նորանշանակ փոխնախարար **Ալֆրեդ Քոչարյանին,** ով ԿԳՄՍՆ՝ մշակույթի գծով երկրորդ փոխնախարարն է եւ համակարգելու է պատմամշակութային ժառանգության եւ թանգարանների ոլորտը:

### Հանրակրթության կարեւոր ձեռքբերումը նոր չափորոշչի փորձարկումն էր

2021 թվականին կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում իրականացված ամենակարեւոր աշխատանքներից նախարար Վահրամ Դումանյանն առանձնացրել է հանրակրթության ոլորտում տեղի ունեցած բարեփոխման գործընթացները՝ Հանրակրթության նոր չափորոշչի ընդունումն ու փորձարկումը Տավուշի մարզի դպրոցներում, *«Հանրակրթության մասին»* նոր օրենքի նախագծի մշակումը, որն արդեն առաջին ընթերցմամբ ընդունվել է խորհրդարանում, ինչպես նաեւ ուսուցիչների կամավոր ատեստավորման համակարգի փորձարկումը, որը հնարավորություն է տալիս բարձրացնելու ուսուցիչների աշխատավարձը՝ այն փոխկապակցելով մասնագիտական կատարելագործման հետ:

### Հաջողվեց խուսափել բուհական համակարգի ճգնաժամից

Վահրամ Դումանյանի գնահատմամբ՝ բարձրագույն կրթության ոլորտում կարեւորագույն ձեռքբերումը բուհական համակարգում առաջացած ճգնաժամի հաղթահարումն էր:

*«Մենք հայտնվել էինք մի վիճակում, երբ պետական բուհերն արդեն երկար ժամանակ չունեին կառավարման մարմիններ, որովհետեւ հոգաբարձուների խորհուրդները ձեւավորված չէին, եւ կար վտանգ, որ բուհերի բնականոն գործունեությունը կարող է խաթարվել: Այդ խնդիրը հատկապես շատ սուր էր արտահայտված ԵՊՀ-ում: Մեզ հաջողվեց գործող օրենսդրության շրջանակում ընդունել բուհերի կառավարման խորհուրդների ձեւավորման նոր կարգ, որը բավականին բարդ աշխատանքային գործընթաց էր: Այնուամենայնիվ, մեզ հաջողվեց այս խնդիրը լուծել. բոլոր պետական բուհերում այսօր արդեն ձեւավորված են խորհուրդներ, եւ բուհերն այսօր կարողանում են բնականոն աշխատել՝ կատարելով իրենց վերապահված գործառույթները»,-* նշել է նախարարը:

### Գիտության ֆինանսավորումն ավելացել է 85 տոկոսով

Վահրամ Դումանյանը լրջագույն եւ անհապաղ է որակել գիտության ոլորտում արված փոփոխությունները՝ ընդգծելով, որ գիտության բյուջեն ավելացվել է շուրջ 85 տոկոսով. *«Մեր այն գիտնականների աշխատավարձերը, որոնք արդյունավետ են աշխատում, գիտական արդյունք են ստանում, մինչեւ երեք անգամ կարող են բարձրանալ. Գիտության կոմիտեն մշակել է այդ մոտեցումները: Մեր գիտնականները պետք է մոտիվացվեն այդ ֆինանսավորման միջոցով, որպեսզի գիտական կոլեկտիվները նվիրված զբաղվեն գիտությամբ»:*

Օրինակ՝ առաջատար գիտաշխատողը 2022 թվականին կստանա շուրջ 250 000, 2025-ին՝ 444 000 ՀՀ դրամ աշխատավարձ, իսկ գիտական ստորաբաժանման ղեկավարը՝ 2022-ին՝ 350 000, 2025-ին՝ շուրջ 477 000 ՀՀ դրամ աշխատավարձ:

### *«Հորիզոն Եվրոպա»* ծրագիր եւ հայագիտության աջակցություն

Միջազգային համագործակցության եւ սփյուռքի ոլորտի աշխատանքներից Վահրամ Դումանյանը կարեւորել է *«Հորիզոն Եվրոպա»* հետազոտությունների եւ նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության համաձայնագրի վավերացումը: Նա նաեւ նշել է, որ օտարերկրյա համալսարաններում հայոց լեզվի դասավանդման, հայոց մշակույթի հանրահռչակման, ինչպես նաեւ հայագիտության զարգացմանը միտված ծրագիրն այժմ իրականացվում է 9 երկրի 11 համալսարաններում: Նշված հայագիտական կենտրոնները ստանում են աջակցություն ՀՀ պետական բյուջեից:

### Մշակույթի ոլորտում կարեւոր է մշակութային արժեքների պահպանությունը

Մշակույթի ոլորտում նախարար Դումանյանը կարեւորել է պատմամշակութային արժեքների պահպանությունը: 2021 թվականին տրվել են պեղումների ավելի քան 50 թույլտվություններ, այդ թվում՝ Արտաշատ եւ Դվին պատմական մայրաքաղաքների, Սանահինի, Բարձրաքաշի, Սրվեղի վանքի, Դաշտադեմի ամրոցի, Տավուշի բերդի ամրակայման համար անհրաժեշտ հատվածների փրկարարական պեղումների թույլտվություններ:

Նրա խոսքով՝ Կառավարության որոշմամբ ստեղծվել են *«Դաշտադեմ ամրոց»* եւ *«Մայրաքաղաք Դվին»* պատմամշակութային արգելոցները, Կառավարությունը 168 մլն դրամ գումար է հատկացրել Սոս Սարգսյանի անվան *«Համազգային»* թատրոնի բեմի արդիականացման եւ տեխնիկական հագեցվածության համար:

### Կրթամշակութային ծրագրեր

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ իրականացվել են մի շարք կրթամշակութային ծրագրեր՝ *«Դասարան+Դասական»*, *«Քո արվեստը՝ դպրոցում»*, Երեւանի եւ մարզերի երաժշտական, արվեստի եւ գեղարվեստի դպրոցների փոխգործակցության՝ *«Քույր դպրոցներ»* կրթական նպատակային, *«Զարդագիր»*, տաղանդի զարգացման *«Մեկնարկ»* նպատակային, *«Թիկունքը՝ մշակույթ, սահմանը՝ կենտրոն»* ծրագրերը, *«Արվեստասերունդ»* նախագիծը:

### Մեդալներ, նոր մարզադպրոցի կառուցում. սպորտի ձեռքբերումները

Սպորտի ոլորտի կարեւոր ձեռքբերումն օլիմպիական խաղերի, Եվրոպայի եւ աշխարհի առաջնությունների ժամանակ մեր հավաքականների անդամների նվաճումներն էին. 2021 թվականին ՀՀ մարզիկները հիշյալ մրցաշարերում ստացել են 199 մեդալ, որից 55-ը՝ ոսկե, 57-ը՝ արծաթե, 87-ը՝ բրոնզե:

Վահրամ Դումանյանն առանձնացրել է նաեւ Գյումրիում Արթուր Ալեքսանյանի անվան մարզահամալիրի կառուցումը, որը լինելու է աննախադեպ կառույց՝ ժամանակակից մարզագույքով եւ պայմաններով հագեցած: Սկսվել են Սիմոն Մարտիրոսյանի անվան մարզադպրոցի շինարարական աշխատանքները: Ըստ նախարարի՝ 2021 թվականին շեշտակի ավելացումներ են արվել Կառավարության կողմից՝ մարզիկների նպաստների եւ աշխատավարձերի համար: Նախկին 157 մլն դրամի փոխարեն Կառավարությունը 2021 թվականին այդ նպատակով հատկացրել է 652 մլն դրամ:

### Խնդիրներ, որոնք լուծում են պահանջում

Անդրադառնալով հարցին, թե ԿԳՄՍ նախարարությանն ինչ չի հաջողվում անել, Վահրամ Դումանյանը հումորով նկատել է. *«Մեզ չի հաջողվում ավելացնել ժամանակը, որպեսզի ավելի շատ կարողանանք աշխատել ոլորտների բազմապիսի խնդիրների կարգավորման ուղղությամբ: Նախարարությունը ողջ թիմով աշխատում է մեծ նվիրումով: Պարզապես՝ պետական համակարգն ունի որոշակի կանոնակարգեր, որոնք ֆորմալ առումով ժամանակ են պահանջում, եւ այդ պատճառով խնդիրների լուծումները չեն ստացվում այն արագությամբ, ինչը կուզեինք»:*

Դեռեւս չի հաջողվել, սակայն առաջիկայում կարեւոր անելիքների շարքում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության գրավչության բարձրացումը:

*«Տնտեսության համար շատ կարեւոր է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթությունը, որը պետք է առաջնային պահանջարկ ունեցող պրակտիկ եւ մրցունակ մասնագետներ ապահովի աշխատաշուկային: Այստեղ պետք է որոշակի նոր մեխանիզմներ ներդնենք, որպեսզի ոլորտը երիտասարդների համար դառնա հրապուրիչ»,-* նշել է Վահրամ Դումանյանը՝ ավելացնելով, որ այս ուղղությամբ 2022 թվականին աշխատանքներ են նախանշվում:

### Միասնական քննությունների առաջարկը ներկայացրել են բուհերը

Անդրադառնալով լրագրողի՝ մասնավորապես որոշ մասնագիտությունների համար հայերենը կամընտրական միասնական քննություն դարձնելու վերաբերյալ հարցին՝ նախարարը նշել է, որ ԿԳՄՍ նախարարությունը սահմանել է պահանջ, որ դիմորդները բուհ ընդունվելու համար պետք է հանձնեն երկու միասնական քննություն, նաեւ խնդիր է դրվել, որ նույն մասնագիտությամբ եւ կրթական ծրագրով կրթություն կազմակերպելու դեպքում մուտքային պահանջները պետք է նույնը լինեն: Բուհերն իրենք են առաջարկել, թե որ մասնագիտության համար ինչ քննություններ պետք է լինեն: Կան մասնագիտություններ, որոնց դեպքում նշվում են կամընտրական առարկաներ, օրինակ՝ հայերեն կամ օտար լեզու, անգլերեն կամ ֆիզիկա: Նախարարի համոզմամբ՝ բուհերը կարող են ավելի կոնկրետացնել խնդիրը եւ հստակ ամրագրել, թե որ մասնագիտության համար ինչ քննություն պետք է սահմանվի՝ բացառելով ընտրելու հնարավորությունը:

Նախարարը նաեւ ավելացրել, է, որ *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* նոր օրենքի ընդունումից հետո հայերենը կդառնա պարտադիր միասնական քննություն ՀՀ-ում գործող բոլոր բուհերի ցանկացած մասնագիտությամբ դիմորդների համար:

### Հարցեր՝ ռեկտորի ընտրության եւ այլ խնդիրների վերաբերյալ

Վահրամ Դումանյանի տեղեկացմամբ՝ վերստին շրջանառության մեջ դրված *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* օրենքի նախագծում Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչված դրույթները խմբագրվել են: Խմբագրված տարբերակում, ըստ նախարարի, բուհերի կառավարման խորհուրդները պետք է ձեւավորվեն բուհական համայնքի (պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողության), հիմնադրի, որը պետական բուհերի դեպքում Կառավարությունն է, եւ կրթության լիազոր մարմնի ներկայացուցիչների կողմից հավասար՝ 50/50 հարաբերակցությամբ: Խորհուրդները կազմված կլինեն 12-ական անդամից: Ռեկտորի ընտրության համար սահմանվում է նոր մեխանիզմ. հիսուն տոկոս գումարած մեկ եւ ավելի կողմ ձայն ստացած բոլոր թեկնածուներից մեկը կնշանակվի ռեկտոր՝ լիազոր մարմնի ղեկավարի կողմից: Խորհրդի անդամներն իրավունք կունենան կողմ քվեարկելու մեկից ավելի թեկնածուների օգտին, սակայն եթե խորհրդի անդամների կողմից հիսուն եւ ավելի տոկոս ձայն է տրվում միայն մեկ թեկնածուի, ապա հենց նա է ընտրվում ռեկտոր:

Նախարարը պատասխանել է նաեւ լրագրողների՝ բուհերի քաղաքականացվածության, ընդունելության քննությունների կազմակերպման նոր մոդելի, մշակույթի ոլորտում նախանշված նոր ծրագրերի վերաբերյալ հարցերին:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

## ՀՀ նախագահի Արմեն ՍԱՐԳՍՅԱՆԻ շնորհավորանքը՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առթիվ



Սիրելի՛ հայրենակիցներ,
Ջերմորեն շնորհավորում եմ՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ:

Խաղաղություն ավետող Սուրբ Ծննդյան այս տոնին մենք բարեմաղթանքներ ենք հղում, հույս, հավատ, սեր փոխանցում միմյանց եւ, միաժամանակ, ջերմությամբ եւ աղոթքով հիշում նրանց, ովքեր մեզ հետ չեն:

Այս տոնը մեզ վերստին հորդորում է օգնել ու սատարել, հարգել եւ սրտացավ լինել միմյանց հանդեպ, Ընտանիքի հանդեպ, Օջախի հանդեպ, Հայրենիքի հանդեպ:

Թող ձեր սրտերն ու տները լցվեն խաղաղությամբ, բարությամբ, ուրախությամբ, հանգստությամբ եւ ջերմությամբ:

Մաղթում եմ բոլորիդ, ձեր ընտանիքներին եւ հարազատներին առողջություն, երջանկություն եւ ամենայն բարիք:

Քրիստոս ծնվեց եւ հայտնվեց:

Ձեզ եւ մեզ մեծ Ավետիս:

## Տոնական միջոցառումներ՝ երեխաների համար

Ամանորի եւ Ծննդյան տոների նախաշեմին Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմը տոնական միջոցառումներ է կազմակերպել Սյունիքի եւ Տավուշի մարզերի 16 սահմանամերձ բնակավայրերի երեխաների համար:

Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի նախաձեռնությամբ՝ սահմանամերձ բնակավայրերի փոքրիկները տոների նախօրյակին ավանդաբար հյուրընկալվում են նախագահական նստվայրում: Այս անգամ փոքրիկների համար ամանորյա տոնական միջոցառումները կազմակերպվել էին տեղերում՝ հնարավորություն ընձեռելով գյուղերի բոլոր փոքրիկ բնակիչներին դիտելու ու նաեւ՝ մասնակից լինելու ներկայացումներին: Ձմեռ Պապի եւ հեքիաթների այլ հերոսների մասնակցությամբ ամանորյա շոու-ծրագրերը տոնական տրամադրություն են պարգեւել երեխաներին: Նախագահի աշխատակազմի կողմից նշված բնակավայրերի երեխաներին նաեւ նվերփաթեթներ են տրամադրվել:

# Հայրապետական Սուրբ Պատարագ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում

Հունվարի 6-ին մեր Տիրոջ՝ **Հիսուս Քրիստոսի** *Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության* տոնի առիթով **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Պատարագ մատուցեց Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Հայրապետական խաչվառազարդ թափորը *«Խորհուրդ խորին»* շարականի հանդիսավոր երգեցողության ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսին Սուրբ Տրդատի մատուռից առաջնորդեց դեպի խորան:

Սուրբ Պատարագին որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ եւ վանական խորհրդի ատենապետ Գերաշնորհ **Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանն** ու ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան եւ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ **Գերաշնորհ Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:**

Սուրբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը *«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»* հրեշտակաբարբառ ավետիսով ողջունեց աշխարհասփյուռ հայությանը եւ տոնի առիթով հղեց իր պատգամը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատգամը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով

***Յանուն Հօր եւ Որդւոյ
եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:***

*«Փառք ի բարձունս մեծիդ Աստուծոյ,
որ եկիր եւ փրկեցեր զտիեզերս Քոյով
յայտնութեամբ»*
(Շարական Սուրբ Ծննդյան):

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնին *«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»* երկնածայն ավետիսով Մեր սերն ու բարեմաղթանքներն ենք բերում ձեզ՝ եկեղեցում համախմբված բարեպաշտ հավատացյալներիդ, համայն մեր ժողովրդին եւ Աստվածորդու առջեւ խոնարհված հովիվների ու հրեշտակների հետ օրհնաբանում մարմնացյալ Փրկչին՝ ասելով. *«Փառք բարձունքներում մեծդ Աստծուն, որ եկար եւ Քո հայտնությամբ փրկեցիր տիեզերքը»:*

Քրիստոսի Սուրբ Ծննդյան հրաշազարդ խորհրդով այսօր փրկության հույսն ու շնորհն է վերստին իջնում արհավիրքներից ու աղետներից խռովահույզ աշխարհի վրա: Բեթղեհեմյան աստղի պայծառ շողարձակումով, Մանուկ Հիսուսի Ծննդյան շնորհով Բեթղեհեմ դարձած հոգիներից ցրվում է անհուսության խավարը: Աստված Իր Միածին Որդու հայտնությամբ հրավեր է ուղղում ողջ մարդկությանը՝ իրենց սրտերը դարձնելու աստվածային անսահման սիրո հայտնության վկայարան, մեղքերից սրբվելու, վերափոխվելու եւ նորոգության միջոցով փրկվելու: *«Հեռո՛ւ վանեցեք ձեզնից հին մարդուն իր նախկին կենցաղով, այն, որ ապականված է խաբեպատիր ցանկություններով. նորոգվեցե՛ք ձեր մտքով եւ հոգով ու հագե՛ք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծու՝ արդարությամբ եւ ճշմարիտ սրբությամբ»*,- հորդորում է առաքյալը (Եփ. 4.22-24):

Մարդու նորոգության ու փրկության ուղին Աստծո պատվիրաններով ապրելն է, մեղքի կապանքներից ազատագրումը, ինչը հաստատուն երաշխիքն է մարդկության հարատեւության եւ գրավականը հավիտենական երանության: Փրկիչ մեր Տերը, որպես Աստծո առ մարդն ունեցած անսահման սիրո եւ հոգատարության առհավատչյա, հավաստում է, որ աշխարհը կարող է վերափոխվել, տառապանքի ու անարդարության իրականությունը կարող է վերածվել երանության վայրի՝ ըստ Եսայի մարգարեի վկայության. *«Դժվարին տեղերը պիտի դյուրին դառնան եւ առապարները՝ դաշտեր: Պիտի հայտնվի Տիրոջ փառքը, եւ ամեն մի մարմնավոր պիտի տեսնի Աստծու փրկությունը»* (Եսայի 40.4-5):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Սուրբ Ծննդյան հրեշտակածայն ավետիսը այս օրերին՝ աղետալի պատերազմի կորուստների ցավով մորմոքվող, բեկված ու տագնապած, անորոշություններով անհանգիստ մեր սրտերին մխիթարություն ու սփոփանք է բերում, որ Տիրոջ փրկարար շնորհներով զորանանք, հավատով փոխակերպվենք եւ հույսով հաղթանակենք: Այսպիսի ոգով ու ընթացքով, անտարակույս, պիտի կարողանանք հաղթահարել պատուհասներն ու նեղությունները եւ հզորանալ որպես ժողովուրդ ու պետություն, հայրենիք եւ սփյուռք: Մեր հայրերը մեզ ուսուցանել են, որ աննկուն լինենք աղետների ու փորձանքների դեմ, թույլ չտանք, որ մեզ պարտության մատնեն հոգսերն ու կարիքները, հայրենիքի ապագայի հանդեպ տագնապները: Թե՛ հայրենիքում եւ թե աշխարհասփյուռ մեր համայնքներում լինենք միաբան ու միասնական: Մեր անմիաբանությունն ու անհամերաշխությունը ծնունդ են տալու նոր կորուստների՝ ոտնակոխ անելով մեր մեծ ու փոքր հաղթանակները: Ներկայիս բարդ իրադրության մեջ հարկ է, որ սթափվենք, մերժենք Աստծուց մեզ հեռացնող ընթացքները եւ մեր կյանքն ամրորեն խարսխենք դարերի փորձություն անցած, մեր ժողովրդի հարատեւությունը երաշխավորած ազգային եւ հոգեւոր արժեքների վրա: Ամենքս սրբազան պարտք ունենք հայրենիքի համար նահատակության պսակն ընդունած մեր զավակների հիշատակի առջեւ՝ անձնուրաց ջանքեր ներդնելու հանուն հայրենի մեր երկրի, հանուն Արցախի ազատ կյանքի, հանուն հայոց պետականության անսասանության ու ազգային մեր ինքնության անխաթար պահպանության: Միշտ հիշենք՝ հայրենիքի շահը վեր է ամենից, մեր ժողովրդի ազատ ու ապահով կյանքը՝ առաջնահերթություն: Հզոր ու շեն հայրենիքի տեսլականի իրագործումը պահանջում է հանձնառության եւ անձնազոհության ոգի ու գիտակցություն, ազնիվ ու արդար գործելակերպ եւ հոգեւոր, բարոյական արժեքների վրա հիմնված կենսակերպ: Այդ առաքելությունը հնարավոր է իրականություն դարձնել մեր Տիրոջ լուսավոր օրինակով, ով, ըստ Իր խոսքի, չեկավ պաշտոն, ծառայություն եւ պատիվ ընդունելու, այլ ծառայելու (Մատթ. 20.28): Ամեն մի պաշտոն եւ իշխանություն հասարակական, քաղաքական կամ պետական ոլորտում պետք է ծառայի երկրի առաջընթացին, ընդհանուրի բարեկեցությանն ու ապահովությանը, ինչպես բարեպաշտ ընտանիքում: Երբ պաշտոնը դադարում է սպասավորություն ընկալվելուց, դառնում է պատճառ կամայականությունների, չար ու անարդար գործերի: Մինչ ազգաշահ ու հայրենանվեր բարի գործերով, միմյանց հանդեպ հոգածություն, սեր ու խնամք ցուցաբերելով է, որ ուժ ու զորություն կունենանք նեղություններն ու դժվարությունները հաղթահարելու, երկիր շենացնելու: Փրկչի Սուրբ Ծննդյան խորհրդով նորոգված կյանքով, հավատում ենք, կարող պիտի լինենք կերտելու նոր իրականություն, որտեղ գերակա կլինեն փոխհասկացողությունն ու համերաշխությունը, ուղղամտությունն ու հայրենանվիրումը. նոր իրականություն, որտեղ յուրաքանչյուր հանձնառություն միտված կլինի մեր ժողովրդի իղձերի ու ձգտումների իրագործմանը: Այս տեսլականով եւ Քրիստոսի պարգեւած փրկության շնորհով, սիրելի հավատացյալներ, վերափոխենք մեր կյանքի ընթացքը եւ միշտ քայլենք վերելքի ու սիրո կենարար ճանապարհով:

Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության այս հոգեպարար օրը աղոթենք միասին, որ Բարձրյալն Աստված օրհնի, խաղաղ պահի ու պահպանի հայրենի մեր երկիրը եւ աշխարհը համայն: Աղոթենք, որ մեր հայրենիքը դառնա մսուր աստվածային ներկայության, եւ մեր ժողովրդի զավակների հոգիները զորանան հավատով ու լավատեսությամբ: Թող Տերը Իր ամենախնամ Սուրբ Աջի օգնականությամբ մեզ առաջնորդի ընթանալու հավատո բարի գործոց շավիղներով եւ փառաբանելու Իր Սուրբ Անունը այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

**Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս**

Պատարագի սրբազան արարողության ավարտին կատարվեց Ջրօրհնեք, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով եւ Սրբալույս Մյուռոնով օրհնեց ջուրը: Խաչի այս տարվա կնքահայրն է հայ երգիչ, երգահան, ՀՀ վաստակավոր արտիստ **Դավիթ Ամալյանը:**

Ջրօրհնեքի արարողության վերջում Վեհափառ Հայրապետը դարձյալ իր օրհնությունն ու Սուրբ Ծննդյան կենարար ավետիսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:

Տարեվերջյան ասուլիս

# Ժաննա Անդրեասյանն ամփոփել է կրթական տարին

Հանրակրթության ոլորտում 2021 թվականին գլխավոր բովանդակային փոփոխությունը հանրակրթության նոր չափորոշչի հաստատումն ու փորձարկումն է ՀՀ Տավուշի մարզի դպրոցներում: Մեծ տեղ է հատկացվել նաեւ դպրոցաշինության եւ ուսումնական սարքավորումների համալրման ծրագրերին, նոր մոտեցում է ցուցաբերվել մանկավարժների աշխատավարձի բարձրացմանը: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը** ամփոփիչ ասուլիսում ներկայացրել է հանրակրթության, նախադպրոցական, նախնական արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտներում կատարվածի արդյունքները:

## Նախադպրոցական կրթության հասանելիության բարձրացում

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված նախադպրոցական կրթության համակարգում երեխաների առնվազն 85 տոկոս ընդգրկվածության, ինչպես նաեւ բոլոր բնակավայրերում հասանելիության ապահովման նպատակով մի քանի ծրագիր է նախաձեռնվել: 2021-ին առաջին անգամ գործարկվել է մոդուլային մանկապարտեզների ծրագիրը. Կառավարությունը հաստատել է 20 բնակավայրերի ցանկը, որտեղ կառուցվելու են մոդուլային մանկապարտեզներ: Բացի այդ՝ պետական բյուջեի միջոցներով հաստատվել եւ առաջին անգամ 10 բնակավայրերում ներդրվել է նախադպրոցական այլընտրանքային ծառայությունների ծրագիրը: *«Այս ծրագիրը նախատեսված է այն բնակավայրերի համար, որտեղ երեխաների թիվը մեծ չէ, եւ առանձին մանկապարտեզ պահելը ծախսարդյունավետ չէ: Պետությունը այս դեպքում նախադպրոցական ծառայությունների ստեղծման համար բնակավայրերին տրամադրել է դրամաշնորհներ՝ յուրաքանչյուրին՝ շուրջ 7,8 մլն ՀՀ դրամ՝ շինությունների վերանորոգման, կահավորման եւ անհրաժեշտ այլ աշխատանքների իրականացման համար»*,- նշել է փոխնախարարը:

## Ֆինանսավորման նոր կարգ

Նախադպրոցական հաստատություններում պետական բյուջեից մեկ սանի ֆինանսավորման կարգի հաստատումը հնարավորություն է ստեղծում պետական ֆինանսավորում հատկացնելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաեւ սոցիալապես անապահով եւ զինծառայողների ընտանիքների երեխաների նախադպրոցական կրթությանը: Ըստ այդմ՝ արդեն 2022-ի սեպտեմբերից ֆինանսավորում կհատկացվի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ավելի քան 1600 երեխաների համար:

Առաջին անգամ հաստատվել է նախադպրոցական կրթության չափորոշիչը, որի հիման վրա մշակվել եւ հաստատվել են կրթական ծրագրերը, որոնք կփորձարկվեն Երեւանի եւ մարզերի 60 հաստատություններում: Մշակվել են նաեւ մի շարք կարգեր՝ նախադպրոցական հաստատության մանկավարժի ընտրության նոր՝ մրցութային կարգը, տնօրենների վերապատրաստման եւ հավաստագրման կարգը, որի համաձայն՝ արդեն եկող տարվանից նախադպրոցական հաստատությունների տնօրենները կհավաստագրվեն: 2022-ից վերապատրաստումը կդառնա պարբերական, եւ հետագայում կներդրվի նաեւ ատեստավորման համակարգ՝ աշխատավարձի բարձրացման հնարավորությամբ: Սահմանվել է նախադպրոցական հաստատություններում սաների ընդունելության կարգը, որով միասնականացվել է ոլորտի քաղաքականությունը:

## Նախադպրոցական կրթության ներառականություն

Ըստ փոխնախարարի՝ 2020 թվականի մայիսին ընդունված՝ նախադպրոցական կրթության նոր օրենքով սահմանվել է, որ մինչեւ 2023 թվականի ավարտը նախադպրոցական ոլորտը պետք է անցում կատարի համընդհանուր ներառման: Այս նպատակով *«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն»*-ի կողմից մշակվել են «Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող նախադպրոցականների գնահատումե եւ *«Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող նախադպրոցականներին մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում»* թեմաներով վերապատրաստման մոդուլներ: Փոխվել է ՏՄԱԿ-ների ֆինանսավորման կարգը, ըստ որի՝ գալիք տարվանից անհրաժեշտ աջակցություն կստանան նաեւ նախադպրոցական հաստատությունները:

2021 թվականին վերապատրաստվել են տարածքային 20 մանկավարժահոգեբանական կենտրոնի 485 մասնագետ եւ Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական 8 հաստատության 30 մանկավարժներ:

## Նախադպրոցական ծառայությունները կլիցենզավորվեն

*«Նախադպրոցական կրթության մասին»* նոր օրենքով սահմանվել է, որ լիցենզավորման ենթակա են նաեւ նախադպրոցական ծառայությունները, ինչը թույլ կտա կարգավորել ոլորտում գործող եւ այս պահին որեւէ կառույցի կողմից չվերահսկվող, նախադպրոցական տարիքի երեխաներին ուղղված տարբեր ծառայությունները: Այս տրամաբանությամբ՝ համապատասխան փոփոխության է ենթարկվել *«Լիցենզավորման մասին»* օրենքը: Ներկայում ընթացքի մեջ է ենթաօրենսդրական ակտերի մշակումը: Օրենսդրական այս փոփոխությամբ պայմանավորված՝ զուգահեռ ընթանում է նախադպրոցական հաստատությունների լիցենզավորումը: Միայն այս տարի ավելի քան 90 նախադպրոցական հաստատություն է լիցենզավորվել, ինչը ավելի վերահսկելի եւ թափանցիկ է դարձնում ոլորտը:

## Խոշոր կապիտալ ծախսեր դպրոցաշինության ոլորտում

Կապիտալ բնույթի ծախսերը մեծ տեղ ունեն պետական ծրագրերում: Ժաննա Անդրեասյանի տեղեկացմամբ՝ միայն 2021 թվականին ԿԳՄՍՆ բյուջեի տարբեր ծրագրերով կառուցման, հիմնանորոգման, վերանորոգման աշխատանքներում ընդգրկված է եղել շուրջ 88 դպրոց, ավելի քան 30 դպրոցի գույքային հագեցման աշխատանքներ են իրականացվել՝ չհաշված լաբորատոր սարքավորումների եւ գույքի գնման աշխատանքները: Միայն համակարգչային հագեցվածության տեսանկյունից՝ 2020 թվականին *«Կրթության բարելավում»* ծրագրով համակարգչային սարքավորումներ են տրամադրվել ընդհանուր առմամբ ուսումնական 305 հաստատությունների, այդ թվում՝ հեռավար դասընթացներ անցկացնելու նպատակով ուսումնական 101 հաստատություններում տեխնիկապես կահավորվել է մեկական դասասենյակ, ինչպես նաեւ 99 ավագ դպրոցների տրամադրվել է կոնֆերանս տեսախցիկ: Իսկ 2021-ին հանրակրթական ուսումնական 272 հաստատությունների տրամադրվել է մեկական պրոյեկտոր, որոնցից 259-ին՝ նաեւ մեկական դյուրակիր համակարգիչ: Այսպիսով՝ ՀՀ հանրակրթական ուսումնական բոլոր հաստատությունները համալրված են պրոյեկտորով եւ դյուրակիր համակարգիչով: Ինչ վերաբերում է բնագիտական լաբորատորիաներին, ապա 107 ավագ դպրոցների բնագիտական առարկաների գծով տրամադրվել են ընդհանուր առմամբ 335 լաբորատորիաներ: Ներկայում ընթացքի մեջ է Տավուշի մարզի 80 դպրոցների համար լաբորատորիաների մատակարարումը՝ նոր չափորոշիչների փորձարկմանն ու ներդրմանն ընդառաջ: Տարեվերջին կառավարությունը կայացրեց որոշում Կապան խոշորացված համայնքի բնակավայրերի դպրոցներում ստեղծելու ինժեներական 14 լաբորատորիաներ:

## Հանրակրթության նոր չափորոշչի փորձարկում Տավուշում

2021թ. փետրվարին Կառավարությունը հաստատեց հանրակրթության նոր պետական չափորոշիչը, որը հիմնված է կարողունակությունների վրա՝ ամեն կրթական աստիճանի համար սահմանելով հստակ վերջնարդյունքներ: *«Չափորոշչով նախատեսվում է էապես բարձրացնել դպրոցների մանկավարժական ինքնավարությունը, ուսումնական գործընթացը դարձնել առավել երեխայակենտրոն՝ հրաժարվելով անբավարար գնահատման շեմից, միավորային գնահատումը լրացնելով ոչ միավորային եւ ձեւավորող գնահատմամբ, վերանայելով առարկայակենտրոն ուսումնական պլանները՝ ի շահ ամբողջական եւ ինտեգրված ուսուցման: Չափորոշչով սահմանվում է ԲՏԵՄ բնագավառով ուսուցման որակի էական ու շեշտակի աճը, հայագիտական առարկաների արդյունավետության բարձրացումը, լեզուների ուսուցման որակի հաստատման անհրաժեշտությունը, սահմանվում են մեդիագրագիտության, տարածաշրջանային լեզուների ուսուցման եւ այլ առաջնահերթություններ: Պարտադիր են դառնում նախագծային ուսուցումը, մասնագիտական կողմնորոշման ակումբները, առողջ ապրելակերպի խմբակները: Այս մոտեցումների հիման վրա՝ սահմանվել են առարկայական նոր ծրագրերն ու չափորոշիչները, իրականացվել են Տավուշի մարզի 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների ուսուցիչների վերապատրաստումները, մշակվել են ուսումնական նյութերը»*,- տեղեկացրել է Ժաննա Անդրեասյանը: Նա նաեւ ավելացրել է, որ սեպտեմբերից Տավուշի մարզի բոլոր դպրոցներում իրականացվում է փորձարկում, որը մշտադիտարկվում է Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոնի, Այբ հիմնադրամի եւ *«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն»*-ի կողմից:

## Ուսուցիչների մասնագիտական զարգացում եւ աշխատավարձի բարձրացում

Այս տարի փորձարկվել է ուսուցիչների կամավոր ատեստավորման ծրագիրը: Ուսուցչի կամավոր ատեստավորմանը մասնակցելու հայտ ներկայացրած 1372 ուսուցիչներից առարկայական գիտելիքի ստուգմանը մասնակցել են 996 ուսուցիչներ, որը կազմում է դիմած ուսուցիչների 72,6 տոկոսը: Կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների 47,8 տոկոսը, ըստ գիտելիքների ստուգման արդյունքում ստացած միավորների, ստանում են 30-50 տոկոս հավելավճար՝ հոկտեմբեր ամսից սկսած:

*«Մենք քննարկել ենք փորձնական փուլում արձանագրված խնդիրները, որոնք հաշվի կառնվեն գալիք տարվա կամավոր ատեստավորման գործընթացի կազմակերպման ժամանակ»*,- նշել է փոխնախարարը՝ ավելացնելով, որ հաջորդ տարվա կամավոր ատեստավորմանը կմասնակցեն 5-12-րդ դասարանների բոլոր առարկաների ուսուցիչները: Հայտերի ընդունումը կսկսվի 2022 թվականի մայիսից, սեպտեմբերին կլինի գիտելիքի ստուգումը, որի արդյունքներով հոկտեմբերից կտրվեն հավելավճարները:

Տարվա ընթացքում վերսկսվել է նաեւ ուսուցիչների պարտադիր ատեստավորման եւ վերապատրաստման գործընթացը՝ էապես փոխելով մոտեցումը: Մասնավորապես, երաշխավորվել են 48 կազմակերպություն եւ շուրջ 30 դասընթաց: Ուսուցիչները հնարավորություն են ստացել ընտրելու կազմակերպություններից որեւէ մեկը կամ դասընթացների միջոցով ինքնուրույն հավաքելու կրեդիտներ, դիմելու եւ ատեստավորվելու: Ատեստավորման գործընթացում կրճատվել է թղթաբանությունը, ներդրվել են թվայնացման բաղադրիչներ: Ավելի քան 7000 ուսուցիչ վերապատրաստվել է, ներկայում ընթանում են պարտադիր ատեստավորման գործընթացները տարածքային եւ հանրապետական հանձնաժողովների կողմից: Գալիք տարի կատեստավորվեն շուրջ 14000 ուսուցիչներ:

Բրիտանական խորհրդի հետ համագործակցությամբ մշակվել է ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման հայեցակարգ, որով նախատեսվում է հիմք դնել ուսուցչի կարողունակությունների սահմանմանը եւ մասնագիտական զարգացման կարիքների գնահատման հիման վրա տարբերակված մոտեցմանը:

## «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխություն

Ներկայում շրջանառվում է «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությունը, որն ԱԺ-ում ընդունվել է առաջին ընթերցմամբ: Դրանով կվերանայվեն ատեստավորման եւ տարակարգերի մոտեցումները, ուսուցիչների վերապատրաստման քաղաքականությունը՝ ներդնելով մասնագիտական զարգացման եւ ուսուցչի աշխատավարձային քաղաքականության փոխկապակցված մեխանիզմ, իսկ վերապատրաստումները կլինեն ուսուցչի գնահատված կարիքի հիման վրա: Օրենքի վերջնական ընդունումը նախատեսվում է 2022 թվականին, որից հետո կիրականացվեն նաեւ մի շարք կարգերի փոփոխություններ:

*շարունակությունը՝ էջ 7*

Ամփոփումներ

# Վարչապետը պարգեւատրել է տարվա 10 լավագույն մարզիկներին

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** մասնակցել է 2021 թվականի 10 լավագույն մարզիկների պարգեւատրման հանդիսավոր արարողությանը:

Միջոցառմանը ներկա են եղել Վարչապետի աշխատակազմի ղեկավար **Արայիկ Հարությունյանը,** Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը,** նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը,** Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի գլխավոր քարտուղար **Հրաչյա Ռոստոմյանը,** հայկական սպորտի ոլորտի բազմաթիվ ներկայացուցիչներ:

Վարչապետ Փաշինյանը հանդես է եկել ելույթով, որում նշել է.

*«Մարզական հանրության հարգելի ներկայացուցիչներ,*

*Սիրելի՛ մարզիկներ եւ սիրելի՛ մարզիչներ,*

*Նախ, ուզում եմ բոլորիդ շնորհակալություն հայտնել 2021 թվականի ընթացքում ունեցած մրցելույթների եւ առավելեւս՝ հաղթանակների համար:*

*Գիտեք, որ 2021 թվականին առավելեւս մենք բոլորս եւ մեր հանրությունը հաղթանակների կրկնակի ավելի կարիք եւ անհրաժեշտություն ունեինք: Եվ այն սոցիալ-հոգեբանական վիճակում, որ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում 44-օրյա պատերազմից հետո, մարզական ելույթներն առավել կարեւորություն են ստանում, դրանք առավել մեծ նշանակություն են ստանում՝ պետական եւ համազգային: Այս առումով՝ առավելեւս 2021 թվականի մրցելույթները, մրցելույթներին մասնակցությունը եւ այդ մրցելույթներում արձանագրած հաջողությունները կրկնակի գնահատանքի են արժանի:*

*Ընդհանրապես, պիտի ասեմ՝ մեր ռազմավարական ընկալումն այն է, որ սպորտը երկրի բնականոն զարգացման կարեւորագույն շարժիչ ուժն է, եւ խոսքն այստեղ ոչ միայն ինքնին սպորտի զարգացման, այլեւ, ընդհանրապես, երկրի զարգացման մասին է, որովհետեւ մարզական ասպարեզում արձանագրված հաջողությունները բերում են տնտեսական հաջողությունների, բարձրանում է երկրի ճանաչելիությունը: Այսպիսով, բարձրանում է երկրի տնտեսական գրավչությունը, զբոսաշրջային գրավչությունը, գալիս են տնտեսական էֆեկտներ: Մարզական հաջողություններն ընդլայնում են նաեւ երկրի, թույլ տվեք ասել, դիվանագիտական հնարավորությունները, որովհետեւ բարձրացնում են երկրի միջազգային վարկը՝ միջպետական, միջազգային հարաբերություններում ավելի ճանաչելի, ավելի ճկուն դարձնելով, ավելի մեծ հնարավորություններ ստեղծելով:*

*Մեծ սպորտի բնագավառում ունեցած հաջողություններն իրենց հետեւից ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց են մղում զբաղվել սպորտով, ինչն իր հերթին բերում է մի քանի էֆեկտներ երկրի ներսում՝ սկսած հանրության ընդհանուր առողջությունից, որովհետեւ արձանագրենք, որ մեր երկրում պետական բյուջեից 100-ից ավելի միլիարդավոր դրամներ են ծախսվում առողջապահության վրա: Բայց ես ցանկանում եմ ընդգծել, որ այդ փողերի մեծ մասը ծախսվում է մարդկանց բուժելու եւ ոչ թե հիվանդությունը կանխարգելելու վրա: Եվ սպորտն այն ոլորտներից է, որ մեզ կօգնի, որպեսզի նաեւ այս խնդիրը հաղթահարենք:*

*Մենք այսօր լուրջ խնդիր ունենք մեր պատանիների առողջության պահպանման առումով, եւ մեծ սպորտում ձեռք բերած հաջողությունները, մեր անվանի մարզիկները, կարծում եմ, պիտի քաջալերեն նաեւ պատանիներին՝ զբաղվել սպորտով: Այս է նաեւ պատճառը, որ մենք այդպիսի մի քաղաքական գիծ ենք որդեգրել եւ խոստացել ենք դա՝ որ նրանք, ովքեր օլիմպիական չեմպիոնի կոչում կունենան, մենք նրանց անունով մարզադպրոցներ կկառուցենք իրենց ցանկացած բնակավայրում: Սա, ընդ որում, մենք անում ենք ոչ միայն մեր մարզիկներին հարգանքի տուրք մատուցելու համար, այլեւ համոզված ենք, որ այդ կարգի մարզօջախներն ավելի մեծ գրավչություն կունենան, որպեսզի երիտասարդներն այնտեղ հաճախեն եւ զբաղվեն սպորտով, ֆիզկուլտուրայով:*

*Ես ընդամենը կարճ թվարկեցի այն զուգահեռ էֆեկտները, որ բերում է սպորտը, բայց նաեւ ցանկանում եմ վերադառնալ ամենասկզբին. մեծ սպորտում մեր ունեցած հաջողությունները շատ կարեւոր են մեր պետական, ազգային հպարտության համար, մեր պետական, ազգային ուժերի նկատմամբ մեր վստահությունը վերականգնելու, մեծացնելու, զարգացնելու համար:*

*Կրկին ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր մարզիչներին, բոլոր մարզիկներին եւ եւս մեկ անգամ հավաստել, որ սպորտն իսկապես մեզ համար զարգացման ռազմավարական ուղղություն է: Վերջին տարիներին, կարծում եմ, այս բնագավառում Կառավարության արած ծախսերը շատ նկատելի են, չնայած հասկանում ենք, որ դեռ շատ բան կա անելու, եւ համոզված եմ, որ, ըստ իրավիճակի, մենք սպորտի ոլորտի զարգացման կապիտալ ներդրումների ծրագիրը կշարունակենք: Հույս ունենք՝ դա ինչ-որ չափով ավելի ու ավելի շոշափելի ձեւով կօգնի ձեզ բոլորիդ, որպեսզի դուք պատվով ներկայացնեք Հայաստանը միջազգային մրցասպարեզներում, եւ Հայաստանի դրոշը ավելի ու ավելի հաճախ բարձրանա աշխարհի ամենատարբեր անկյուններում, Հայաստանի հիմնը ավելի ու ավելի հաճախ հնչի, եւ «Զվարթնոց» օդանավակայանում ձեզ ավելի ու ավելի մեծ թվով ցնծացող մարդիկ դիմավորեն:*

*Շնորհակալություն եմ հայտնում եւ շնորհավորում եմ 2021 թվականի լավագույնը ճանաչված 10 մարզիկներին»:*

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը պարգեւներ է հանձնել տարվա 10 լավագույն մարզիկներին՝ հունահռոմեական ոճի ըմբիշներ **Արթուր Ալեքսանյանին, Մալխաս Ամոյանին,** ծանրորդներ **Սիմոն Մարտիրոսյանին, Գոռ Մինասյանին, Վարազդատ Լալայանին,** մարմնամարզիկ **Արթուր Դավթյանին,** բռնցքամարտիկներ **Հովհաննես Բաչկովին, Դավիթ Չալոյանին,** ազատ ոճի ըմբիշ **Արսեն Հարությունյանին,** շախմատիստուհի **Էլինա Դանիելյանին:** Շախմատի Եվրոպայի անհատական առաջնության չեմպիոն Էլինա Դանիելյանը, այս օրերին Վարշավայում անցկացվող արագ եւ կայծակնային շախմատի աշխարհի առաջնությանը մասնակցելով պայմանավորված, ներկա չէր միջոցառմանը: Նրա փոխարեն պարգեւատրմանը մասնակցել է Հայաստանի կանանց հավաքականի գլխավոր մարզիչ **Զավեն Անդրիասյանը:**

*«Տարվա 10 լավագույն մարզիկներ»* մրցույթի մրցանակային ֆոնդը 50 մլն դրամ է: Լավագույն տասնյակում ընդգրկված յուրաքանչյուր մարզիկ կստանա 4 մլն դրամ, եւս 1 մլն դրամ կհատկացվի նրանց մարզչական շտաբի անդամներին:

# Ժաննա Անդրեասյանն ամփոփել է կրթական տարին

*սկիզբը՝ էջ 5*

### Կրթության հասանելիություն. մենթոր դպրոցներ

Ուսուցչի բացակայության պատճառով առարկան չուսումնասիրելու խնդրին լուծում տալու նպատակով մի շարք քայլեր են ձեռնարկվել: Մասնավորապես՝ էապես բարելավվել են բարձրլեռնային եւ սահմանամերձ բնակավայրերի ուսուցիչների գործուղման պայմանները, սահմանվել է 30 տոկոս աշխատավարձի հավելավճար: Բարելավվել են նաեւ ուսուցիչների եւ սովորողների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման պայմանները. ծրագրի շահառու են 2115 սովորող, 3791 ուսուցիչ:

Հաշվի առնելով, որ կան հանրակրթական դպրոցներ, որտեղ մասնագետներ չլինելու պատճառով որոշ առարկաներ չեն դասավանդվել, 2021-2022 ուսումնական տարվանից փորձնական կարգով մեկնարկել է մենթոր դպրոցների ծրագիրը: 18 մենթոր դպրոցների համապատասխան առարկաների ուսուցիչները իրենց կցված դպրոցների համար էլեկտրոնային եղանակով (հեռավար) ուսուցում են ապահովում: Ասիական զարգացման բանկի հետ համագործակցությամբ մշակվել է նաեւ հեռավար ուսուցման հարթակ, որը գալիք տարվանից ավելի դյուրին կդարձնի էլեկտրոնային ուսուցման գործընթացը:

Մշակվել եւ հաստատվել է նաեւ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքում կրթական որակյալ ծառայությունների նոր ծրագիրը, որի իրականացման համար կպահանջվի շուրջ 9 մլրդ ՀՀ դրամ: Բանակցություններ են ընթանում Եվրամիության գործընկերների հետ՝ Կապանի կրթական ծրագիրը 2,6 միլիարդ եվրոյի աջակցության ծրագրում ներառելու ուղղությամբ:

### Կենսաբանության միջազգային օլիմպիադան կանցկացվի Հայաստանում

2022 թ. առաջին անգամ Հայաստանը կհյուրընկալի միջազգային առարկայական օլիմպիադա, մասնավորապես՝ նախատեսվում է, որ 2022 թ. հուլիսին կենսաբանության միջազգային օլիմպիադան կանցկացվի Հայաստանում: Ակնկալվում է շուրջ 80 երկրի մասնակցություն:

*«Օլիմպիական շարժումը խրախուսելու համար նախարարությունը վերջին տարիներին առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի հաղթողներին եւ միջազգային օլիմպիադաների մասնակիցներին կրթաթոշակ է տրամադրում, ինչը մեծ ոգեւորություն է առաջացնում սովորողների մեջ»*,- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ հավելելով, որ վերջին 3 տարում գրանցվել է 46 մեդալ միջազգային օլիմպիադաներից, այդ թվում՝ 19 մեդալ 2021-ին (2 ոսկի, 6 արծաթ,11 բրոնզ), 17 մեդալ՝ 2020-ին:

### Գիտության փառատոն

2021-ին առաջին անգամ կազմակերպվել է համադպրոցական գիտության փառատոնը, որին մասնակցել են Երեւանի եւ 7 մարզերի ուսումնական 21 հաստատությունների 110 աշակերտներ: Ներկայացվել է անհատական եւ խմբային գիտահետազոտական 46 նախագիծ: Առավելագույն միավոր ստացած երկու խմբերը մասնակցեցին ԱՄՆ-ում կայացած Միջազգային գիտատեխնիկական փառատոնին (International Science and Engineering Fair), որտեղ խմբերից մեկը զբաղեցրել է չորրորդ տեղը հարյուրավոր թիմերի շարքում: Փառատոնը կկրի ամենամյա բնույթ, եկող տարի կիրականացվի նաեւ *«Քո գիտությունը դպրոցում»* ծրագիրը:

### Մարզառազմական ճամբար եւ այլ ծրագրեր

Հանրակրթության ոլորտի նորություններից փոխնախարարն առանձնացրել է նաեւ այս տարի առաջին անգամ փորձարկված մարզառազմական ճամբարի ծրագիրը: Շուրջ 100 սովորողների համար 12 օր տեւողությամբ ճամբար է կազմակերպվել, որի ընթացքում 11-րդ դասարանցիները գործնական գիտելիքներ եւ հմտություններ են ստացել *«Նախնական զինվորական պատրաստականություն»* առարկայից: Հանրակրթության նոր չափորոշչով՝ մարզառազմական ճամբարը պարտադիր է լինելու՝ իբրեւ այս առարկայի գործնական բաղադրիչ: Շարունակվել է նաեւ *«Կայուն դպրոցական սնունդ»* ծրագրի իրագործումը ՀՀ մարզային դպրոցների կրտսեր դասարաններում:

### Արհեստագործական ծրագրերով գործազրկությունը՝ ընդամենը 6 տոկոս է կազմում

Արհեստագործական, միջին մասնագիտական կրթության ոլորտում առաջնային է դիտվում տնտեսության գերակա ուղղություններով մասնագիտությունների ծավալի ավելացումը՝ շարունակաբար ներդնելով նոր մասնագիտություններ եւ կրճատելով այն մասնագիտությունների տեղերը, որոնք առավել իներցիոն բնույթ են կրում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի տեղեկացմամբ՝ վերջին 3 տարիների ընթացքում ներդրվել է շուրջ 21 նոր մասնագիտություն, 2022 թվականին նախատեսվում է ներդնել եւս 2-ը: Էական նշանակություն ունի գործող չափորոշիչների վերանայումը, որի շրջանակում վերջին տարիներին ավելի քան 250 չափորոշիչ է վերանայվել:

### Աշխատանքի վրա հիմնված եւ դուալ կրթություն

*«Առանձնահատուկ տեղ է զբաղեցնում աշխատանքի վրա հիմնված ուսուցման եւ դուալ կրթության ծրագրերի իրականացումը: Ներկայում շուրջ 15 հաստատությունում ներդրված է 11 մասնագիտությամբ եւ որակավորմամբ դուալ ուսուցման համակարգ, նախատեսվում է 2022 թ. եւս 3 նոր հաստատությունում 2 կամ 3 նոր մասնագիտությամբ ներդնել նույն ծրագիրը: Ավելի քան 700 ուսանող սովորում է դուալ ուսուցման ծրագրերով: Ընդհանուր առմամբ՝ նախնական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորում են ավելի քան 25000 ուսանողներ, որոնցից շուրջ 7000-ը՝ արհեստագործական ծրագրով, շուրջ 18000-ը՝ միջին մասնագիտական: Ընդ որում, ինչպես փոխնախարարն է նշում, արհեստագործական ծրագրերով գործազրկությունը կազմում է ընդամենը վեց տոկոս, ինչը արդյունավետ ցուցանիշ է»*,- նշել է փոխնախարարը:

### Որակի եւ արդյունավետության բարձրացում

Որակի ապահովման ուղղությամբ կարեւոր է միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացը (վերջին երեք տարիներին 14 հաստատություն է հավատարմագրվել է, 2022 թ.-ին նախատեսվում է եւս 5-ի հավատարմագրումը):

Նպատակ է սահմանված ՄԿՈՒ շրջանավարտների՝ իրենց մասնագիտությամբ զբաղվածության ցուցանիշը հասցնել առնվազն 41%-ի: Ավելի քան 70 կազմակերպությունների հետ կնքվել են համագործակցության հուշագրեր՝ համատեղ աշխատանքներ իրականացնելու նպատակով: Հատուկ ուշադրության է արժանանում գյուղատնտեսական ոլորտի կրթությունը: Շարունակվել են գյուղատնտեսական քոլեջների զարգացման ծրագրերը, մասնավորապես՝ հուշագիր է ստորագրվել ԿԳՄՍ նախարարության եւ Ֆրանսիայի հայկական հիմնադրամի միջեւ, որի արդյունքում՝ Տավուշի տարածաշրջանային քոլեջը կվերածվի ֆրանսիական մոդելով գյուղատնտեսական կրթահամալիրի: Հետագայում նախատեսվում է նույն մոդելը դիտարկել նաեւ Սյունիքի գյուղատնտեսական քոլեջների համար:

### Սոցիալական գործընկերություն

Սոցիալական գործընկերության շրջանակում տարբեր ծրագրեր են իրականացվել *«Մարդը՝ կարիքի մեջ»* կազմակերպության հետ:

*«Կազա»* հիմնադրամի հետ, մասնավորապես՝ արեւային էներգիայի ոլորտում նոր մասնագիտությունների ներդրման նպատակով հուշագիր է ստորագրվել: Կարեւոր համագործակցություն է մեկնարկել *«Ազնավուր»* հիմնադրամի հետ արվեստի ոլորտում կրթության բարեփոխման շուրջ, որը կիրականանա Երեւանի մշակույթի եւ արվեստի քոլեջի անվանափոխության եւ զարգացման միջոցով: Բազմաթիվ են համագործակցության ծրագրերը զբոսաշրջության, խոհարարության ոլորտում, այդ թվում՝ մարզային տարբեր հաստատություններում: Արդյունավետության բարձրացման նպատակով կատարվել են փոփոխություններ իրավական մի շարք ակտերում:

### 2022 թվականին առաջնահերթության կարգով կնորոգվի եւ կվերակառուցվի ՄԿՈՒ 8-10 հաստատություն

Փոխնախարարի խոսքով՝ կարեւորվում է ՄԿՈՒ հաստատությունների շենքային պայմանների բարելավումը: 2020 թվականին ՄԿՈՒ երկու հաստատության վերակառուցման եւ վերանորոգման համար հատկացվել է 235 մլն ՀՀ դրամ, 2021-ին՝ 271 մլն ՀՀ դրամ. այս միջոցների շրջանակում վերակառուցման աշխատանքներն ավարտվել են Վանաձորի արվեստի պետական քոլեջում: 2022 թվականին նախատեսված է արդեն շուրջ 1,17 մլրդ ՀՀ դրամ, որով կավարտվեն Վանաձորի գյուղատնտեսական քոլեջի վերակառուցման աշխատանքները, կսկսվեն եւս մեկ գյուղատնտեսական քոլեջի վերակառուցման աշխատանքներ, 2 հաստատության համար կկազմվեն նախագծանախահաշվային փաստաթղթեր: 2022 թ. բյուջեով նախատեսված է առաջնահերթության կարգով եւս 8-10 հաստատության հիմնանորոգման եւ վերակառուցման համար շուրջ 4 մլրդ ՀՀ դրամի հատկացում: 2022թ. բյուջեում նախատեսվել է ամբողջությամբ վերակառուցվող Վանաձորի գյուղատնտեսական քոլեջի՝ գույքով եւ մասնագիտական սարքավորումներով հագեցում: Միաժամանակ, իրականացվում են նաեւ քոլեջների եւ ուսումնարանների ջեռուցման համակարգերի ընթացիկ հրատապ վերանորոգման աշխատանքները:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

# Ուսման հրավեր

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը 2022-2023 ուստարվա համար հայտարարում է մրցույթ՝ **Չինաստանի Ժողովրդական Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում բարձրագույն եւ հետբուհական կրթություն ստանալու նպատակով (22 կրթաթոշակային տեղ՝ 11 բակալավրիատ, 8 մագիստրատուրա, 2 ասպիրանտուրա, 1 վերապատրաստում՝ 1 տարով):**

ՉԺՀ բուհերում բակալավրի կրթություն ստանալու համար դիմած թեկնածուները պետք է ստանան չինարենի իմացության քննության 3-րդ մակարդակի (HSK3) վկայական, մագիստրատուրայի եւ դոկտորանտուրայի թեկնածուները՝ 4-րդ մակարդակի (HSK4) վկայական՝ լեզուն սովորելու համար հատկացված մեկ տարում: Կրթաթոշակի թեկնածուներին անհրաժեշտ է ուսումնասիրել ՉԺՀ կոնկրետ ԲՈՒՀ-երի պահանջները, ընտրել մասնագիտությունը, նախօրոք կապվել տվյալ ԲՈՒՀ-երի հետ՝ նախնական նամակ-հրավերի ստացման նպատակով:

Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների եւ բուհերի շրջանավարտները, ավարտական դասարանում կամ կուրսում սովորող ուսանողները, թեկնածուական եւ գիտահետազոտական աշխատություններ կատարող օտար լեզուներին տիրապետող գիտնականները, վերջին 2 տարվա ընթացքում չինարեն լեզու, մշակույթ եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մասնագիտական գործունեություն ծավալող ՀՀ քաղաքացիները:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել միայն մեկ մասնագիտության եւ մեկ կրթական աստիճանի համար:

**Կրթաթոշակներին հավակնող դիմորդները պետք է ներկայացնեն.**

*1) դիմում եւ դիմում-հարցաթերթիկ՝ մրցույթին մասնակցելու համար, որտեղ պետք է նշվի նախընտրած մասնագիտությունը (ձեւերը կցվում են)*

*2) չինական կողմից ներկայացված հարցաթերթիկ,*

*3) նամակ-հրավեր՝ ՉԺՀ բուհից եւ/կամ ղեկավարից,*

*4) ավարտական փաստաթղթի՝ ատեստատի կամ դիպլոմի եւ դիպլոմի հավելվածի (միջուկի), պատճենները՝ անգլերեն կամ չինարեն լեզվով թարգմանված եւ նոտարական հաստատմամբ,*

*5) ավարտական դասարանում սովորողները՝ առաջադիմության թերթիկ (ակադեմիական տեղեկանք) նոտարի կողմից անգլերեն կամ չինարեն լեզվով թարգմանված եւ նոտարական հաստատմամբ,*

*6) բակալավրի եւ մագիստրոսի ավարտական կուրսերում սովորողները՝ ակադեմիական տեղեկանք ամբողջ ուսումնառության վերաբերյալ՝ նոտարի կողմից անգլերեն կամ չինարեն լեզվով թարգմանված եւ նոտարական հաստատմամբ,*

*7) ինքնակենսագրություն (CV) (անգլերեն),*

*8) 2 երաշխավորական նամակ (անգլերեն կամ չինարեն),*

*9) անձնագրի պատճենը (չինական կողմից ներկայացված պահանջներին համապատասխան),*

*10) բժշկական տեղեկանքներ՝ ըստ ներկայացվող ձեւի ընդհանուր առողջության եւ ՁԻԱՀ/ՄԻԱՎ վերաբերյալ (անգլերեն լեզվով՝ չինական կողմից ներկայացված պահանջներին համապատասխան),*

*11) 3ճ4 չափի 4 գունավոր լուսանկար,*

*12) արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի կամ կցագրման վկայականի պատճենը կամ զորակոչային տեղամասից համապատասխան տեղեկանք:*

*13) Չինական կողմից պահանջվող այլ փաստաթղթեր եւ պայմաններ (ցանկը կցվում է):*

**Ասպիրանտական կրթության համար դիմորդները պետք է ներկայացնեն նաեւ՝**

*1) ռեֆերատ՝ հայերեն լեզվով (10 էջ),*

*2) օտար լեզվի իմացությունը հաստատող վկայական եւ ստուգարքային թերթիկ՝ համակարգչից օգտվելու հմտությունների վերաբերյալ:*

**Վերապատրաստման համար դիմորդները պետք է ներկայացնեն նաեւ՝**

*1) տեղեկանք՝ աշխատանքի վայրից*

*2) օտար լեզվի իմացությունը հաստատող վկայական*

*3) հրավեր ՉԺՀ բուհից:*

***շարունակությունը՝ էջ 8***

## Ուսման իրավեր

*սկիզբը՝ էջ 7*

**Պահանջվող փաստաթղթերի բնօրինակների փաթեթը պետք է ներկայացնել 2 օրինակ պատճենի հետ միասին (1+1):**

Քննությունները կկազմակերպվեն՝ համաձայն ՀՀ կառավարության՝ 2012 թվականի ապրիլի 26-ի N597-Ն որոշմամբ հաստատված՝ *«Հայաստանի Հանրապետության պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի»:*

Մագիստրոսական կրթության համար դիմորդների մրցույթը կկազմակերպվի՝ համաձայն ՀՀ կրթության եւ գիտության նախարարի՝ 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N1193-Ն հրամանով հաստատված *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության եւ ուսուցման կարգի»:*

Հետբուհական կրթություն ստանալու համար մրցույթը կանցկացվի՝ համաձայն ՀՀ կառավարության՝ 2016 թվականի փետրվարի 25-ի N238-Ն որոշմամբ հաստատված՝ *«Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության եւ ուսուցման, դոկտորանտուրայի եւ հայցորդության ձեւակերպման կարգի»*:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ 2022 թվականի հունվարի 17-ը ներառյալ, երկուշաբթի-ուրբաթ օրերին, ժամը 10:00-ից 17:00-ը, ընդմիջում՝ ժամը 13:00-14:00:***

Մրցույթին մասնակցել ցանկացողները փաստաթղթերը կարող են ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի եւ սփյուռքի վարչություն/ արտաքին կապերի բաժին (հասցեն՝ ք. Երեւան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 311 եւ 313 սենյակներ հեռախոս (+37410) 59-96-44, (+37410) 59-96-46):

***Քննությունները տեղի կունենան 2022 թվականի հունվարի 17-ին հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում:***

**Մրցույթը կկազմակերպվի երկու փուլով՝ մասնագիտական քննություն եւ հարցազրույց:**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ այցելելով *www.campuschina.org* կայքէջը:

Մրցույթը հաջողությամբ հաղթահարած թեկնածուների ուսումը կիրականացվի ամբողջությամբ անվճար՝ ՉԺՀ բյուջեի միջոցների հաշվին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի եւ սփյուռքի վարչության արտաքին կապերի բաժին (ք. Երեւան, Վ.Սարգսյան 3, Կառավարական տուն 2, հեռախոս (+37410) 59-96-44, (+37410) 59-96-46)

**Ծանոթություն. Արական սեռի ՀՀ քաղաքացիների՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման տրամադրման հետ կապված հարաբերությունները՝ կարգավորվում են *«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին»* ՀՀ օրենքով եւ *«Գիտության եւ կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը եւ պայմանները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ 2002 թվականի օգոստոսի 29-ի N1394-Ն եւ 2015 թվականի փետրվարի 5-ի N117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ 2000 թվականի հունվարի 13-ի N15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»* ՀՀ կառավարության՝ 2018 թվականի ապրիլի 12-ի N 451 – Ն որոշումով:**

**Միջազգային համաձայնագրերի հիման վրա օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից գործուղված քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում չի տրամադրվում:**

Տարեվերջյան ասուլիս

# Կարեն Թռչունյանն ամփոփել է տարին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում դեկտեմբերի 27-ին հրավիրված համատեղ ասուլիսում նախարարի տեղակալներ **Կարեն Թռչունյանն** ու **Արթուր Մարտիրոսյանը** ներկայացրել են բարձրագույն կրթության, միջազգային համագործակցության, սփյուռքում հայեցի կրթության կազմակերպման եւ երիտասարդության ոլորտներում 2021 թվականին իրականացված աշխատանքները:

### *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* օրենքի նախագիծը վերստին շրջանառվում է

Բարձրագույն կրթության ոլորտը համակարգող նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը կատարված աշխատանքներից առանձնացրել է *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* օրենքի նախագծի վերստին շրջանառումը: Փոխնախարարի տեղեկացմամբ՝ Սահմանադրական դատարանի կողմից կասեցված դրույթները նախագծի նոր տարբերակում խմբագրվել եւ լրամշակվել են: Կարեն Թռչունյանը հույս է հայտնել, որ նախագիծը գարնանը կընդգրկվի ԱԺ նիստերի օրակարգում եւ կընդունվի՝ հաշվի առնելով, որ խորհրդարանը մեկ անգամ արդեն քննարկել եւ հավանություն է տվել օրինագծին:

### Կփոխվի ասպիրանտուրայի ընդունելության կարգը

Կարեն Թռչունյանը տեղեկացրել է, որ նախատեսվում է փոփոխություն կատարել ասպիրանտուրայի ընդունելության կարգում, ըստ որի՝ *«Համակարգչային հմտություններ»* առարկայի քննություն այլեւս չի պահանջվելու: Ասպիրանտուրայի դիմորդները քննություն կհանձնեն միայն օտար լեզվից եւ մասնագիտական առարկայից, քանի որ, ըստ փոխնախարարի, նման քննության կազմակերպումն այսօր ժամանակավրեպ է: Համապատասխան կարգի փոփոխությունը կհաստատվի գալիք տարի:

2023 թվականից դիմորդները տարվա մեջ 2 անգամ ընդունելության քննություն հանձնելու հնարավորություն կստանան

Մյուս կարեւոր փոփոխությամբ՝ բուհերի դիմորդների համար ընդունելության քննություններ կկազմակերպվեն տարվա մեջ երկու անգամ: *«Նպատակահարմար ենք գտել դիմորդներին հնարավորություն տալ տարվա մեջ 2 անգամ հանձնելու միասնական քննություն, որոնցից առաջինը կկազմակերպվի հունվարին, մյուսը, ինչպես այժմ է, կլինի ամռանը՝ հունիսին: Ստուգելով սեփական գիտելիքները՝ նրանք կորոշեն, թե քննական արդյունքներից որը օգտագործեն ընդունելության մրցույթի ժամանակ»*,- տեղեկացրել է Կարեն Թռչունյանը՝ հավելելով, որ ընդունելության մրցույթի ամփոփման ժամկետները չեն փոխվի: Այս նորարությունը կիրառվելու է 2023 թվականից, այսինքն՝ գալիք տարվա դիմորդներին չի վերաբերի: Փոխնախարարի խոսքով՝ նման քայլի գնալով՝ կլուծվի քննությունների սթրեսը հաղթահարելու խնդիրը:

### Արցախյան պատերազմի մասնակիցները ստանում են ուսման վարձի հատուցում

Արցախյան պատերազմի մասնակից ուսանողների եւ նրանց ընտանիքի անդամ համարվող ուսանողների ուսման վարձի փոխհատուցման ծրագիրը շարունակվում է. 2020/2021 ուստարվա եւ 2021/2022 ուստարվա 1-ին կիսամյակի համար պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում է տրամադրվել մարտական գործողությունների մասնակից շուրջ 6330 շահառուի, այդ թվում՝ ուսանող, ամուսին, ծնող, ընդհանուր՝ մոտ 1,4 միլիարդ ՀՀ դրամ: Ծրագիրը կշարունակվի նաեւ 2022 թ. երկրորդ կիսամյակի եւ 2022/2023 ուստարվա առաջին կիսամյակի համար՝ տարածվելով մարտական գործողությունների մասնակից ուսանողների վրա:

### Սոցիալական խմբերում ընդգրկվածները ուսման վարձի փոխհատուցում են ստանում՝ ըստ ՄՈԳ-ի

Կարեւորելով ուսման վարձի փոխհատուցման հասցեականության եւ կրթության որակի փոխկապակցվածությունը՝ ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի՝ 1752-Ն որոշմամբ փոփոխություն է իրականացվել համապատասխան կարգում: Ըստ այդմ՝ 2021/2022 ուստարվա համար պետությունը ուսման վարձի մասնակի փոխհատուցում է հատկացրել սոցիալական տարբեր խմբերի պատկանող 5722 ուսանողների, որից 2299-ը ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ուսանողներ են, 763-ը՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակիչներ, 2209-ը՝ մարտական գործողությունների մասնակիցներ, 52-ը՝ երկու եւ ավելի երեխա ունեցող ուսանողներ, 399-ը՝ ապրիլյան պատերազմի մասնակիցներ: Սոցիալական այս խմբերի ուսման վարձի փոխհատուցման համար հատկացվել է մոտ 1,5 միլիարդ ՀՀ դրամ:

Կարեն Թռչունյանի տեղեկացմամբ՝ վերոնշյալ փոփոխությամբ՝ սոցիալական խմբերում ընդգրկված ուսանողները ուսման վարձի փոխհատուցում են ստանում ըստ միջին որակական գնահատականի (ՄՈԳ), նվազագույն շեմ է սահմանվել ՄՈԳ-ի 60 տոկոսը: *«Ուսման վարձի փոխհատուցման ժամանակ կարեւորում ենք ոչ միայն սոցիալական կարգավիճակը, այլ նաեւ առաջադիմությունը: Որքան լավ կսովորի ուսանողը, այնքան ավելի շատ փոխհատուցում կստանա: Սա պետության հստակ ուղերձն է՝ պետք է լավ սովորել՝ հետագայում լավ մասնագետ դառնալու համար»*,- նշել է Կարեն Թռչունյանը՝ ընդգծելով, որ փոխհատուցման չափը կարող է հասնել մինչեւ ուսման վարձի 90 տոկոսին՝ կախված ՄՈԳ-ից:

Պետության համար գերակա նշանակություն ունեցող մասնագիտությունների համար սահմանված է եկամտահարկից ուսման վարձի փոխհատուցման հնարավորություն, որից կարող են օգտվել աշխատող ուսանողները:

### Մեկ մասնագիտություն, մեկ մոտեցում. միասնական մոտեցում՝ ընդունելության քննություններ

Ըստ մասնագիտությունների՝ հստակեցվել է միասնական քննությունների ցանկը՝ որդեգրելով մեկ մասնագիտություն, մեկ մոտեցում սկզբունքը: Եթե նույն մասնագիտությամբ կրթություն է կազմակերպվում երկու եւ ավելի բուհերում, ապա դիմորդը, անկախ նրանից, թե որ բուհ է դիմում, պետք է հանձնի նույն քննությունները: Այսպիսով՝ սահմանվել են ընդունելության միասնական չափանիշներ, մուտքային պահանջներ, ինչպես նաեւ ամրագրվել է, որ դիմորդը բուհ կընդունվի՝ հանձնելով ընդունելության առնվազն 2 քննություն:

Փոխնախարարի տեղեկացմամբ՝ նախատեսվում է նաեւ 100-ական տեղերով ավելացնել 2022/2023 եւ 2023/2024 ուսումնական տարիների՝ բակալավրի կրթական ծրագրով հատկացվող անվճար տեղերի թիվը, որ կհատկացվի բնագիտատեխնիկական (STEM) ոլորտի մասնագիտություններին:

ՀՀ հետբուհական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2021 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 44-Լ հրամանով հաստատվել է *«ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի (ասպիրանտուրա) բարեփոխումների հայեցակարգը եւ միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»* հրամանը, որի նպատակն է կանոնակարգել հետբուհական կրթության համադրելիությունը Բոլոնիայի պահանջներին եւ Զալցբուրգյան սկզբունքներին, ինչպես նաեւ ապահովել ասպիրանտական (դոկտորական) կրթական ծրագրերի համապատասխանեցումը համաեվրոպական չափանիշներին: Հայեցակարգի ընդունումը հնարավորություն կընձեռի վերանայել ընդունելության պահանջները, գիտական ղեկավարի ընտրության չափանիշները, ասպիրանտի տարեկան ատեստավորման, ատենախոսությունների պաշտպանության վերանայման, մասնագիտական խորհուրդների ձեւավորման նոր մոտեցումները:

Տարվա ընթացքում կազմակերպվել է նաեւ *«Լավագույն ուսանող»* մրցույթը, որի հաղթողները կպարգեւատրվեն արդեն 2022 թվականին:

Տարածաշրջանային լեզուներով կրթության ապահովումը, ըստ Թռչունյանի, կարեւոր խնդիրներից է: Նախատեսվում են վրացագիտության եւ ադրբեջանագիտության մագիստրոսական կրթական ծրագրեր:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

## Տարեվերջյան ասուլիս

# Արթուր Մարտիրոսյանն ամփոփել է տարին

*Միջազգային համագործակցության եւ սփյուռքի հետ կապերի զարգացումը կրթության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում իրականացվել է հայագիտության, սփյուռքի ուսուցիչների կարողությունների բարելավման եւ համահայկական միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:* Հաշվետու ասուլիսում, ներկայացնելով կատարված աշխատանքները, այս մասին նշել է ԿԳՄՍ նախարարի՝ արտաքին կապերի եւ սփյուռքի հետ հարաբերությունների զարգացումը, ռազմավարական պլանավորումը եւ երիտասարդության ոլորտի աշխատանքները համակարգող տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը:**

Տարածաշրջանային միջոցառումներից Արթուր Մարտիրոսյանը առանձնացրել է հոկտեմբերին Երեւանում տեղի ունեցած ԱՊՀ անդամ պետությունների կրթական համաժողովը, որի նախագահությունը 2021 թվականին ստանձնել էր Հայաստանը:

Հայաստանը հյուրընկալել է նաեւ ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհրդի նիստը եւ *«100 գաղափար ԱՊՀ-ի համար»* մրցույթի ամփոփումը, որը տեղի է ունեցել ՀՀ 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք Կապանում:

Գալիք տարվա կարեւոր միջոցառումներից բանախոսն առանձնացրել է 2022 թ.-ի սեպտեմբերին Հայաստանում անցկացվելիք *«STARMUS FESTIVAL VI»* փառատոնը՝ *«50 տարի Մարսի վրա»* խորագրով: Միջոցառումն իրականացվելու է ՀՀ նախագահի եւ վարչապետի բարձր հովանու ներքո: Ակնկալվում է, որ փառատոնին կմասնակցեն առաջատար գիտնականներ, տիեզերագնացներ եւ հանրահռչակ երաժիշտներ եւ արվեստագետներ՝ Հայաստանի համար ստեղծելով համագործակցության նոր հնարավորություններ:

Արթուր Մարտիրոսյանի տեղեկացմամբ՝ այս տարվա մայիսին հաստատվել է *«ՀՀ-ԵՄ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության»* համաձայնագրի (CEPA) ճանապարհային քարտեզը, որտեղ կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության ոլորտները կարեւոր դերակատարություն ունեն: Հաստատվել է նաեւ *«ԱՊՀ ցանցային համալսարանի հիմնադրման եւ գործունեության մասին»* համաձայնագիրը, որը հնարավորություն կտա ընդլայնելու միջբուհական կապերը ԱՊՀ տարածքում:

Անդրադառնալով միջազգային համագործակցության արդյունքներին՝ փոխնախարարը կարեւորել է նոյեմբերի 12-ին Բրյուսելում Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ ստորագրված *«Հորիզոն Եվրոպա»* ծրագրի համաձայնագիրը, որով Հայաստանը դառնում է Եվրոպական միության *«Հորիզոն Եվրոպա»* ծրագրին լիիրավ ասոցացված պետություն: Հայաստանի գիտնականները իրավունք են ստանում օգտվելու Եվրոպական միության ամենամեծ՝ 95,5 մլրդ եվրո, ֆինանսավորում ունեցող գիտական համագործակցության ծրագրի ընձեռած հնարավորություններից: *«Հորիզոն Եվրոպա»* ծրագիրը *«Հորիզոն 2020»* ծրագրի շարունակությունն է:

***շարունակությունը՝ էջ 10***

# Դասախոսական կազմը ծերանում է

Տարեվերջյան ամփոփիչ ասուլիսի ընթացքում ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը ներկայացրել է ՀՀ-ում գործող 16 պետական եւ 4 միջպետական բուհերի տվյալների հիման վրա իրականացված հետազոտության արդյունքները:

Մասնավորապես՝ դիտարկվել է 2013-2020 թվականներին բուհ ընդունված եւ ավարտած ուսանողների շարժի դինամիկան: Նպատակն է եղել պարզել, թե բուհերի կողմից ձեւավորվող մասնագիտական առաջարկը որքանո՞վ է մոտ աշխատաշուկայի պահանջարկին, կամ արդյոք բուհերը իրե՞նք են թելադրում եւ ձեւավորում աշխատաշուկան, որոնք են փոփոխականները, եւ որոնք են առավել մեծ ազդեցություն ունեցող գործոնները:

Հավաքագրվել են 2013-2016 թվականներին առկա եւ հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով բուհ ընդունված, այդ թվում՝ նաեւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից բուհ տեղափոխված եւ 2017-2020 թվականներին ավարտած ուսանողների թվաքանակի վերաբերյալ քանակական տվյալներ: Հավաքագրվել է նաեւ 2015-2017թթ. ժամանակահատվածում մագիստրոսի կրթական աստիճանով ընդունված եւ 2017-2019թթ. մագիստրոսի կրթական ծրագիրն ավարտած ուսանողների, ինչպես նաեւ ասպիրանտի կրթական ծրագրով 2012-2016 թվականներին ընդունված եւ սահմանված ժամկետում ատենախոսություն պաշտպանած ասպիրանտների վերաբերյալ վիճակագրությունը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական եւ միջպետական բուհերում դիպլոմավորման տոկոսը երեք տարիների համար բակալավրի մակարդակում միջինը կազմել է ընդունված ուսանողների 81%-ը կամ հանրակրթության շրջանավարտների 44,6%-ը: Այս ցուցանիշը 13,8%-ով բարձր է Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) միջինացված 30,8% ցուցանիշից:

Մագիստրոսի կրթական ծրագրով շրջանավարտների դիպլոմավորման տոկոսը, ընդունվածների համեմատ, միջինում կազմել է 76% կամ 13,75 % հանրակրթության շրջանավարտների համեմատ, որը համընկնում է ՏՀԶԿ 13,8 % միջին ցուցանիշին:

2013-2014թթ. ուսումնական տարում բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով պետական եւ միջպետական բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրվել է 1533 անվճար տեղ, որից 44,3%-ը հատկացվել է բնական գիտություններին, տեխնոլոգիա, ճարտարագիտություն եւ մաթեմատիկա (բգտճմ) մասնագիտություններին: Համապատասխանաբար՝ 2014-2015, 2015-2016 եւ 2016-2017 ուսգ տարիների 1588, 1584, 1682 տեղերից բգտճմ մասնագիտություններին հատկացվել է անվճար տեղերի 43,6%-ը , 43,4 %-ը, 41,2% -ը: Ներկայում այս ցուցանիշը կազմում է շուրջ 50%: ԿԳՄՍ նախարարությունը մեխանիզմներ է մշակում այդ ցուցանիշը հօգուտ ԲՏՃՄ մասնագիտությունների բարձրացնելու ուղղությամբ:

Հետազոտության մեջ, որպես խնդիր, նշվում է այն, որ Հայաստանում որոշ մասնագիտություններ տարիներ շարունակ ունեցել են հասարակական պահանջարկ՝ համաշխարհային միտումներին հակառակ: Այդ մասնագիտութուններով մասնագետներ պատրաստվել են բավականին մեծ թվով, օրինակ՝ հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ տարեկան ավարտում է մոտ 430 ուսանող, որը կազմում է բակալավրի կրթական ծրագրով ավարտածների 3%-ը, այն դեպքում, երբ տեխնոլոգիական զարգացման հետեւանքով այս մասնագիտության պահանջարկը աշխարհում կտրուկ նվազում է: Մեկ այլ օրինակ՝ մանկավարժի որակավորում է ստանում տարեկան մոտ 1772 շրջանավարտ, որը կազմում է բակալավրի կրթական ծրագրով ավարտածների 13%-ը: Սա այն դեպքում, երբ մանկավարժի թափուր տեղերի պահանջարկն առկա է հիմնականում սահմանամերձ գյուղերում, այն էլ այն պատճառով, որ շրջանավարտներն ուղղակի չեն ցանկանում աշխատել հեռավոր գյուղերում՝ նախընտրելով ոչ մասնագիտական աշխատանքը մայրաքաղաքում:

Հետազոտության մեջ նաեւ նշվում է, որ բուհերում ընդունելության 29%-ը իրականացվում է չորս մասնագիտությամբ՝ մասնագիտական մանկավարժություն, տնտեսագիտություն, կառավարում եւ իրավագիտություն: Այս մասնագիտությունները հասարակագիտական ոլորտում են եւ ԲԳՏճՄ մասնագիտությունների համեմատ՝ շատ ավելի քիչ ծախսատար են: Ցածր ծախսատարության պատճառով բուհերից շատերը գերադասում են կրթություն իրականացնել հենց այս մասնագիտություններով: Իսկ այնպիսի մասնագիտություններից, որոնք զարգացած տնտեսություններում ունեն բարձր պահանջարկ, օրինակ՝ վիճակագրություն, տեղեկատվական համակարգեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ, նյութագիտություն եւ նոր նյութերի տեխնոլոգիա, կենսաբանություն, բուհերում պատրաստում են քիչ թվով մանագետներ. դրանց հանրագումարը կազմում է տարեկան 473 շրջանավարտ (բակալավրի կրթական ծրագրով շրջանավարտների 3,7%-ը): Տեխնոլոգիական զարգացման, արհեստական բանականության, մարդկանց ցանկությունների ալգորիթմների զարգացման հեռանկարի պայմաններում այս մասնագետները ապագայում ունենալու են մեծ դեֆիցիտ ոչ միայն աշխատաշուկայում, այլեւ զարգացող աշխարհում:

Հատկանշական է, որ վերապատրաստող ընկերությունները եւս աչքաթող են անում այս մասնագիտությունները, (հիմնականում պատրաստում են մարդկային ռեսուրսների կառավարիչներ, միջոցառումների կազմակերպիներ, դիզայներներ եւ մենեջերներ):

Ըստ իրականացված հետազոտության՝ 2012-2016 թվականներին ասպիրանտական կրթության համար ընդհանուր առմամբ հատկացվել է 1787 (նպաստի ձեւով ուսման վճարի փոխհատուցմամբ (անվճար) առկա եւ հեռակա ուսուցմամբ) տեղ, մինչդեռ 2016-2020 թթ. ժամանակահատվածում պաշտպանել է ընդամենը 625 ասպիրանտ (հատկացված տեղերի 35%-ը): Ատենախոսությունը պաշտպանածների միջինացված տոկոսը, հանրակրթունից շրջանավարտների համեմատությամբ, 4 տարիների համար կազմում է 0,29 %, որը գրեթե 2,5 անգամ ցածր է Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության ՏՀԶԿ միջինացված ցուցանիշի, որը կազմում է 0,72% :

Ուստի բուհերի եւ գիտահետազոտական կազմակերպությունների կողմից հայցված տեղերի ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրահանգել, որ պահանջարկը հիմնականում ներկայացվում է առանց խորքային ուսումնասիրություններիգ որոշ ուղղություններով նկատվում է մասնագետների գերարտադրություն (օրինակ՝ տնտեսագիտության դասիչով նշված ժամանակահատվածում հատկացվել է 272 տեղ կամ ընդհանուր հատկացված տեղերի 15%-ը), իսկ որոշ դեպքերում առկա է պահանջարկ ունեցող մասնագետների պակասուրդ (օրինակ՝ Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում եւ մեքենաներ դասիչով նշված ժամանակահատվածում հատկացվել է 9 տեղ, պաշտպանվել է 4 ատենախոսություն): Թեթեւ արդյունաբերության նյութագիտություն, ապրանքագիտություն եւ տեխնոլոգիա դասիչով նշված ժամանակահատվածում որեւէ հայտ չի ներկայացվել: Հատկանշական է, որ բուհերի եւ գիտահետազոտական կազմակերպությունների կողմից հիմնականում նպատակային եւ ամբողջությամբ չեն օգտագործվում հատկացված տեղերը: Բարձրագույն կրթության երրորդ աստիճանում կրթություն կազմակերպող գրեթե բոլոր բուհերի եւ գիտահետազոտական ինստիտուտների դեպքում առկա է պլանավորման եւ իրականացման խզում:

Ներկայումս ՀՀ-ում դասախոս-ուսանող հարաբերակցությունը միջինում կազմում է 1/14, որը համահունչ է միջազգային չափանիշներին:

ԲՈՒՀ-երից ստացվել է տեղեկատվություն նաեւ ներկայումս դասավանդող պրոֆեսարադասախոսական կազմի տարիքային ցուցանիշների վերաբերյալ՝ ըստ գիտական աստիճանների: Ուսումնասիրության տվյալներով նկատվում է գիտամանկավարժական անձնակազմի ծերացում: Դասախոսների 39%-ից ավելին 55 տարեկանից բարձր են, 21%-ից ավելին՝ 65-ից բարձր, իսկ մինչեւ 35 տարեկան դասախոսները ընդհանուրի մեջ կազմում են 16%: Դասախոսների 44% 35-55 տարիքային խմբում են: Հատկանշական է նաեւ այն փաստը, որ ծերացումը հատկապեսնկատելի է ԳՏճՄ մասնագիտություններով, օրինակ ռադիոֆիզիկա մասնագիտությամբ գիտամանկավարժական անձնակազմի միջին տարիքը 60 է, ֆիզիկա մասնագիտությամբ՝ 59, ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա՝ 57, քիմիա՝ 56:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ՄԿՈՒՋԱԽ-ի հաշվետու նիստը

# Դուալ կրթության ծրագրին մասնակցել է ավելի քան 600 ուսանող

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանի** նախագահությամբ տեղի է ունեցել *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման զարգացման ազգային խորհրդի»* (ՄԿՈՒՋԱԽ) նիստը:

Խորհրդի կազմում ընդգրկված են ՀՀ ԿԳՄՍ, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի, էկոնոմիկայի, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների, Ֆինանսների նախարարությունների, ինչպես նաեւ սոցիալական գործընկերության կառույցների՝ գործատուներին ներկայացնող կազմակերպությունների եւ արհեստակցական միությունների ներկայացուցիչներ:

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը ողջունել է ներկաներին, մաղթել արդյունավետ քննարկում՝ ի նպաստ ոլորտի զարգացմանը:

*«Ցանկացած առաջարկ եւ ներկայացվող ծրագիր պետք է բխի կրթության ռազմավարությունից, որը մշակում է կրթության պետական լիազոր մարմինը, քանի որ մենք ենք ոլորտում իրականացվող յուրաքանչյուր գործընթացի պատասխանատու»*,- նշել է նախարարը:

Նիստի օրակարգում քննարկվել են ՄԿՈՒՋԱԽ-ի կանոնադրությունում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկները: Առանձնակի ուշադրություն է դարձվել Խորհրդի գործառույթի, բովանդակության հստակեցմանը:

Մասնակիցները կարեւորել են ՄԿՈՒ հաստատություններում գործող կարիերայի կենտրոնների գործունեության արդյունավետությունը՝ շեշտելով աշխատաշուկայի հետ կապի ամրապնդմանը միտված քայլերի իրականացումը: Նախարար Վահրամ Դումանյանը կոչ է արել հնչեցնել հիմնավոր առաջարկներ եւ դրանք գրավոր ներկայացնել ԿԳՄՍ նախարարություն՝ նպատակ ունենալով որակյալ եւ մրցունակ մասնագետների պատրաստման գործընթացում աջակցել ՄԿՈՒ հաստատություններին:

Օրակարգում ներառված է եղել նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում գործող իրավական նորմատիվ ակտերում կատարված փոփոխությունների եւ լրացումների վերաբերյալ հարցը: Փոփոխություններ են կատարվել ուսումնական նպաստ հատկացնելու, ուսման վարձը փոխհատուցելու եւ կրթաթոշակ սահմանելու, ՄԿՈՒ տնօրենների մրցութային ընտրության կարգերում:

Օրակարգային հարցերի թվում էին նաեւ արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը եւ Մասնագիտական կրթության եւ ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կողմից 2021 թվականին իրականացված աշխատանքների հաշվետվությունը:

Նիստի ընթացքում Մասնագիտական կրթության եւ ուսուցման զարգացման ազգային խորհրդի անդամներին ներկայացվել են *«Գերմանական միջազգային համագործակցության»* ընկերության հետ (GIZ) համագործակցության շրջանակում ՆՄՄԿ ոլորտում դուալ ուսուցման համակարգի փորձնական ներդրման մոնիթորինգի եւ գնահատման արդյունքները: Զեկույցը ներկայացրել է GIZ ծրագրերի համակարգող **Յուլյա Ստակյանը՝** նշելով, որ դուալ կրթությունը ներդրված է շուրջ մեկուկես տասնյակ հաստատություններում:

Փորձարկվող դուալ կրթության ծրագրին մասնակցել է ավելի քան 600 ուսանող, որոնք ձեռք են բերել ոչ միայն գիտելիք, այլեւ հմտություններ ու կարողություններ աշխատաշուկայի համար: Դուալ ՄԿՈՒ համակարգը ենթադրում է, որ ուսումնառության գործընթացը տեղի է ունենում երկու հաստատություններում՝ քոլեջում կամ ուսումնարանում, ինչպես նաեւ ուսումնական հաստատության հետ համագործակցող մասնավոր ընկերությունում: Նպատակային է համարվում ուսուցման այս մոդելը ներդնել ավելի մեծ թվով ՄԿՈՒ հաստատություններում:

Խորհրդի անդամներն օրակարգի մյուս հարցերի վերաբերյալ առաջարկներն ու դիտողություններն առցանց ներկայացնելու պայմանավորվածություն են ձեռք բերել՝ ըստ անհրաժեշտության՝ հաջորդ նիստին քննարկելու համար:

***Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ***

# Արթուր Մարտիրոսյանն ամփոփել է տարին

***սկիզբը՝ էջ 9***

Բանախոսը նշել է նաեւ, որ այժմ ընթացքի մեջ են 20 տարբեր միջազգային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Մասնավորապես՝ մշակվել եւ ներկայում բանակցությունների փուլում են համագործակցության համաձայնագրեր մի շարք երկրների, այդ թվում՝ Լեհաստանի, Չեխիայի, Բրազիլիայի, Մոնղոլիայի, ԱՄԷ–ի, Վրաստանի, Իսրայելի, Օմանի, Հնդկաստանի, Չինաստանի, Կատարի, Բուլղարիայի, Թուրքմենստանի, Հորդանանի, Իրանի, ՌԴ-ի, Քուվեյթի, Կուբայի եւ այլ երկրների հետ: Նախապատրաստման վերջին փուլում են Եվրոպական միության հետ *«Ստեղծագործ Եվրոպա ծրագրին Հայաստանի մասնակցության մասին»* համաձայնագրի նախագիծը, *«ԱՊՀ մասնակից պետությունների՝ քանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին»* համաձայնագիրը եւ այլն:

Զարգացման գործընկերների հետ կրթության, մշակույթի, երիտասարդության, սպորտի եւ գիտության ոլորտներում բարեփոխումների իրականացման եւ հավելյալ ռեսուրսների ներգրավման առումով՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալը հիշարժան է համարում *«Կրթության միջազգային գործընկերության (Global Partnership for Education)»* կազմակերպության կողմից *«Կրթության ոլորտում զարգացման պլանի դրամաշնորհի (Education Sector Plan Development Grants - ESPDG)»* շրջանակում ՅՈՒՆԻՍԵՖ–ի եւ Ասիական զարգացման բանկի համակարգմամբ իրականացվող լայնածավալ հետազոտությունները հանրակրթության ոլորտում: Այս ծրագրի շրջանակում *«Տեղական կրթական խումբն (Local Education Group-LEG)»* իրականացնում է հետազոտական աշխատանք:

Ասիական զարգացման բանկի՝ տարածաշրջանային *«Հեռավար կրթություն՝ հանուն կայունության»* տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակում դեռեւս 2021 թվականի փետրվարից մեկնարկած *«Հեռավար կրթության հարթակի մշակման եւ ներդրման ծրագիրը»*, ըստ Ա.Մարտիրոսյանի, մյուս կարեւոր ձեռքբերումն է: Հարթակի նախագծման, մշակման, պիլոտային փորձարկման աշխատանքներն արդեն ավարտվել են, եւ նախատեսվում է ներդնել այն 2022 թվականի սկզբից:

ՀՀ ԿԳՄՍՆ հետեւողական աշխատանք է տարել օտարերկրյա պետությունների համալսարաններում, թանգարան-ինստիտուտներում եւ կենտրոններում հայերենի ու հայագիտական առարկաների դասավանդման, ինչպես նաեւ հայագիտական հետազոտությունների խթանման ուղղությամբ: Ըստ այդմ՝ արտերկրում գործող շուրջ մեկ տասնյակ հայագիտական կենտրոններ ՀՀ պետական բյուջեից ստացել են ֆինանսավորում:

2021 թվականին առաջին անգամ ֆինանսավորվել են Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, Ուրուգվայի, Հռոմի Սապիենցա եւ Կահիրեի համալսարանները: Լրացուցիչ ֆինանսավորվել են նաեւ 2 հետազոտական աշխատանքներ Արգենտինայում եւ Գերմանիայի *«Մաշտոց»* հայագիտական կենտրոնում: Այս աշխատանքների շնորհիվ ներկայում օտարերկրյա համալսարաններում հայոց լեզվի դասավանդման, հայոց մշակույթի հանրահռչակման, ինչպես նաեւ հայագիտությանը նպաստելու ծրագիրն իրականացվում է 9 երկրի 11 համալսարաններում .

*- Պրահայի Կարլովի համալսարան (Չեխիայի Հանրապետություն),*

*- Բուխարեստի համալսարան (Ռումինիա),*

*- Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարան, Հռոմի Լա Սապիենցա համալսարան (Իտալիայի Հանրապետություն),*

*- Զալցբուրգի համալսարան (Ավստրիայի Հանրապետություն),*

*- Պոտսդամի Լեփսիուսի տուն-թանգարանի ինստիտուտ,*

*- Հալլեի «Մեսրոպ» հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն),*

*- Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ (Ռուսաստանի Դաշնություն),*

*- Արգենտինայի Քենեդի համալսարան (Արգենտինայի Հանրապետություն),*

*- Կահիրեի համալսարան (Եգիպտոսի Արաբական Հանրապետություն),*

*- Ուրուգվայի համալսարան (Ուրուգվայի Հանրապետություն):*

Արթուր Մարտիրոսյանը նշել է, որ 2022թ. նախատեսվում է ընդարձակել հայոց լեզու դասավանդող համալսարանների ցանկը: *«Քննարկվում են նաեւ Հայաստանին եւ հայ մշակույթին առնչվող այլ ձեւաչափի միջոցառումների անցկացման հնարավորությունները. դիտարկվում է նաեւ բոլոր կենտրոնների մասնակցությամբ հայագիտական խորհրդաժողովի անցկացումը»*,- տեղեկացրել է բանախոսը:

*«Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստում»* պետական ծրագրի շրջանակում այս տարվա ամռանը վերապատրաստվել է 22 երկրի 115 ուսուցիչ: Տրամադրվել է 44 հազար կտոր գրականություն, կազմակերպվել է Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը:

Կազմակերպվել է օտարերկրացի եւ սփյուռքահայ դիմորդների ընդունելություն ՀՀ բուհերում եւ միջին մասնագիտական հաստատություններում: Միջպետական ծրագրերով 2021-22 ուստարում ՌԴ բուհերում սովորելու համար Հայաստանից գործուղվել է 209 ուսանող, Ռումինիա է գնացել 4, Չինաստան՝ 10, Բուլղարիա՝ 3, Հորդանան՝ 6 ուսանող: *«Կոչ ենք անում ՁԼՄ-ներին ավելի ակտիվ լուսաբանել միջպետական համագործակցության ծրագրերը, որպեսզի այստեղ ընտրությունն ավելի մրցակցային լինի»*,- նշել է փոխնախարարը՝ ավելացնելով, որ միջպետական ծրագրերով ՀՀ քաղաքացիներն արտերկրի բուհերում սովորում են անվճար:

Երիտասարդության ոլորտում իրականացված ամենամեծ ծավալային ծրագիրը *«Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին»* ծրագրի շարունակությունն է: Պետական բյուջեից այս ծրագրին տրամադրվել է մոտ 1 մլրդ 380 մլն դրամ՝ 5861 բնակարանի տոկոսագումարի սուբսիդավորման համար: Փոխնախարարի տեղեկացմամբ՝ 2022 թվականին այս ծրագրի համար նախատեսված գումարը ավելացվել է. ոլորտային հատկացումը հասցվել է 1 մլրդ 906 մլն դրամի:

Գերակա է համարվում երիտասարդության ներգրավումը հանրային կյանքին եւ պետականաշինությանը: Այս նպատակով իրականացվել է 26 մլն դրամ ընդհանուր ծավալով 11 անվանակարգով դրամաշնորհների ծրագիր՝ ուղղված թվային եւ մեդիա գրագիտությանը, այլ կարողությունների զարգացմանը:

Իրականացված աշխատանքներից նշվել է նաեւ *«Երիտասարդական մայրաքաղաք»* ծրագրի ամփոփումը. 2022 թվականի ՀՀ երիտասադական մայրաքաղաքը կլինի Հրազդանը: Իրականացվել է նաեւ *«100 գաղափար՝ Հայաստանի համար»* մրցույթը, որին ներկայացվել է 137 հայտ. դրանցից 5-ը պետության կողմից խրախուսվել է: Փոխնախարարն անդրադարձել է նաեւ ոլորտում իրականացված մի շարք այլ աշխատանքների, պատասխանել լրագրողների հարցերին:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

## Տարեվերջյան ասուլիս

# Արա Խզմալյանն ամփոփել է մշակութային տարին

### Մշակույթի ոլորտի 2022 թվականի հատկացումները

**Արա Խզմալյանն** իր խոսքը սկսել է երկու կարեւոր նորություններով. առաջին՝ 2022 թվականին մշակույթի ոլորտին տրամադրված հատկացումները կազմում են 1 մլրդ 589 մլն 13 հազար դրամ: Նախարարի տեղակալի դիտարկմամբ՝ 2021 թվականին համավարակի եւ պատերազմի հետեւանքներով մի քանի անգամ կրճատվել էր ոլորտային բյուջեն, այդ թվում՝ մշակութային ծրագրերին հատկացվելիք գումարը, սակայն 2022 թվականին հատկացված գումարը հասցվել է մշակույթի ոլորտի՝ 2020 թվականի հատկացումներին:

### Կապիտալ հատկացումներ

Երկրորդ՝ աննախադեպ ծավալների են հասել 2019-2020-2021 թվականներին թատերահամերգային կառույցներին, թանգարաններին, մշակութային հաստատություններին կապիտալ հատկացումների ծավալները. 2021 թ. *«Թատերահամերգային կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի համալրում»* ծրագրով հատկացվել է 174,8 մլն դրամ. այդ թվում՝ *«Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն»* ՊՈԱԿ-ին՝ 1,5 մլն դրամ՝ ֆլեյտայի ձեռքբերում, «Երեւանի կամերային պետական թատրոնե ՊՈԱԿ-ին՝ 4,8 մլն դրամ՝ շարժական բեմի գույքի եւ սարքավորումների համար, *«Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն»* ՊՈԱԿ-ին՝ 168,5 մլն դրամ՝ գույքի ձեռքբերում:

*«Սա համարում եմ տարվա լավագույն ձեռքբերումներից մեկն ու շնորհավորում եմ թատրոնի ամբողջ կազմին: Սա վերջը չէ. պետական բյուջեով գրեթե նույն ծավալի հատկացում կլինի նաեւ 2022 թվականին, եւ մենք կունենանք լիարժեք զինված, վերազինված մի կառույց: Սա համահունչ է այն արդյունքներին, որոնք Համազգային թատրոնը գրանցում է վերջին ժամանակաշրջանում»*,- շեշտել է Արա Խզմալյանն ու հավելել՝ 2020 թվականին Տիկնիկային թատրոնին հատկացվել էր 21 մլն դրամ, եւ ամբողջությամբ արդիականացվել էր լուսային տեխնիկան, իսկ այժմ ՀՀ կառավարության որոշման նախագիծ է շրջանառվում, ըստ որի՝ շուրջ 44 մլն դրամ կհատկացվի ձայնային տեխնիկայի համակարգի արդիականացման համար:

Արա Խզմալյանը տեղեկացրել է, որ *«Ներդրումներ՝ թատրոնների շենքերի կապիտալ վերանորոգման համար»* ծրագրով հատկացվել է 54,5 մլն դրամ, այդ թվում՝ Երեւանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման համար՝ 50 մլն դրամ, *«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոն»* ՊՈԱԿ-ի սանհանգույցների եւ դիմահարդարման սենյակների ընթացիկ նորոգման ավարտական աշխատանքների համար՝ 4,5 մլն դրամ: *«Ներդրումներ՝ թանգարանների եւ պատկերասրահների հիմնանորոգման համար»* ծրագրով 108,5 մլն դրամ ուղղվել է *«Հայաստանի պատմության թանգարան»* ՊՈԱԿ-ի օդափոխության համակարգի արդիականացմանը: *«Հուշարձանների ամրակայում, նորոգում եւ վերականգնում»* ծրագրի շրջանակում ընդհանուր առմամբ հատկացվել է 242,7 մլն ՀՀ դրամ: *«Կինեմատոգրաֆիայի»* ծրագրով Հայաստանի ազգային կինոկենտրոնին հատկացվել է 20 մլն դրամ:

Արա Խզմալյանի նշմամբ՝ 2020 թվականին Հայաստանի ազգային կինոկենտրոնին հատկացվել է 102,7 մլն դրամ, որն ուղղվել է Երեւան քաղաքի Տերյան 3ա հասցեում գտնվող, ՊՈԱԿ-ին պատկանող տարածքի հիմնանորոգմանը:

Նախարարի տեղակալի նշմամբ՝ 2022 թվականին *«Թատերահամերգային կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի համալրում»* ծրագրով նախատեսված

է շուրջ 767 մլն դրամ, *«Ներդրումներ՝ թատրոնների շենքերի կապիտալ վերանորոգման համար»* ծրագրով՝ շուրջ 213 մլն դրամ, հուշարձանների համար՝ 108 մլն դրամ:

### Երաժշտարվեստ

*«Երաժշտարվեստի ոլորտում բազմաթիվ ծրագրեր են իրականացվել, որոնցից ուզում եմ առանձնացնել Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ «Բեթհովենի սիմֆոնիաների» ձայնագրությունը, որն արվել է ամենադժվար օրերին, եւ, կարծեք, դա մեզ համար կամքի ու ոգու ամրապնդման մի արարողություն էր: Աջակցություններ են եղել նաեւ կերպարվեստի, պարի ոլորտներին: Այս համատեքստում պետք է նշեմ «SUMMEET» ժամանակակից պարի փառատոնի կարեւորությունը, որը լայն արձագանք է գտել ինչպես Հայաստանում, այնպես էլ ՀՀ սահմաններից դուրս»*,- ասել է նախարարի տեղակալը:

### Միջազգային թատերական փառատոներ, հյուրախաղեր

*«Միջազգային թատերական համագործակցության, տարբեր փառատոներում, հյուրախաղային գործունեության ասպարեզում ակնհայտ ակտիվություն են ցուցաբերել Սոս Սարգսյանի անվան «Համազգային», Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական, Երեւանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական, Երեւանի մնջախաղի պետական թատրոնները»*,- նշել է Արա Խզմալյանը եւ շնորհակալություն հայտնել թատերական հաստատությունների ղեկավարներին:

### Առաջնախաղեր

Արա Խզմալյանի նշմամբ՝ ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ 2021 թվականին տեղի է ունեցել 12 առաջնախաղ. Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը (*«Արթուրո Ուիի կարիերան»*), Երեւանի խամաճիկների պետական թատրոնը (Դիլաքյան եղբայրների *«Գտնված երազ»*), Աբովյանի դրամատիկական թատրոն (*«Կարմիր գլխարկը»* երաժշտական), Երեւանի կամերային պետական թատրոն (*«Համլետ»*), Վանաձորի Հովի. Աբելյանի անվգ պետական դրամատիկական թատրոն (*«Երկիր հայրենի»*), Եղեգնաձորի մշակույթի կենտրոն (Ժան Բատիստ Մոլիեր *«Տարտյուֆ կամ խաբեբան»* կատակերգություն), Վանաձորի *«Տիկնիկային թատրոն»* (*«Բժիշկ Այբոլիտը»*), *«Հալեպ»* հայրենասիրական բարեսիրական ՀԿ (*«Խղճմտանքի ձայներ»*), Արտաշատի Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոն (*«Ամանորի հրաշքը»*), Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն (*«Մաուգլի»*):

Ավելի քան երկու տարի ընդմիջումից հետո նախարարության աջակցությամբ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացել է Արամ Խաչատրյանի *«Սպարտակ»* բալետային ներկայացումը: Դեկտեմբերի 23-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կկայանա համաշխարհային բալետային արվեստի ամենապահանջված ստեղծագործություններից մեկի՝ *«Շչելկունչիկ»* («Մարդուկ-Ձարդուկ») բալետային ներկայացման առաջնախաղը:

### Հոբելյաններ

Հոբելյանական ծրագրերի համատեքստում Արա Խզմալյանն անդրադարձել է Ալեքսանդր Սպենդիարյանի 150-ամյա եւ Անրի Վերնոյի 100-ամյա հոբելյաններին, որոնք ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ *«Հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների 2020-2021 թթ օրացույցում»*:

*«Սպենդիարյանի 150-ամյակին նվիրված տասնյակ միջոցառումներ են կազմակերպվել ոչ միայն Հայաստանում, այլեւ Վրաստանում, Միացյալ Թագավորությունում, Ավստրիայում, Ռուսաստանում: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի մասնակցությամբ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ թողարկվել է կոմպոզիտորի ստեղծագործությունների ձայնասկավառակը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում ՀՀ ԿԳՄՍ նախարարության կազմակերպած միջոցառմամբ մեծ շուքով նշվել է Անրի Վերնոյի 100-ամյակը. Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի մասնակցությամբ այն կրկնվել է նաեւ Երեւանում: Վերնոյի հոբելյանին էր նվիրված նաեւ կինոժառանգության պահպանման խնդիրների վերաբերյալ միջազգային համաժողովը: Տասնյակ միջոցառումներ են կազմակերպվել՝ Առնո Բաբաջանյանի եւ Էդվարդ Միրզոյանի 100-ամյակների կապակցությամբ: Տեղի է ունեցել Միքայել Թարիվերդիեւի հոբելյանին նվիրված համերգ, որին ներկա էր նաեւ կոմպոզիտորի այրին:*

*Հայաստանի պատմության թանգարանի եւ Հայաստանի ազգային պատկերասրահի 100-ամյակներին ընդառաջ՝ 2020-ից մեկնարկել են օդափոխության համակարգի ամբողջական վերափոխման, արդիականացման աշխատանքները, որոնց համար պետական բյուջեից հատկացվել է շուրջ 1 մլրդ դրամ: Պետական աջակցությամբ ամբողջությամբ թարմացվում է Հայաստանի ազգային պատկերասրահի կայքը»*,- նշել է նախարարի տեղակալ Արա Խզմալյանը եւ տեղեկացրել, որ շինարարական աշխատանքներով պայմանավորված՝ պատկերասրահի բուն հոբելյանական միջոցառումը կկայանա 2022 թվականին:

### Կրթամշակութային ծրագրեր

Արա Խզմալյանի դիտարկմամբ՝ մշակույթի եւ կրթական քաղաքականության համադրման գործում նախարարությունը հաջողել է առավելագույնս. *«Մենք շատ հաճախ խոսում ենք մշակութային շուկայի փոքրության մասին, կրթված հանդիսատեսի բացակայության մասին, բայց եթե մենք հենց դպրոցական տարիքից չձեւավորենք այն գիտակցությունը, որ մշակույթը լուրջ երեւույթ է, որ մշակույթով զբաղվելը լուրջ մասնագիտություն է, եւ եթե չբարձրացնենք մշակութային գործչի հանրային ճանաչելիությունն ու վարկանիշը, մենք չենք կարող լուծել մեր առջեւ դրված խնդիրները»*,- ասել է Արա Խզմալյանը եւ ներկայացրել մշակութային շուկայի հիմքերի ձեւավորմանն ուղղված այն ծրագրերը, որոնք իրականացվել են 2021 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Ըստ այդմ՝ *«Դասարան+Դասական»*, *«Քո արվեստը՝ դպրոցում»* ծրագրերը, Երեւանի եւ մարզերի երաժշտական, արվեստի եւ գեղարվեստի դպրոցների փոխգործակցության՝ *«Քույր դպրոցներ»* կրթական նպատակային ծրագիրը, *«Ձարդագիր»*, *«Արվեստասերունդ»* ծրագրերը: ՀՀ 6 մարզերի 32 համայնքներում գործում են 21 *«Արար»* կենտրոններ: Տաղանդի զարգացման *«Մեկնարկ»* նպատակային ծրագրի պատանիները մասնակցել են 18 առցանց երաժշտական միջազգային մրցույթների եւ արժանացել են 1-ին եւ 2-րդ մրցանակների, ինչպես նաեւ վարպետության դասեր ստացել աշխարհի լավագույն մասնագետներից: Անկախության շրջանում առաջին անգամ տպագրվել է *«Արվեստի պատմություն Կերպարվեստ Գիրք I»* ուսումնական ձեռնարկը: 2022 թ. նախատեսվում է հրատարակել *«Արվեստի պատմություն Կերպարվեստ Գիրք II»*, ինչպես նաեւ Հասմիկ Մարկոսյանի *«Արվեստի պատմություն Պարարվեստ Գիրք I»* ուսումնական ձեռնարկները: Հրատարակված գրականությունն անվճար տրամադրվել է Հայաստանի Հանրապետությունում գործող երաժշտական, արվեստի եւ գեղարվեստի դպրոցներին: *«Դպրոցական բաժանորդային համակարգի իրականացման»* ծրագրի շրջանակում 2021 թ. առաջին կիսամյակում ՀՀ հանրակրթական դպրոցների աշակերտները համակարգի միջոցով հնարավորություն են ունեցել անվճար այցելելու երեք մշակութային կազմակերպություններ՝ թանգարաններ, թատրոններ, համերգային կազմակերպություններ: Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի կողմից իրականացվող կրթական լավագույն եւ գրավիչ ծրագրերից մեկը՝ *«Դաս Ա»*-ն, կլինի շարունակական, եւ 2022 թվականին կիրականացվի նաեւ *«Դասարվեստ»* ծրագիրը:

### Հուշարձաններ

Արա Խզմալյանը առանձնահատուկ կարեւորել է *«Արձագանք»* եւ *«Ճանապարհաշինարարներ»* կամ *«Անվերջության ժապավեն»* արձանների վերականգնման ու դրանց տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացումը: Դրանից բացի՝ մեկնարկել են շուրջ մեկ տասնյակ հուշարձանների վերականգնման, բարեկարգման նախագծանախահաշվային ու նախապատրաստական այլ աշխատանքներ:

### Պեղումներ

Անդրադառնալով պեղումներին՝ Արա Խզմալյանը փաստել է, որ տարվա ընթացքում տրվել են ավելի քան 50 պեղումների թույլտվություններ, այդ թվում՝ Արտաշատ եւ Դվին պատմական մայրաքաղաքների, Սանահինի, Բարձրաքաշի, Սրվեղի վանքի, Դաշտադեմի ամրոցի, Տավուշի բերդի ամրակայման համար անհրաժեշտ հատվածների փրկարարական պեղումների թույլտվություններ: 2021 թգ իրականացվել են Տավուշի բերդի եւ Դաշտադեմի պեղումները, իսկ 2022 թ. աշխատանքներ են նախատեսվում Լոռի բերդ, Տավուշի բերդ, Դաշտադեմ եւ Ամբերդ ամրոցներում:

*«Պեղումներից հայտնաբերված հնագիտական հավաքածուների ժամանակավոր ցուցադրություններ են կազմակերպվել «Հողի գաղտնիքը խորագրի ներքո: Նոյեմբերի 30-ից Շահումյանի դամբարանից հայտնաբերված հնագիտական գանձերը ցուցադրվում են Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանում, դեկտեմբերի 15-ից «Մեծամորի ոսկին» ցուցադրվում է Մեծամոր պատմահնագիտական արգելոց-թանգարանում»*,- նշել է Արա Խզմալյանը եւ տեղեկացրել, որ 2022 թգ այս խորագրով ցուցադրությունների շարքը լինելու է շարունակական. հաջորդը՝ մայրաքաղաք Արտաշատից հայտնաբերված հնագիտական գտածոների ցուցադրությունն է:

Արա Խզմալյանի փաստմամբ՝ պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակում վերականգնվում են տասնյակից ավելի հուշարձաններ: Այս տարի ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել են *«Դաշտադեմ ամրոց»* եւ *«Մայրաքաղաք Դվին»* պատմամշակութային արգելոցները

***Ալա ՍԵՐՈԲՅԱՆ***

Ալեքսանդր Սպենդիարյան - 150

# Միջազգային գիտական նստաշրջան

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի եւ Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ, հեռավար ձեւաչափով գումարեց *«Ալեքսանդր Սպենդիարյան - 150»* միջազգային գիտական եռօրյա նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Նիդեռլանդների եւ Շվեդիայի գիտական համայնքների շուրջ 40 ներկայացուցիչները: Միջգիտակարգային գիտական նստաշրջանը նվիրված էր Ալ. Սպենդիարյանի կյանքի, ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեության ուսումնասիրության, նրա թողած ժառանգության արժեւորման հարցերին, որոնց լուսաբանմամբ հանդես եկան ինչպես երաժշտագետներ ու երաժիշտներ, այնպես էլ արվեստաբաններ, գրականագետներ, մշակութաբաններ, փիլիսոփաներ: Նստաշրջանն իր շուրջը համախմբեց թե՛ վաստակաշատ գիտնականների, թե՛ երիտասարդ հետազոտողների:

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեցին եւ միջոցառմանը բարեհաջող ընթացք մաղթեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը,** Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն **Մարինե Օթարյանը** եւ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ **Արամ Սաթյանը:**

Լիագումար նիստում հետաքրքիր ու արժեքավոր զեկուցումներով հանդես եկան Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աելիտա Դոլուխանյանը՝** *«Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի լիբրետոն եւ Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմը»*, Լատվիայի Ի. Կոզակեւիչի անվան ազգային մշակութային ընկերությունների ասոցիացիայի վարչության նախագահ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Լատվիայի արվեստի վաստակավոր գործիչ **Ռաֆֆի Խարաջանյանը** (Լատվիա, Ռիգա)՝ *«Ալեքսանդր Սպենդիարյան. մի քանի հայացքներ այսօր»,* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ասատրյանը՝** *«ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ներդրումը ակադեմիական սպենդիարյանագիտության կայացման ու զարգացման գործում»,* Սանկտ Պետերբուրգի Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի դեկան, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անդրեյ Իվանովը** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ *«Լարայինների համար գրված ստեղծագործությունները Ալ. Սպենդիարյանի ժառանգության մեջ»,* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Մարգարիտա Ռուխկյանը՝** *«Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ավանդական բեմական հայեցակարգը»,* Ռուսաստանի Ա.Ի. երցենի անվան պետական մանկավարժական համալսարանի երաժշտության, թատրոնի եւ խորեոգրաֆիայի ինստիտուտի դոցենտ, արվեստագիտության թեկնածու **Նադեժդա Մեդվեդեւան** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ *«Ալ. Սպենդիարյանի ստեղծագործությունը պետերբուրգյան դաշնամուրային դուետի հայելիում»,* Կազանի մշակույթի պետական ինստիտուտի պրոֆեսոր, մշակութաբանության դոկտոր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու **Տատյանա Գորդեեւան** (Ռուսաստան, Թաթարստանի Հանրապետություն, Կազան)՝ *«Ալ. Սպենդիարյանի վոկալ երաժշտությունը կազանյան երգիչների ուսումնամանկավարժական պրակտիկայում եւ համերգային երգացանկում»,* Դնեպրոպետրովսկի Մ.Ի. լինկայի անվան երաժշտության ակադեմիայի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու **Լարիսա Գոնտովայան** (Ուկրաինա, Դնեպր)՝ *«Ավանդույթի պարադոքսը. Ալեքսանդր Սպենդիարյան, Լեւ Ռեւուցկի, Իգոր Ստրավինսկի»,* Կազանի մշակույթի պետական ինստիտուտի դոցենտ, արվեստագիտության թեկնածու **Լիլյա Բորոդովսկայան** (Ռուսաստան, Թաթարստանի Հանրապետություն, Կազան)՝ *«Թաթարստանի Հանրապետության ժամանակակից երաժիշտների՝ Ալ. Սպենդիարյանի երաժշտության կատարողական մեկնաբանությունները»,* Մ.Կ. Ամմոսովի անվան Հյուսիս-Արեւելյան ֆեդերալ համալսարանի մշակութաբանության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու, Սախայի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ **Տատյանա Պավլովա-Բորիսովան** (Ռուսաստան, Սախա-Յակուտիայի Հանրապետություն, Յակուտսկ)՝ *«Հայաստան-Յակուտիա. «Ա»-ից «Ֆ» կոմպոզիտոր Հրանտ րիգորյանի ստեղծագործության մեջ»,* ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անահիտ Բաղդասարյանը՝** *«Նմանակումը Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայում»,* Սանկտ Պետերբուրգի Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի ազգային երաժշտական մշակույթների կաբինետի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Տատյանա Բրոսլավսկայան** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ *«Ժողովրդական գործիքային ավանդույթների փոխակերպումները Ալ. Սպենդիարյանի ստեղծագործության մեջ»,* ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մարիաննա Տիգրանյանը՝** *«Ռուսական ֆոլկլորն Ալ. Սպենդիարյանի ստեղծագործության մեջ»* եւ Մոսկվայի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ասպիրանտ **Ալեքսեյ Զաբրոդինը՝** *«Ալ. Սպենդիարյանի կյանքի եւ գործունեության մոսկովյան եւ պետերբուրգյան շրջանները (1890-1899)»:*

Դեկտեմբերի 15-ին տեղի ունեցած առաջին նիստում (նիստի նախագահ՝ Մարինե Օթարյան) ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր **Սուսաննա Հովհաննիսյանն** անդրադարձավ Սպենդիարյանի եւ Հովի. Թումանյանի հանդիպմանը, որից սկիզբ առավ *«Ալմաստ»* օպերայի ստեղծման պատմությունը: Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս **Նաիրա Մադոյանը** ներկայացրեց Սպենդիարյանի ստեղծագործական գործունեության դոկտոր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու **Տատյանա Գորդեեւան** (Ռուսաստան, Թաթարստանի Հանրապետություն, Կազան)՝ *«Ալ. Սպենդիարյանի վոկալ երաժշտությունը կազանյան երգիչների ուսումնամանկավարժական պրակտիկայում եւ համերգային երգացանկում»,* Դնեպրոպետրովսկի Մ.Ի. լինկայի անվան երաժշտության ակադեմիայի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու **Լարիսա Գոնտովայան** (Ուկրաինա, Դնեպր)՝ *«Ավանդույթի պարադոքսը. Ալեքսանդր Սպենդիարյան, Լեւ Ռեւուցկի, Իգոր Ստրավինսկի»,* Կազանի մշակույթի պետական ինստիտուտի դոցենտ, արվեստագիտության թեկնածու **Լիլյա Բորոդովսկայան** (Ռուսաստան, Թաթարստանի Հանրապետություն, Կազան)՝ *«Թաթարստանի Հանրապետության ժամանակակից երաժիշտների՝ Ալ. Սպենդիարյանի երաժշտության կատարողական մեկնաբանությունները»,* Մ.Կ. Ամմոսովի անվան Հյուսիս-Արեւելյան ֆեդերալ համալսարանի մշակութաբանության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու, Սախայի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ **Տատյանա Պավլովա-Բորիսովան** (Ռուսաստան, Սախա-Յակուտիայի Հանրապետություն, Յակուտսկ)՝ *«Հայաստան-Յակուտիա. «Ա»-ից «Ֆ» կոմպոզիտոր Հրանտ րիգորյանի ստեղծագործության մեջ»,* ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անահիտ Բաղդասարյանը՝** *«Նմանակումը Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայում»,* Սանկտ Պետերբուրգի Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի ազգային երաժշտական մշակույթների կաբինետի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Տատյանա Բրոսլավսկայան** (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)՝ *«Ժողովրդական գործիքային ավանդույթների փոխակերպումները Ալ. Սպենդիարյանի ստեղծագործության մեջ»,* ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մարիաննա Տիգրանյանը՝** *«Ռուսական ֆոլկլորն Ալ. Սպենդիարյանի ստեղծագործության մեջ»* եւ Մոսկվայի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ասպիրանտ **Ալեքսեյ Զաբրոդինը՝** *«Ալ. Սպենդիարյանի կյանքի եւ գործունեության մոսկովյան եւ պետերբուրգյան շրջանները (1890-1899)»:*

Դեկտեմբերի 16-ին տեղի ունեցած երկրորդ նիստում (նախագահ՝ Լիլիթ Երնջակյան), Մարինե Օթարյանը ներկայացրեց *«Ստեղծագործական երկրորդ կյանք. Թիֆլիս»* զեկուցումը: Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի յումրու մասնաճյուղի տնօրեն, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Հասմիկ Հարությունյանը** բացահայտեց ազգային ինքնության դրսեւորումները Սպենդիարյանի ստեղծագործության մեջ: Ուշագրավ էին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, **Հռիփսիմե Պիկիչյանի** դիտարկումները կոմպոզիտորի ստեղծած եւ *«Երեք արմավենի»* սիմֆոնիկ պատկերում կիրառված սպենդիարաֆոնի վերաբերյալ, որը բանախոսի հիմնավորմամբ՝ ավանդական նվագարանների *«սիմֆոնիզացված»* հետնորդն է: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատող **Արուսյակ Պետրոսյանը** լուսաբանեց Սպենդիարյանի կապերը ժամանակակից հայ արվեստագետների հետ: Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի յումրու մասնաճյուղի փոխտնօրեն **Անի Ասատրյանը** հանդես եկավ *«Գեորգի Տիգրանովը Ալ. Սպենդիարյանի գործունեության ղրիմյան շրջանի մասին»* բանախոսությամբ: Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող **Ինեսսա Խաչատրյանն** առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց կոմպոզիտորի դստեր՝ Տատյանա Սպենդիարովայի հուշերը հոր մասին: Նիստը եզրափակեց **Նունե Պողոսյան-Զելցբուրգի** (UWC Maastricht, MA, Նիդերլանդներ, Մասստրիխտ) *«Ալ. Սպենդիարյանը աշխարհի երաժշտարվեստի համակարգում. էքսներաժշտագիտական դիտարկումներ»* բանախոսությունը:

Նստաշրջանի երրորդ նիստում (նախագահ՝ Մարգարիտա Քամալյան), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Աննա Հարությունյանը** թերթեց Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի պատմության էջերը: Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ **Սոֆյա Սարյանը** քննության առավ Ալ. Սպենդիարյանի *«Ալմաստ»* օպերայի սարյանական ձեւավորումը: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ **Քրիստինա Աբրահամյանը** ներկայացրեց դրվագներ Ալ. Սպենդիարյանի եւ Հովհաննես Հովհաննիսյանի բարեկամության պատմությունից: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության տեսության եւ մշակութաբանության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու, արվեստաբան **Նարե Նադարյանը** վերլուծության ենթարկեց Սպենդիարյանին նվիրված Արա Սարգսյանի եւ Ղուկաս Չուբարյանի կերտած արձանները: Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի դասատու **Նինա Հակոբյանի** զեկուցումը նվիրված էր Սպենդիարյանի մասին ժամանակակիցների հուշերին: Նիստը եզրափակեց Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ Աստղիկ Հարությունյանի *«Դիրիժորական փայտիկի կախարդական ուժը»* զեկուցումը:

Նստաշրջանի եզրափակիչ՝ չորրորդ նիստը (նախագահ՝ Մարիաննա Տիգրանյան), մեկնարկեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Լիլիթ Երնջակյանի** *«Ալեքսանդր Սպենդիարյանի Արեւելքը»* բանախոսությամբ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Թատրոնի բաժնի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր **Նազենիկ Սարգսյանը** բացահայտեց Սպենդիարյանի ստեղծագործության նշանակությունը պարարվեստի բնագավառում: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու, արվեստաբան **Մարգարիտա Քամալյանը** հանդես եկավ *«Ալեքսանդր Սպենդիարյանը հայ նկարիչների աչքերով»* զեկուցումով: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դաշնակահար **Լիլիթ Արտեմյանն** անդրադարձավ կոմպոզիտորի դաշնամուրային ստեղծագործությանը: Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի ավագ գիտաշխատող **Հասմիկ Համբարյանը** ներկայացրեց *«Գրական հերոսների երաժշտական կերպավորումն Ալ. Սպենդիարյանի մելոդեկլամացիաներում»* բանախոսությունը: Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի յումրու մասնաճյուղի դասախոս, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Աննա Թամիրօղլյանը** ձեւակերպեց Սպենդիարյանի *«Գուշակուհին»* ստեղծագործության կոմպոզիցիոն որոշ սկզբունքները: Նստաշրջանի աշխատանքները եզրափակեց Աննա Ասատրյանի *«Ալեքսանդր Սպենդիարյան եւ Հովհաննես Նալբանդյան. էջեր ստեղծագործական համագործակցության»* բանախոսությունը:

Այսպիսով՝ զեկուցումների թեմատիկայի ընդգրկմամբ ու մասնակիցների աշխարհագրությամբ աննախադեպ *«Ալեքսանդր Սպենդիարյան - 150»* միջազգային գիտական նստաշրջանի արդյունքներն արտացոլեցին միջազգային սպենդիարյանագիտության արդի վիճակը եւ կարեւոր ներդրում դարձան ակադեմիական սպենդիարյանագիտության մեջ:

***Աննա ԱՍԱՏՐՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր***

Հոբելյան

# Նվիրում հայերենագիտությանը

Լրացավ բանասիրական գիտությունների դոկտոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր **Լալիկ Մնացականի Խաչատրյանի** ծննդյան **70-ամյակը:** Հոբելյաններն առհասարակ առիթ են՝ հանրությանը ներկայացնելու գիտնականի, մանկավարժի անցած ուղին, ամփոփելու նրա գիտամանկավարժական ձեռքբերումները, ներդրումը գիտության մեջ: Օգտվելով այդ հնարավորությունից՝ ուրվագծենք հայերենագետ մանկավարժ-գիտնականի դիմանկարը:

Լ. Մ. Խաչատրյանը ծնվել է 1952 թ. հունվարի 6-ին, Հացառատում (այժմ Գավառ քաղաքի շրջագծի մեջ է): 1973 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Նորադուզ (այժմ՝ Նորատուս) գյուղի ութամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ: Գյուղական դպրոցում աշխատելու տարիներին պրպտուն միտք ունեցող ուսուցիչն անվանի հայերենագետներ Պ. Բեդիրյանի եւ Վ. Քոսյանի խորհրդատվությամբ ու ղեկավարությամբ հետազոտել է հայերեն բառերի ձեւաբանական իմաստների մեջ կատարված տեղաշարժերը, այդ թեմայով գիտական հոդվածներ հրապարակել եւ 1981 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: Հաջորդ տարվանից հարազատ համալսարանում Լ. Մ. Խաչատրյանն անցել է դասախոսական աշխատանքի:

1985-ին Հայաստանի Մանկավարժական ընկերությունը լույս է ընծայում Լ. Մ. Խաչատրյանի առաջին մենագրությունը՝ *«Տեղաշարժեր բառերի ձեւաբանական իմաստի մեջ»*: Գրքում քննված են բառերի ձեւաբանական իմաստի եւ արժեքի պատմական տեղաշարժերը (միջխոսքիմասային եւ ներխոսքիմասային): Ուսումնասիրությունը կատարված է առավելաբար ժամանակակից հայերենի լեզվական փաստերի վրա, նկատի են առնվել նաեւ գրաբարի եւ միջին հայերենի իրողությունները: Գիրքը հասցեագրված է հիմնականում բանասիրական բաժինների ուսանողներին եւ հայոց լեզվի ու գրականության ուսուցիչներին (լույս է տեսել մեր օրերի համար զարմանալի՝ 5000 օրինակ տպաքանակով):

Բառերի ձեւաբանական տարարժեքության թեման դարձավ Լ. Խաչատրյանինը. նա ընդլայնեց ուսումնասիրության շրջանակները եւ 1996 թ. հրատարակեց *«Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում»* վերնագրով մենագրությունը: Հետազոտության մեջ կառուցվածքային լեզվաբանության հետազոտության մեթոդներով քննվում են խոսքիմասային տարարժեքության դրսեւորումներն արդի արեւելահայերենի կայուն կապակցություններում: Այդ երեւույթը դիտարկվում է ինչպես կառույցի բաղադրիչների, այնպես էլ ամբողջական կապակցության իմաստային կառուցվածքում: Կառույցի բաղադրիչների տարարժեքությունն ուսումնասիրվում է միջխոսքիմասային եւ ներխոսքիմասային առումներով, վեր են հանվում այդ կարգի բաղադրիչների ձեւաբանաշարահյուսական եւ բառադարձվածային առանձնահատկությունները:

1997 թ. Լ. Խաչատրյանը այս թեմայով հաջողությամբ պաշտպանեց ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Լ. Խաչատրյանը 2001-2013 եւ 2015-2016 թթ. եղել է ՀՊՄՀ հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: 2003 թ. հայերենագետն ստացել է պրոֆեսորի կոչում:

1998-ին հրատարակվեց *«Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարանը»*: Բառարանն ընդգրկում է հին հայերեն մատենագրության մեջ գործածված շուրջ չորս հազար բառ, որոնք բառաքերականական իմաստով եւ արժեքով երկատված են: 2003-ին լույս տեսավ սրա ընդարձակ եւ մշակված տարբերակը՝ *«Գրաբարի բացատրական բառարան (ձեւաբանորեն տարարժեք բառեր)»* V-XI դարերի մատենագրությունից քաղված բնագրային օրինակներով: Սա օգտակար բառարան է պատմական իմաստաբանության մասնագետների համար:

Այս վերջինից տասը տարի անց՝ 2013-ին, հրատարակվեց *«Գրաբարի ուսումնական բառարանը»*, որը պարունակում է 10 հազար բառ: Բառարանում զետեղված բառերը քաղվել են V-XI դարերի գրաբար մատենագրությունից՝ ելնելով ուսումնական խնդիրներից եւ ընտրված բառերի գործնական արժեքից: Բառարանի ավանդական ուղղագրությամբ տարբերակը Մխիթարյան միաբանության մեկենասությամբ լույս տեսավ 2016 թվականին Վենետիկում՝ Սուրբ Ղազարում:

Լայն է Լ. Խաչատրյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Վկայություններից մեկը *«Բառակազմական եւ ձեւաբանական կաղապարները ժամանակակից հայերենում»* մենագրությունն է (2011 թ.): Բառակազմական կաղապարները մատուցվում են բառաբարդման եւ ածանցման կտրվածքներով, ձեւաբանական կաղապարները՝ ըստ գոյականի եւ բայի հարացույցների:

Գրաբարի նկատմամբ գիտական հետաքրքրությունը դրսեւորվել է նաեւ *«Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XI դդ.)»* աշխատության մեջ (համահեղինակ՝ Լ. Ավետիսյան, 2015 թ.)

Լ. Խաչատրյանի գիտամեթոդական աշխատանքների ցանկում տեղ են գտել նաեւ հայոց լեզվի հարցարաններ: Դրանցից առաջինը՝ *«Հայոց լեզվից 50 հարցարանը»*, 1992-ին լույս է տեսել Պ. Բեդիրյանի եւ տողերիս հեղինակի համահեղինակությամբ: Հենց այս շրջանում Հայաստանում սկսեցին մշակել հայերենի հարցարաններ: Սրան հաջորդեցին Դ. Գյուրջինյանի, Լ. Խաչատրյանի եւ մի քանի այլ մասնագետների կազմած հարցարանների ժողովածուները (1997, 1998 թթ.), այնուհետեւ՝ 2001-2005 թթ., հայոց լեզվի հարցաշարերի Լ. Եզեկյանի եւ այլոց շտեմարանները:

Լ. Խաչատրյանի ստեղծածի մեջ կան նաեւ դասագրքեր: Դրանցից մեկը հայոց լեզվի դասագիրքն է՝ հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար (Ֆ. Խլղաթյանի համահեղինակությամբ, 2006 թ.), ընդգրկում է ձեւաբանության բաժինը: Մյուսները բուհական տարբեր առարկաների եւ դասընթացների դասագրքեր ու ձեռնարկներ են: Դրանց անդրադառնանք ավելի հանգամանորեն:

*«Գրաբարի դասագիրք»* (համահեղինակ՝ Գ. Թոսունյան, 2004 թ.): Ա. Աբրահամյանի, Ռ. Ղազարյանի եւ Հ. Ավետիսյանի, Պ. Շարաբխանյանի, Պ. Բեդիրյանի եւ ուրիշ գրաբարագետների ստեղծած համալսարանական ձեռնարկներին հաջորդող այս դասագիրքն ընդգրկում է գրաբարի հնչյունաբանությունը, ձեւաբանությունը եւ շարահյուսությունը: Դասագրքում քերականական իրողությունները տրված են ըստ դասերի. դրանց հաջորդում են վարժություններ: Լեզվական որոշակի նյութից հետո զետեղված են ինքնուրույն եւ թարգմանական գրականությունից քաղված բնագրեր ընթերցանության եւ թարգմանության համար: Դասագիրքը, ինչպես իր նախորդները, ունի բառերի, դարձվածքների եւ ոճական արտահայտությունների գրաբարաշխարհաբար բառարան:

*«Լեզվաբանության ներածություն»* (2008 թ.): Լեզվաբանության ներածության ձեռնարկը գրվել է նոր կրթահամակարգի ծրագրային պահանջների համապատասխան եւ նախատեսված է հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար: Ակադ. Էդ. Աղայանի համանուն դասագրքից հետո սա հիշյալ առարկայի ուսումնական ձեռնարկ գրելու առաջին եւ հաջողված փորձն է: Ձեռնարկում համառոտ ներկայացվում են

լեզվաբանության պատմությունը, առանձին բաժիններով տրված են լեզվի բնութագրերը, հնչաբանության, բառագիտության եւ քերականության հիմնական հարցերը, լեզվաբանական հետազոտության մեթոդները, աշխարհի լեզուների տիպաբանական եւ ծագումնաբանական դասակարգումը:

*«Հայոց լեզվի պատմության դասընթաց. գրային ժամանակաշրջան»* (համահեղինակ՝ Է. Մկրտչյան, 2016 թ.): Բանասիրական ֆակուլտետների ուսանողների համար նախատեսված դասագիրքը ներկայացնում է հայոց լեզվի պատմության գրային ժամանակաշրջանի հիմնախնդիրները: Դրանք ներառում են լեզվի պատմության շրջանները՝ իրենց ենթաշրջաններով (V-XXI դարեր), լեզվական իրողությունների համաժամանակյա վիճակը եւ կրած փոփոխությունները՝ տարժամանակյա մոտեցմամբ, որակական փոփոխություններով պայմանավորված լեզվափուլերի հաջորդումը եւ այլն: Դասագրքի հեղինակները գրային շրջանի պատմության հիմնահարցերի հետ մեկտեղ ներկայացրել են նաեւ պատմական քերականության առանցքային հարցադրումները:

*«Ընդհանուր լեզվաբանության դասընթաց»* (2017 թ.): Հասցեագրված է մանկավարժական համալսարանների ուսանողներին: Դասագիրքը բաղկացած է երկու բաժնից՝ *«Լեզվաբանության հիմունքներ»* եւ *«Ընդհանուր լեզվաբանության հարցեր»*: Դասընթացը բաղկացած է 50 դասերից (ամեն բաժնի տրվում է 25-ական դաս): Յուրաքանչյուր դաս հստակ կառուցվածք ունի՝ հենակետային բառեր, դասավանդման մեթոդներ, դասախոսության տեքստ, որոնց հաջորդում են առաջադրանքներ, ինքնաստուգման հարցեր, վերջում տրվում են թեմային առնչվող հիմնական եւ հանձնարարելի գրքերի մատենագիտական տվյալները:

Հայերեն լեզվաբանական գիտահանրամատչելի գրականությունը, որի լավագույն նմուշներն են Պ. Բեդիրյանի «Բառերի խորհրդավոր աշխարհիցե եւ Ն. Մկրտչյանի *«Բառերի կենսագրությունից»* գրքերը, 2010 թ. համալրվեց Լ. Խաչատրյանի *«Հետաքրքրաշարժ լեզվաբանություն»* գրքով: Զրույցների այս գիրքը ներկայացնում է հետաքրքրաշարժ լեզվական իրողություններ բառերի եւ բառածեւերի անթեղված իմաստներից, փոխառությունների եւ հատուկ անունների ուշագրավ պաշարից:

Հաջորդը *«Բառաշխարհի գաղտնիքները: Հունալատինական փոխառություններ»* գիրքն է (2014 թ.): Այստեղ ընդգրկված զրույցները ներկայացնում են հայերենի հունական եւ լատինական փոխառությունները, մեկնաբանվում են նրանց նախնական իմաստներն ու դրանց տեղաշարժերը՝ բացահայտելով հետաքրքրական բազմաթիվ իրողություններ:

Պրոֆեսոր Լ. Մ. Խաչատրյանն այսօր շարունակում է աշխատել երիտասարդական եռանդով: Մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետում դասավանդելուն զուգահեռ ղեկավարում է Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիան (աշխատանոցը): Աշխատանոցը սերտորեն համագործակցում է ՀՀ Լեզվի կոմիտեի հետ. 2020 եւ 2021 թվականներին համատեղ կազմակերպվել են գիտաժողովներ՝ նվիրված հայերեն լեզվաբանական տերմինաբանությանը եւ հայ բառարանագրության հիմնախնդիրներին (գիտաժողովների զեկուցումները հրատարակվել են առանձին պրակներով):

Տասնամյակների գիտական պրպտումների եւ դասախոսական աշխատանքի հանրագումարն են Լ. Խաչատրյանի հայերենագիտական եւ լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանները, որոնք Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի աշխատանքի արգասիքն են:

*«Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարանը»* լույս է տեսել 2020 թ. Մ. Միրումյանի համահեղինակությամբ: Թեմատիկ (փնջային) եղանակով բառարանում ընդգրկված են հետեւյալ բաժինների եւ բնագավառների տերմիններ՝ հնչյունաբանություն, գրաբանություն, ձեւույթաբանություն, բառակազմություն, բառագիտություն, բառարանագրություն, ձեւաբանություն, շարահյուսություն, լեզվի պատմություն, խոսք, տեքստ, ոճաբանություն, ուղղախոսություն, ուղղագրություն եւ կետադրություն: Յուրաքանչյուր տերմին հանգամանորեն բացատրվում է, բերվում են համապատասխան օրինակներ, նմուշներ: Այս մոտեցման շնորհիվ ուսանողների համար բառարանը ձեռք է բերում ուսումնական ձեռնարկի արժեք, իսկ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչների համար՝ համահավաք տեղեկատուի:

Բոլորովին վերջերս՝ 2021-ին, լույս տեսավ Լ. Մ. Խաչատրյանի *«Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանը»:* Սա նախորդի սկզբունքով է կազմվել եւ կրկին կարող է որպես ուսումնական ձեռնարկ գործածվել: Բառարանում թեմատիկ եղանակով ներկայացվում են հետեւյալ բնագավառները՝ լեզու, հնչյունական համակարգ, բառագիտություն, բառարանագրություն, քերականական կառուցվածք, քերականական իմաստ եւ քերականական կարգ, լեզվի տեսություն, լեզվաբանական մեթոդներ, լեզվաբանական տիպաբանություն, լեզուների ցեղակցություն եւ ծագումնաբանական դասակարգում:

Լ. Խաչատրյանի գիտական դիմանկարն ամբողջական դարձնելու համար պիտի հիշատակենք նրա ակտիվ մասնակցությունը հանրապետական եւ միջազգային բազմաթիվ գիտաժողովների, տասնյակ հոդվածները Հայաստանի, սփյուռքի, ինչպես նաեւ արտասահմանյան գիտական պարբերականներում: Հիշատակելի են սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստան դասընթացները Սիրիայում եւ Իրանում: Պրոֆեսորի ղեկավարությամբ քսան հայցորդ ստացել է մանկավարժական եւ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Լ. Մ. Խաչատրյանի գիտամանկավարժական գործունեությունը նկատվել եւ գնահատվել է: 2008-ին նա արժանացել է *«Ֆրիտյոֆ Նանսեն»* հիմնադրամի ոսկե մեդալին, 2012-ին՝ ՀՊՄՀ *«Խաչատուր Աբովյան»* հուշամեդալին, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության բարձրագույն պարգեւին՝ ոսկե մեդալին, եւ այլն: Ամենաբարձր պարգեւը, սակայն, պրոֆեսորի ուսանողների սերն ու հարգանքն է, լեզվաբանական շրջանակների գնահատանքը:

Հայերենագետը եռանդուն շարունակում է իր գործունեությունը: Վստահ ենք, որ շուտով նոր գրքեր են ծնվելու:

***Դավիթ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ***
***ՀՀ լեզվի կոմիտեի նախագահ***

Դրսեկություն (էքստեռն)

## Հայտնի են ավարտական քննությունների օրերը

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են 2022 թվականի 1-ին քննաշրջանի դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգը եւ ժամանակացույցը:

Ըստ այդմ՝ 1-ին քննաշրջանի համար դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունները կանցկացվեն **2022 թվականի փետրվարի 15-ից մինչեւ մարտի 15-ը ներառյալ, Երեւանի թիվ 198 ավագ դպրոցում:**

**Հիմնական** կրթության վկայական ստանալու համար դրսեկները *«Համաշխարհային պատմություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն»* եւ *«Օտար լեզու»* (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն) առարկաների քննությունները կհանձնեն գրավոր, իսկ *«Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ եւ անվտանգ կենսագործունեություն»* եւ *«Ռուս գրականություն»* (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները՝ բանավոր:

**Միջնակարգ** կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները *«Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»* եւ *«Օտար լեզու»* (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն) առարկաների քննությունները կհանձնեն գրավոր, իսկ *«Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ եւ անվտանգ կենսագործունեություն»* եւ *«Ռուս գրականություն»* (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները՝ բանավոր:

*«Ֆիզկուլտուրա»* առարկայի քննության անցկացման եղանակը նորմատիվների հանձնումն է: Գրավոր քննական թեստերը կազմում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնը՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով: Բանավոր քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից, գնահատման 10 բալային համակարգով:

Հիմնական կրթության վկայականում եւ միջնակարգ կրթության ատեստատում ավարտական եւ պետական ավարտական քննական առարկաները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի: Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով եւ համարվում են տարեկան գնահատականներ:

Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է՝ համաձայն հետեւյալ սանդղակի՝

20 միավոր - 10
18-19 միավոր - 9
16-17 միավոր – 8
14-15 միավոր – 7
12-13 միավոր – 6
10-11 միավոր – 5
8-9 միավոր – 4

2022 թվականի 1-ին քննաշրջանի դրսեկության ձեւով (էքստեռն) քննությունները կանցկացվեն՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

Դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու եւ անցկացնելու գործընթացը համակարգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

***Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Նախագիծ

## Միասնական քննություն կարելի է հանձնել երկու անգամ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը մշակել է պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգում փոփոխություններ կատարելու նախագիծը:

Նախագծով սահմանվում է, որ դիմորդը տվյալ ուսումնական տարում միասնական քննություն կարող է հանձնել երկու անգամ: ՀՀ հանրակրթական, նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ տվյալ ուսումնական տարվա կամ նախորդ տարիների շրջանավարտները միասնական քննություններ կարող են հանձնել տվյալ տարվա **հունվարին** եւ **հունիսին,** իսկ մինչեւ **հուլիսի 31-ը՝** զորացրվող դիմորդները, օտարերկրացիները, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների՝ տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ ՀՀ քաղաքացիները՝ տվյալ տարվա **հունվարին** եւ **հուլիսին:**

Միեւնույն առարկայից երկու միասնական քննություն հանձնած դիմորդն անվճար կամ վճարովի ուսուցմամբ հայտագրած համապատասխան մասնագիտության մրցույթին մասնակցում է **տվյալ առարկայի քննությունից ստացած առավել բարձր միավորով:**

Նշյալ եւ դրան առնչվող դրույթները (տվյալ տարվա դեկտեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 25–ն ընկած ժամանակահատվածում միասնական քննությունների հայտագրման եւ հաջորդ տարվա հունվար ամսին քննությունների անցկացման մասով) ուժի մեջ կմտնեն **2022 թվականի սեպտեմբերի 1-ից հետո:**

**Հունվար ամսվա** միասնական քննությունների հայտագրման եւ անցկացման ժամկետներն են՝

*1) տվյալ տարվա դեկտեմբերի 15-25–ն ընկած ժամանակահատվածում դիմորդների՝ առավելագույնը երկու միասնական քննությունների առարկաների առցանց հայտագրում,*

*2) տվյալ տարվա հունվարի 15-ից մինչեւ փետրվարի 15-ն ընկած ժամանակահատվածում դիմորդների միասնական քննությունների կազմակերպում:*

Որոշման նախագծի ընդունման արդյունքում կկանոնակարգվեն նաեւ բուհերում նույն մասնագիտության (կրթական ծրագրի) համար ընդունելության միասնական չափանիշների սահմանումը եւ միեւնույն մուտքային պահանջների համապատասխանությունը՝ նկատի ունենալով նաեւ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ տվյալ մասնագիտության համար շրջանավարտին շնորհվող որակավորումը: Դիմորդը, կարեւորելով մասնագիտության ընտրությունը եւ ուսումնասիրելով իր հնարավորությունները, լինելով ավելի մոտիվացված եւ նպատակասլաց, բուհ կընդունվի տվյալ մասնագիտությամբ (կրթական ծրագրով) ընդունելության առնվազն 2 քննությունների հանձնմամբ եւ անհրաժեշտ բազային գիտելիքներով, ինչը կնպաստի բուհերում ուսման որակի բարձրացմանը:

Նախագծով՝ 2022/2023 եւ 2023/2024 ուսումնական տարիների ընդունելության համար ամրագրվել են նաեւ *«Արարատյան բակալավրիատ»*-ի քննությունները՝ հաշվի առնելով ընթացիկ ուսումնական տարվա շրջանավարտների ակնկալիքները: Լրացվել է նաեւ առանց ընդունելության քննության ՀՀ կառավարության հատկացրած պահուստային տեղերի հաշվին բուհ ընդունվելու արտոնություն տվող օլիմպիադաների շարքը՝ Ժաուտիկովյան, Մենդելեեւյան եւ Մեգապոլիսների օլիմպիադաների շարքում ներառելով նաեւ Կիրառական կենսաբանության միջազգային օլիմպիադան:






Աշխարհի հետ

## Հայաստանում կանցկացվի «STARMUS FESTIVAL VI» փառատոնը

ՀՀ նախագահի եւ վարչապետի բարձր հովանու ներքո 2022 թվականի սեպտեմբերին Հայաստանում կանցկացվի *«STARMUS FESTIVAL VI»* փառատոնը, որը կկոչի *«50 տարի Մարսի վրա»* խորագիրը:

Փառատոնը նվիրված է Մարսի վրա առաջին վայրէջքի 50-րդ տարելիցին, որի նպատակով 2020 թվականի հուլիսի 22-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ *«STARMUS UNIVERSE 2007 SL»* կազմակերպության միջեւ ստորագրվել է *«STARMUS FESTIVAL VI 2021»* փառատոնը Հայաստանում կազմակերպելու վերաբերյալ համաձայնագիրը: Փառատոնն առաջին անգամ անցկացվել է Թեներիֆեի աստղաֆիզիկայի համայնքում, 2011 թվականին: Այն ունի տեխնոլոգիական ուղղվածություն եւ միավորում է գիտությունը, կրթությունը, արվեստն ու տեխնոլոգիաները:

*«STARMUS»* փառատոնի տեսլականն է ստեղծել երիտասարդ սերնդի համար նոր ձեւաչափեր եւ հնարավորություններ, ոգեշնչել նոր հմտություններ ձեռք բերելու ցանկությամբ, բարձրացնել գիտելիքի տարածման եւ ուսումնառության մակարդակը՝ դարձնելով այն հասանելի բոլորի համար:

Հայաստանում *«STARMUS FESTIVAL VI. 50 տարի Մարսի վրա»* փառատոնի ծրագրում նախատեսվում են համագումարների ու գիտաժողովների շարք, բազմաբնույթ մշակութային միջոցառումներ, որոնք գիտությունը, արվեստն ու երաժշտությունը յուրովի կներկայացնեն հանրությանը:

Փառատոնին կմասնակցեն առաջատար գիտնականներ, տիեզերագնացներ, հանրահռչակ երաժիշտներ եւ արվեստագետներ, որոնք հանրության հետ կկիսեն գիտելիքների հանդեպ իրենց ձգտումը: Ծրագիրն իր յուրահատկությամբ հնարավորություն կընձեռի խթանելու գիտության ու արվեստի զարգացումը Հայաստանում եւ ստեղծելու հզոր գիտական համայնք՝ համատեղելով տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող արդյունաբերությունը, ուսումնական կենտրոնները եւ գիտական հաստատությունները: Փառատոնի կազմակերպումը կստեղծի նաեւ համագործակցության նոր հնարավորություններ արվեստի եւ գիտության բնագավառներում:

Փառատոնը լավ հնարավորություն է՝ բարձրացնելու Հայաստանի գրավչությունը հազարավոր զբոսաշրջիկների համար եւ ամրապնդելու Հայաստանի դիրքը գիտության ու արվեստի համաշխարհային քարտեզի վրա:

Ակնկալվում է, որ ԱՊՀ տարածքում առաջին անգամ անցկացվող այս փառատոնը Հայաստանում կմեկտեղի տասնյակ աշխարհահռչակ գիտնականներ, եւ նրանց մասնակցությամբ կկազմակերպվի գիտագործնական ու մշակութային աննախադեպ ծրագիր:

Հավելենք, որ *«STARMUS»* փառատոնը Հայաստանում մատչելի եւ հասանելի կլինի ուսանողների, դպրոցականների եւ, առհասարակ, բոլոր քաղաքացիների համար: *«STARMUS»*-ը կմշակի նաեւ անվճար ծրագիր բաց տարածքներում, դպրոցներում եւ համալսարաններում՝ նպատակ ունենալով փառատոնի գործողություններում ներգրավել մինչեւ 100.000 ՀՀ քաղաքացիների: Հայաստանում *«STARMUS»* փառատոնի շրջանակում նախատեսվում է հյուրընկալել 3.000-5.000 այցելու Եվրոպայից, Ռուսաստանից, ԱՄՆ-ից եւ այլ երկրներից:

***Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Ալեքսանդր Սպենդիարյան - 150

# Հայ դասական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը

Հայ դասական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ եւ հասարակական գործիչ Ալեքսանդր Սպենդիարյանը ծնվել է 1871 թվականի նոյեմբերի 1-ին Կախովկա բնակավայրում (այժմ՝ Ուկրաինա, Խերսոնի մարզ):

Նրա մանկությունն ու պատանեկությունը անցել է Ղրիմի հայկական գաղութում, միջնակարգ կրթությունը ստացել է Սիմֆերոպոլի արական գիմնազիայում:

Դեռ վաղ մանկությունից դրսեւորվում են Ալեքսանդրի արտակարգ ընդունակությունները ոչ միայն երաժշտության, այլեւ գրականության եւ նկարչության բնագավառներում: Այնքան ակնառու էին նրա ընդունակությունները նկարչության մեջ, որ նա արժանանում է հռչակավոր ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ուշադրությանը:

Բայց դաշնակահարուհի մոր ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ նրա մեջ ամենից ավելի հիմնավոր է դառնում երաժշտությամբ զբաղվելու ցանկությունը եւ սկսում է նախ դաշնամուր, ապա եւ ջութակ նվագել սովորել:

1890 թվականին ընդունվում է Մոսկվայի կայսերական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, նախ ուսումնասիրում է բնագիտություն, որտեղ դառնում է ուսանողական սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմայստրը:

Ալ.Սպենդիարյանը դեռ աշակերտական տարիներից սկսել է ստեղծագործել: Ուսանողական տարիներին այդ ուղղությամբ նրա փորձերը դառնում են ավելի սիստեմատիկ եւ սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր եւ կոմպոզիտոր Ն.Կլենովսկու ուշադրությանն է արժանանում, ով եւ դառնում է նրա կոմպոզիցիայի առաջին ուսուցիչը:

Մոսկվայում ուսանելու տարիներին Սպենդիարյանը շփվում է հայ եւ ռուս նշանավոր մտավորականների հետ, հաճախում է օպերային ներկայացումներ ու համերգներ, որը եւ անկասկած էական նշանակություն են ունենում նրա երաժշտական ստեղծագործության վրա: Հատկապես կարեւոր էր նրա շփումները բանաստեղծ Ալ.Ծատուրյանի, նկարիչ Վ.Սուրենյանցի հետ:

1894թ. Սպենդիարյանը Ալեքսանդր Ծատուրյանի բանաստեղծության խոսքերով գրում է իր հայտնի *«Այ վարդ»* երգ-ռոմանսը:

Այնուհետեւ նա անդրադառնում է Ռ.Պատկանյանին, Հովհ.Հովհաննիսյանին, Հովհ.Թումանյանին, նաեւ՝ Շիլլեր, Շեքսպիր, Հայնե, իհարկե նաեւ ռուս հեղինակներին՝ Պուշկին, Լերմոնտով, Նեկրասով, Չեխով:

Հատկապես կարեւոր է նկատել, որ Ալ.Սպենդիարյանն առաջինն էր, ոչ միայն հայ իրականության մեջ այլեւ Ռուսաստանում, ով Մ.Գորկու բանաստեղծությունը երաժշտականացրեց: Նրա *«Չկնորսն ու փերին»* հիանալի բալլադը արժանացավ ոչ միայն խոսքերի հեղինակի, այլեւ բալլադի առաջին կատարողի՝ տաղանդավոր երգիչ Ֆ.Շալյապինի բարձր գնահատականին: Իսկ *«Առ Հայաստան»* հերոսական կոնցերտային արիան, գրված ձայնի եւ սիմֆոնիկ նվագախմբի համար (խոսք՝ Հովհաննես Հովհաննիսյանի), առաջին ստեղծագործությունն էր հայ երաժշտության բնագավառում՝ նվիրված 1915 թվականի Մեծ եղեռնին:

1896թ. գարնանը Ալ.Սպենդիարյանը մեկնում է Պետերբուրգ իր ստեղծագործությունների ձեռագրերի կապոցը ձեռքին, մեծ հուզմունքով ներկայացնում է ռուս մեծանուն կոմպոզիտոր Ռիմսկի-Կորսակովին: Արժանանալով կոմպոզիտորի բարձր դրվատանքին՝, ոգեւորված Սպենդիարյանը նոր միայն համոզվում է իր ուժերի մեջ եւ որոշում է ամբողջովին նվիրվել երաժշտական ստեղծագործությանը:

1896 թվականից մինչեւ 1901թ. Սպենդիարյանը իր ուսուցիչ Ռիմսկի-Կորսակովի ղեկավարությամբ ձեռք է բերում հիմնովին եւ անհրաժեշտ գիտելիքներ եւ ձեւավորվում է որպես կոմպոզիտոր:

Ուսման ավարտը պսակվում է *«Կոնցերտային նախերգանք»*-ով, որի առաջին կատարումը (1901թ.) արժանանում է մասնագետների եւ հասարակության ջերմ ընդունելությանը:

1901-1916թթ. Սպենդիարյանն ապրում է Յալթայում՝ ծավալելով բուռն ստեղծագործական, դիրիժորական, մշակութային եւ հասարակական լայն գործունեություն: Ստեղծում է երգչախմբեր հիմնում երաժշտական դպրոցներ, գլխավորում է Ղրիմի Հայկական բարեգործական ընկերությունը:

Իրար հաջորդում են կոմպոզիտորի սիմֆոնիկ եւ վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններ՝ *«Ղրիմի էսքիզները»*, *«Երեք արմավենի»* (ըստ Լերմոնտովի համանուն բանաստեղծության), *«Համերգային վալսը»*, Խ.Աբովյանի *«Վերք Հայաստանի»* վեպի վերջաբանից ներշնչված *«Աղասու գերեզմանը»* վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունը, ինչպես նաեւ բազմաթիվ խմբերգեր, ռոմանսներ, տարբեր գործիքային անսամբլներ:

Սպենդիարյան կոմպոզիտորի ստեղծագործական կյանքում նշանակալից իրադարձություն էր նրա հեղինակային համերգի կազմակերպումը Թիֆլիսում, որի նախածեռնությունը պատկանում էր տեղի հայոց երաժշտական ընկերությանը:

Այդ համերգը նորանոր հնարավորություն ընձեռեց հայ ականավոր կոմպոզիտորին: Դա 1916թ. մարտ ամսին էր. այս հեղինակային համերգը վերածվեց տոնահանդեսի: Դրան նպաստեց եւ այն, որ բազմաթիվ գրախոսականներից եւ հոդվածներից մեկն էլ ժողովրդական բանաստեղծ Հովհաննես Թումանյանինն էր: Ահա ինչ է գրում Մեծ բանաստեղծը այդ համերգի առթիվ. *«... Առաջին անգամն է, որ մեր տաղանդավոր հայրենակիցը հայտնվում է մեր մեջ, առաջին անգամն է դուրս գալիս մեր հասարակության առջեւ եւ առաջին անգամից մենք ողջունում ենք նրա ստեղծագործությունը հրճվանքով ու ծափերով...»*

Թիֆլիսի հասարակության, մտավորականների, արվեստագետների վրա խորը տպավորություն են գործում թե՛ կատարվող ստեղծագործությունները, եւ թե այն, որ դրանց կատարումը ղեկավարում էր ինքը՝ կոմպոզիտորը: Մյուս կողմից այս համերգը առիթ է դառնում, որ Ալ.Սպենդիարյանը մոտիկից ծանոթանում եւ շփվում է հայ մտավորականների, գրողների հետ, հաստատելով նրանց հետ խորը կապեր, որը տարիների ընթացքում ավելի է խորանում:

1916-1924թթ. Սպենդիարյանը ապրում է Սուդակում: Այստեղ կոմպոզիտորը սկսում է աշխատել *«Ալմաստ»* օպերայի վրա (ըստ Հովհ.Թումանյանի *«Թմբկաբերդի առումը»* պոեմի, լիբրետոյի հեղինակ Սոֆիա Պարնոկ):

Հայտնի է, որ 20-րդ դարի առաջին տարիներից սկսած իր ուսուցչի՝ Ռիմսկի-Կորսակովի դրդմամբ, կոմպոզիտորը փնտրում էր համապատասխան նյութ, թեմա՝ ազգային օպերա գրելու համար:

Մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանը Սպենդիարյանին խորհուրդ է տալիս վերցնել Հովհաննես Թումանյանի պոեմներից մեկը: Եվ երբ կոմպոզիտորը Թիֆլիսում առիթ ունեցավ անձամբ ծանոթանալու Թումանյանի հետ, վերջնականապես որոշեց կանգ առնել նրա *«Թմբկաբերդի առումը»* պոեմի վրա եւ անմիջապես տարվեց այդ թեմայով օպերա գրելու գաղափարով:

Ալ.Սպենդիարյանը Թումանյանի հետ քննարկեց պոեմի հիման վրա օպերայի սցենարական պլանը կազմելու, այն դրամայի վերածելու եւ օպերային լիբրետո

դարձնելու հարցերը:

Սպենդիարյանը զբաղվեց երաժշտական նյութերի հավաքագրմամբ, ձեռք բերեց նոտային գրականություն, աշուղների կատարած երգերից ձայնագրեց իրեն անհրաժեշտ հայ ժողովրդական եւ աշուղական երգեր, պարեղանակներ, պարսկական մուղամներ եւ այլն:

Ինչպես Սպենդիարյանն է գրում. *«Ես երազում էի հանդիպել այնպիսի ազնիվ թեմայի, որ կապված լիներ Հայաստանի պատմության հետ, իմ ժողովրդի կյանքի ու հերոսական պայքարի հետ: Այդպիսի երկ էր մեծ պոետի պոեմը, որը իր հայրենասիրական գաղափարով եւ դրամատուրգիական հնարներով անմիջապես հափշտակեց ինձ...»:*

Աշխատանքը *«Ալմաստ»* օպերայի վրա տեւեց մինչեւ 1928թ. կոմպոզիտորի կյանքի վերջը: Այն բեմադրվեց Մոսկվայի, Օդեսայի օպերային թատրոններում: Երեւանում 1933թ. հունվարի 20-ին *«Ալմաստ»* օպերայի բեմադրությամբ բացվեց Երեւանի օպերային թատրոնը, որին հետագայում տրվեց մեր մեծ սիմֆոնիստ-դասական կոմպոզիտորի՝ Ալեքսանդր Սպենդիարյանի անունը: Երեւանի առաջին երաժշտական դպրոցը նույնպես Ալ.Սպենդիարյանի անվամբ է:

Վերադառնանք 1924 թվական:

Հայաստանի իշխանությունների հրավերով Ալեքսանդր Սպենդիարյանը տեղափոխվեց Երեւան՝ գլխավորելու հայրենիքի երաժշտական կյանքը: Նրա նախաձեռնությամբ կոնսերվատորիայում ստեղծվում է նվագախմբային դասարան, սկիզբ է դրվում երաժշտական հրատարակչության կազմակերպման աշխատանքներին:

Անգնահատելի է կոմպոզիտոր-դիրիժորի դերը Հայաստանի առաջին սիմֆոնիկ նվագախմբի հիմնադրման գործում:

Ալ.Սպենդիարյանի երաժշտական ժառանգությունը բաղկացած է 40-ից ավելի երգերից ու ռոմանսներից, սիմֆոնիկ եւ կամերային-գործիքային ստեղծագործություններից, խմբերգերից, ժողովրդական երգերի մշակումներից, ինչպես հայկական, ռուսական, ուկրաինական, այնպես էլ թաթարական եւ վերջապես, նրա ստեղծագործությունների գագաթը՝ *«Ալմաստ»* օպերան է:

Ալեքսանդր Սպենդիարյանն առաջին կոմպոզիտորն էր, ով արժանացավ ՀԽՍՀ ժողովրդական արտիստի եւ Երեւանի կոնսերվատորիայի պատվավոր պրոֆեսորի կոչումներին:

Կոմպոզիտորի աճյունը հանգչում է իր անունը կրող օպերային թատրոնի շենքի պուրակում:

***Դավիթ ՂԱԶԱՐՅԱՆ***
***Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, պրոֆեսոր***

Կարծիք

## Ինչպես վարել...

Ուսուցչութիւնը միայն զբաղմունք կամ պաշտօն չէ, այլ իւրայատուկ կոչում է: Պահանջում է նւիրւածութիւն եւ հմտութիւն: Անձամբ իմ տարիների ուսուցչական փորձից, հանդիպել եմ ուսուցիչների, որ դասարանը սահուն կառավարելու մէջ ունեցել են մեծ անյաջողութիւններ ու սուր բախումներ՝ տնօրէնների հետ:

Ուսուցչական ժողովներում կամ գործակիցներից՝ լսել եմ նրանց գանգատներն ու բացարձակ յուսահատ անզօրութիւնը՝ ինչպես վարելու իրենց անկարգապահ աշակերտների հետ:

Անգամ անկարգ երեխաները կարիք ունեն ուսուցչի կողմից սիրոյ եւ հոգածութեան, երբ ամենաքիչ արժանի են դրան: Մանկավարժը պէտք է դա գիտակցի, որքան էլ որ երեխայի անկարգութեան պահերին դժւար լինի զայրոյթը յաղթահարել:

Կարեւոր է որ դասատուները միշտ կենտրոնանան ենթակայի վարքի, եւ ոչ թէ անձի վրայ, բարկանալով եւ նւաստացնելով նրան իր հասակակիցների առջեւ:

Ուսուցիչը պէտք է կարեւորի այն պահերը, երբ աշակերտը ընդունելի ու դրական վարք է ցուցաբերում, ո՛չ միայն բացասական վարքի դէպքում: Անշուշտ երբեմն արտաքուստ ցոյց եմ տալիս անտեսել անկարգութիւնը, բայց երբ կարելի չէ երկար հանդուրժել, հանդարտօրէն պահանջում եմ աշակերտին դուրս գալ դասարանից: Այնտեղ, անմիջապէս բացատրում, թէ ինչ տարբերակով կարող էր իրեն պահել դասարանում:

Երբ անկարգութիւնները շատ յաճախ են կրկնւում ու զրոյցները անարդիւնք են լինում, կապւում եմ նրա ծնողների հետ: Սա կարելի է պարզ նամակով, կամ *«կարմիր քարթով»* վատ օրերի համար, *«դեղին քարթ»* բաւարար օրերի, եւ *«կանաչ քարթ»* լաւ օրերի համար:

Յետեւեալ յօդւածը որպէս գործիք կամ միջոց եմ առաջարկում վերոյիշեալ պայմաններում գտնւող դասատուների համար:

Ամէն դասատու անպայման հանդիպել է այնպիսի աշակերտների, որոնց գուցէ գտնւում են անառողջ մթնոլորտում տանը, կամ սիրոյ եւ ուշադրութեան պակաս՝ ծնողներից, ինչը դրսեւորւում է դասարանում նման ոչ ցանկալի վարքի ցուցադրութեամբ:

Ես հաւատում եմ, որ նրանք սա անում են այն պատճառով, որ մեզ նայում են որպէս դասատուի, ո՛չ թէ որպէս անհատի:

Դպրոցը սկսւելու առաջին օրից, ես արագ ու դիտաւորեալ կերպով յայտնաբերում եմ այսպիսի աշակերտներին՝ պարզունակ զրոյցի ընթացքում, յատկապէս սփորթի անց ու դարձի, ճաշի ժամերին կամ էլ երբ որ նրանց հանդիպում եմ դրսում, համայնքում:

Այս աշակերտները սկսում են ինձ նայել որպէս մի անձի, ով հետաքրքրւած է իրենց կեանքով, եւ ոչ թէ միայն ուսուցչի: Շատ հազւագիւտ դէպքերում է որ ես աշակերտին ուղարկում եմ տեսուչցի մօտ, հետեւաբար, ուսուցումը եւ սովորելը շարունակւում են առանց ընդհատումների:

Երբ ունենում եմ խանգարող եւ անկարգ աշակերտ, ես առերես ենթադրում եմ որ նա *«պարզապէս մոռացել է դպրոցի օրէնքները»*: Զրոյցի ընթացքում յիշեցնում եմ նման արտայայտութիւն, *«Օհ, կարծես թէ դու մոռացել ես որ արգիլւած է միջանցքներում աղմուկով վազելը»*, կամ էլ ասում եմ. *«Հիմա որ յիշեցիր, վստահ եմ որ այլեւս դա չես կրկնի»*:

Եթէ սա էլ արդիւնք չի տալիս, այն ժամանակ ես առիթներ եմ ստեղծում նրա հետ առանձին պարապելու եւ նոր հմտութիւններ սովորելու համար՝ օրէնքներին հետեւելու ճիշդ ձեւերին:

Մի այլ միջոց էլ կայ, եւ դա այն է, որ դասարանում պահւածքի օրէնքները հարկաւոր է աշակերտների հետ միասին մշակել, ամէն մէկի ստորագրութեամբ եւ այն պատին փակցնելով:

Խորհուրդ եմ տալիս, որ դուք պահպանէք ձեր հաւասարակշռութիւնը դասարանի առջեւ:

Առաջ ընտրէք այն աշակերտին, ով կարիք ունի ամենաշատ օգնութեան եւ հսկողութեան:

Առանձնացրէք նրան իր ընկերներից ու խօսէք հետը անձամբ: *«Առանձնացած խօսելը»* շատ կարեւոր է: Երբեք նրան մի նւաստացրեք իր ընկերների ներկայութեան: Նրան բացատրէք որ իրեն սիրում էք, բայց չէք հանդուրժելու իր բացասական արարքները:

Բացատրէք այն վարւելակերպը (ստանդարտը), որ ընդունւած է դպրոցում: Փոքր երեխայի պարագային, մի փոքր նշան գրատախտակի անկիւնում կամ էլ գլխի շարժումով՝ բաւարար է յիշեցնելու նրան իր վատ արարքի հետեւանքների մասին: Հաւանաբար այսքանը միւսներին կարգի կը հրաւիրէ:

Յաջողութեան երեք պատւիրաններ կան.

- հանդարտութիւն,
- առանձին անհատական խօսակցութիւն,
- դասարանի հետ միասին մշակել օրենքները:

***Արմինէ ԿՈՒՆԴԱԿՋԵԱՆ***

# Ժամանակակից դասարան-լսարան

Արդիական եւ ավանդական պահանջներն ու ակնկալիքներն իրապես տարբերվում են հասարակության մեջ մեր ժամանակակից կրթական համակարգում:

Երեխաների, աշակերտների պահանջները, կեցվածքը, ակնկալիքներն ու նպատակները էապես տարբերվում են: Եթե մի քանի տարի հետ գնանք եւ համեմատական անցկացնենք, ապա կտեսնենք զգալի տարբերություն երեխաների մտածելակերպի, վարվեցողության եւ սպասելիքների մեջ:

Իհարկե, ամեն մի փուլ, շրջան ունի իր յուրահատուկ եւ ժամանակաշունչ առանցքները, պահանջները, որոնք ուսումնասիրվում, վերլուծվում եւ քննարկվում են մանկավարժների, հոգեբանների կողմից:

21-րդ դարի առանձնահատկությունները, մարտահրավերները նոր դրական եւ բացասական երեւույթներով ողողեցին ինչպես հասարակությունը, այնպես էլ՝ կրթական համակարգը: Հարկ է նշել, որ հասարակությունը ոչ մի նորարարություն հեշտ չի ընկալում եւ չի ընդունում, որի պատճառով էլ տարակարծություններ են առաջանում, որոնք երբեմն էլ ուղեկցվում են անհանդուրժողականությամբ, ագրեսիայով, ինչպես նաեւ կոնֆլիկտներով:

Իհարկե, գիտելիքը կարեւոր է յուրաքանչյուրի համար, սակայն կյանքը ցույց է տալիս, որ այն ավանդական մեթոդներով մատուցել արդեն իսկ անհնարին է, քանզի փոխվել են ուսուցիչ-աշակերտ հարաբերությունը, փոխվել է աշակերտի վերաբերմունքը ուսուցչին, որն էլ ենթադրում է, որ պետք է փոխվի նաեւ ուսուցչի վերաբերմունքը աշակերտի նկատմամբ:

Վերջին ժամանակներս ուսումնասիրել ենք արտասահմանյան բազմաթիվ երկրների դպրոցներում աշխատող մանկավարժ-հոգեբանների վերլուծությունները: Դրանց ավելացրել ենք նաեւ մեր դիտարկումները եւ վերլուծական աշխատանքի արդյունքում հանգել ենք այն մտքին, որ այսօր դպրոցներում առաջնահերթ պետք է աշխատեն մանկավարժներ, որոնք օժտված են հոգեբանի հատկանիշներով եւ գիտելիքներով: Կցանկանայի նշել, որ լավ կլիներ, որ նրանք կեցվածքով լինեն խարիզմատիկ, որպեսզի կարողանան հոգեբանական նուրբ եւ ճկուն մանրաթելերով հասնեն ցանկացած աշակերտի հոգուն, տալով վերջիններիս մտածելու եւ ենթադրելու, ինչպես նաեւ երեւակայելու հնարավորություն:

Անդրադառնանք խարիզմային եւ ինչ է նշանակում խարիզմատիկ ուսուցիչ:

**Ի՞նչ է խարիզման**

Երբեմն որեւէ մարդուն բնութագրելիս լսում ենք, որ նա խարիզմատիկ մարդ է: Վստահ եմ, որ շատերը հասկանում են, թե ինչ է նշանակում լինել խարիզմատիկ, սակայն չեն կարող թվարկել բոլոր կարեւոր տարրերը, որոնց ամբողջությունն ապահովում է խարիզման: Ցանկացած բնագավառի աշխատողին այն տանում է բացառիկ հաջողության, անկախ այն բանից, մենք խոսում ենք քաղաքական գործչի, գործարարի, բժշկի, թե մանկավարժի մասին:

Եկե՛ք պատկերացնենք մի մեծ լսարան կամ դասարան, որտեղ հավաքված են հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ, տարբեր մտածելակերպ ունեցող, տարբեր վերլուծական հատկություններ ունեցող, երեւակայող եւ չերեւակայող անհատներ:

Թե ինչպես ուսուցիչը կմտնի դասարան, ինչպես իրեն կդրսեւորի, առաջին անգամ ինչպիսի՝ տպավորություն կթողնի, դրանից է կախված ամբողջ հետագա աշխատանքը: Ընդհանրապես կապ չունի՝ քանի աշակերտ է նստած ուսուցչի առջեւ՝ տաս, քսան, թե հարյուր, միեւնույնն է, ուսուցիչն ունի մեկ հնարավորություն՝ տպավորել, ներգրավել, առաջնորդել, սովորեցնել եւ զարգացնել երեխայի մտածելակերպը: Խորիզմային վերաբերող երեք վարքագծային կետերին կցանկանանք անդրադառնալ մեկ առ մեկ:

**1. Ներկայություն**

Խոսքը միայն ֆիզիկական ներկայության մասին չէ: Ժամանակակից կյանքում, աշակերտը բազմատարր հասարակության մի մասնիկն է: Ելելով այդ իրողությունից՝ նախ եւ առաջ ուսուցիչը պետք է կարողանա տեսնել, լսել եւ զգալով, թե ինչպիսի ֆիզիկական եւ հոգեկան վիճակում է տվյալ պահին աշակերտը, պետք է շոշափի աշակերտի զարկերակը եւ միայն դրանից հետո կարողանա նրան ներգրավել գործընթացի մեջ: Երբեմն որոշ ուսուցիչներ բացարձակ ուշադրություն չեն դարձնում, թե ինչ ֆիզիկական եւ հոգեկան վիճակի մեջ են աշակերտները: Հաշվի չեն առնում տարիքային առանձնահատկությունները, որոնցից բխում են որոշակի կոմպլեքսներ եւ հոգաբանական խնդիրներ: Արդյո՞ք նրանց այդ պահին շատ կարեւոր, հուզող կենսական անհրաժեշտության հարցեր կան, թե՞ ոչ: Պետք է բաց չթողնել տպավորություն թողնելու արվեստը, քանի որ, ինչպես հոգեբաններն են ապացուցում, դիմացինին պետք է ընդամենը մի քանի վայրկյան, որպիսի ինտուիտիվ մակարդակով լրիվ զգա ձեր էությունը, թեպետ այդ պահին նա չի էլ կարողանա բառերով բացատրել դրական եւ բացասական զգացողությունները:

Ավելի ստույգ, ուսուցիչը պիտի ունենա կարողություն 2-5 վայրկյանում գրավել դիմացինի ուշադրությունը, համապատասխան մթնոլորտ ապահովի աշակերտի համար, եւ նոր միայն նրան առաջնորդի եւ ղեկավարի դասարանում: Եթե ուսուցիչը կարողանում է դա ապահովել, ապա աշակերտը կունենա լսելու, ընկալելու, վերլուծելու, պատկերացնելու, երեւակայելու արդյունավետ հնարավորություն, որը կտա նրան նաեւ ինքնարտահայտվելու եւ սեփական դիրքորոշումը արտահայտելու կարողություն եւ հմտություն: Հոգեբանական տրամադրվածությունն ամենակարեւորն է:

Այդ կապակցությամբ ցանկանում եմ բերել մի հետաքրքիր օրինակ: 1955 թվականին, մի հրաշալի արեւոտ օր Նյու Յորքում սարսափելի խցանումներ էին եւ մայթերը լցված էին այս ու այն կողմ շտապող մարդկանցով: Նորմա Ջին Բեյքեր անունով մի գեղեցկուհի, ցանկանում էր մի բան ապացուցել, մի դիրքորոշում: Իր լուսանկարչի հետ շատ արագ քայլերով ներխուժեց կառամատույց,աննկատ անցավ Ա կետից մինչեւ Բ կետ: Մի քանի րոպե դադար տվեց: Կառամատույցը լի էր մարդկանցով, որեւէ մեկը չնկատեց, որ իրենց կողքին միլիոնների կուռքն էր քայլում՝ Մերիլին Մոնրոն: Դադարից վայրկյաններ անց, հապաղելով մի քանի վայրկյան, ոչինչ չփոխելով իր հագուստի, տեսքի եւ կերպարի մեջ, նույն արտաքինով Նորմա Ջինը վերափոխվեց որպես Մերիլին Մոնրո, եւ Բ կետից Ա կետ քայլեց աշխարհահռչակ դերասանուհին՝ փոխելով ընդամենը ներքին հոգեբանությունը: Կառամատույցի շարժը կանգ առավ, անցորդներն այլեւս չէին շտապում եւ բոլորն անխտիր, բարձր բացականչելով, փորձում էին նկարվել հայտնի գեղեցկուհու հետ: Ինչ էր ուզում նա ապացուցել՝ ճանաչված կամ չճանաչված, հայտնի կամ ոչ հայտնի, ցանկալի կամ ոչ ցանկալի լինելու վարպետությունը գտնվում է մարդու հոգաբանության եւ ինքնադրսեւորման եւ ինքնամատուցման մեջ: Կարեւորելով հոգաբանությունը, ինքնավստահությունը՝ նա ակնթարթների ընթացքում դարձավ կախարդական եւ ձգող, ով կարողացավ դեպի իրեն գրավել տարածքում գտնվող բոլոր մարդկանց ուշադրությունը:

Կարեւոր հարց է՝ արդյոք մարդը ծնվում է խարիզմատիկ, թե նա այն ձեռք է բերում տարիների ընթացքում: Խարիզման տալիս է հնարավորություն, որ մարդիկ վստահեն եւ սիրեն քեզ, եւ տալիս է հնարավորություն, որ դու առաջնորդես նրանց: Արդյո՞ք հեշտ է ժամանակակից կյանքում ենթարկեցնել մարդկանց, աշակերտներին: Կարծում եմ, որ ուսուցչի համար առաջնորդ լինելը ծայրահեղ անհրաժեշտություն է, քանզի աշակերտը կարող է հասկանալ, ուսուցիչն ունի առաջնորդի հատկանիշներ եւ արդյոք նա թույլ կտա եւ կցանկանա, որպեսզի ուսուցիչն առաջնորդի իրեն: Այսպիսի վերաբերմունքը հնարավորություն է տալիս ուսուցչին, որ նա աշակերտին անել տա այն, ինչ որ ինքն է ցանկանում եւ կարեւորում: Խարիզման հատուկ պահվածք է, արտահայտման ձեւ:

Լավ կլիներ, որ ուսուցիչներն ունենային հմտություն՝ ցուցաբերելու խարիզմատիկ հատկանիշներ: Ներկայությունը դասասենյակում ամենակարեւորն է:

**2. Ուժը**

Վիլյամ Գլադստոնը 1886 թվականին պատրաստվում էր Մեծ Բրիտանիայի վարչապետի պաշտոնի ընտրությանը, որին մասնակցում էր նաեւ Բենջամեն Դեզրայելին: Դա Վիկտորյան դարաշրջանն էր. ստանալով այդ պաշտոնը՝ դու ստանում էիր հնարավորություն՝ ղեկավարել աշխարհի կեսը: Ընտրություններից մեկ շաբաթ առաջ նրանք տարբեր օրերի հրավիրվեցին ընթրելու միեւնույն անձնավորության հետ: Ճաշելով Գլադստոնի հետ՝ նա իր տպավորությունը կիսեց այն մասին, որ այդ օրը ինքը ճաշել էր աշխարհի ամենախելացի մարդու հետ, որը գերել էր նրան իր գիտելիքներով եւ իմացությամբ: Հաջորդ օրն ընթրելով Դեզրայելի հետ՝ նա հայտարարեց, որ իրեն երջանիկ է զգում, քանի որ իր հյուրը ներշնչանքի աղբյուր էր դարձել իր համար, որի շնորհիվ ինքը վերարաժեքավորել էր իրեն, որ ինքն բավականին խելացի մարդ է: Դեզարյելին ազդել էր նրա գիտակցության վրա, կարողացել էր ունկնդրել, ներշնչել եւ վստահեցնել իր դիմացինին, որ նա շատ խելացի է: Արդյունքում, չնայած բոլոր կանխատեսումներին, հաղթող ճանաչվեց Դեզրայելին, քանի որ նա ընտրողին ստիպեց կարեւորել ինքն իրեն եւ տվեց հնարավորություն հավատալ իր ուժերին եւ իրեն հարմարավետ զգալ դրանից:

Ցանկալի է, որ ուսուցիչը տպավորություն թողնի աշակերտների վրա, իսկ եթե նա կարողանա աշակերտին համոզել եւ հավաստիացնել, որ ինքը տպավորված է վերջինիս ցուցաբերած գիտելիքներով եւ կարողությունով, ապա այդպիսի հարաբերություններից կշահեն երկու կողմերը: Ուսուցիչը կկարողանա մատուցել նյութը, կկարողանա դասարանում ապահովել ունկնդրման եւ ընկալման համապատասխան մթնոլորտ, կկարողանա կատարել իր դիմաց դրված առաջադրանը, կզարգացնի աշակերտի մոտ անալիտիկ մտածելությունը, իսկ աշակերտը կսիրի առարկան, կունանա հնարավորություն հասկանալու, ընկալելու, ինքնադրսեւորվելու:

Ինչ է ակնկալում աշակերտը ստանալ դպրոցում: Միգուցե աշակերտը մի բաց դաշտ է, որը գտնվում է ուսումնասիրության փուլում, դասապրոցեսի ընթացքում դիտարկում է, վերլուծում է եւ փորձում է հասկանալ ինչն է իրեն դուր գալիս, ինչն է իրեն գրավում, ինչը կուզեր ինքն ընդօրինակել եւ հակառակը՝ ինչից կուզեր խուսափել:

Ուսուցչի ուժը շատ կարեւոր է դասապրոցեսի ժամանակ, այն աշակերտին կտա հնարավորություն իրեն նույնպես ապահով, ուժեղ եւ անվտանգ զգալու: Նա կփորձի ուսուցչի արտաքինի, նրա գաղափարների եւ վարվեցողության մեջ ուժ գտնել: Միաժամանակ, կփորձի ուժ ձեռք բերել ուսուցչի վարքագծից: Ուսուցիչը պետք է կարեւորի մարմնի լեզուն: նա պետք է կարողանա իր շարժումներով, մարմնի կեցվածքով, դեմքի միմիկայով ակնածանք ներշնչել իր նկատմամբ, գրավել աշակերտի ողջ ուշադրությունը: Ուսուցիչը պետք է կարողանա ամաչկոտությունը հանել աշակերտի միջից, քանի որ ամաչկոտությունն է, որ սահմանափակում է աշակերտին իր պահվածքի եւ արտահատվելու մեջ: Ամաչկոտ աշակերտը չի կարողանա ինքնադրսեւորվել, իր ողջ հմայքն ու կարողությունները ցուցադրել, ուստի լավ եւ ուժեղ ուսուցիչը պետք է կարողանա իր այդ ուժը փոխանցել աշակերտին այնպես, որ վերջինս նույնիսկ չհասկանա, որ դա իրեն փոխանցվել է եւ պատկերացնի, որ դա իրեն ի վերուստ տրված է: Ինքնավստահ եւ ոչ ամաչկոտ, չկոմպլեքսավորված աշակերտը ուսուցչի բարձր վարպետության եւ աշխատանքի արդյունքն է, եւ, ի վերջո, ուսուցչի հաղթանակը:

**3. Ջերմությունը**

Շատ կարեւոր է աշակերտի նկատմամբ ջերմ վերաբերմունքը: Այստեղ եւս կարեւոր է մարմնի լեզուն, որովհետեւ քեզանից անկախ մարմնիդ շարժումները կմատնեն քո իրական մտադրությունն ու զգացողությունը, մարմինդ թույլ չի տա քեզ ստել եւ կեղծել, եւ աշակերտը, երեխան դա զգում է շատ հստակ եւ առարկայական, ենթագիտակցական մակարդակով:

Ջերմությունը պետք է գա սրտից, զգացմունքներից, այն չի կարող լինել շինծու, արհեստական: Աչքերը հոգու դարպասներն են: Կարեւորում եմ, որ ուսուցիչն ու աշակերտը կարողանան նայել միմյանց աչքերի մեջ, եւ աչքերի հայացքը շատ կարեւոր է, այն կարող է արտացոլել եւ ցուցաբերել բարություն, չարություն, վախ, հրճվանք, զարմանք, սեր եւ այլն: Ուսուցիչը պետք է ամեն դասի սկզբում ստեղծի ջերմության եւ անկեղծության մթնոլորտ դասարանում, որովհետեւ դա նրան հնարավորություն կտա աշակերտի հետ գտնվելու նույն հարթության վրա: Աշակերտը պետք է հավատա, որ ուսուցչի համար ինքն ամենակարեւորն է, որի իր մտքերը ուսուցչին շատ են հետաքրքրում եւ ուսուցիչը նրան ընդունում է իր անհատական դաշտում: Երբեք չպետք է ուսուցիչը աշակերտի պատասխանելու ընթացքում այլ թեմաների մասին մտածի, որովհետեւ դա անմիջապես արտահայտվելու է նրա դեմքին եւ աշակերտը մտածելու է, որ այդ դիմախաղը կամ դեմքի արտահայտությունը իր պատասխանելու հետ է կապված: Դու պիտի կարողանաս աշակերտին գրավել ոչ միայն ջերմության արտահայտությամբ, այլեւ իրականում այդ ջերմությամբ պարուրես նրան, ստիպես մտածել, որ այդ պահին իրենց ավելի կարեւոր եւ թանկ արարած չկա քեզ համար, եւ որ իր մտքերը քեզ համար շատ եւ շատ կարեւորեն են:

Եկե՛ք հաշվի առնենք նաեւ այն առանձնահատկությունը, որ օտար լեզուն աշակերտին հեշտ չի տրվում, որ այն նրա մայրենի լեզուն չէ, եւ, որ օտար լեզուն բավականին դժվար է ընկալել եւ հաղթահարել, քանի որ պարունակում է ոչ միայն լեզու եւ գրականություն, այլ նաեւ պատմություն եւ աշխարհագրություն, տրամաբանություն եւ կենսաբանություն եւ այլ շերտեր, այսինքն՝ օտար լեզուն մի վիթխարի համալիր ծրագիր է, որի հաջող իրականացումը նախ եւ առաջ կախված է ուսուցչի գործոնից եւ նրանց, թե ինչպես ուսուցիչը կկարողանա այդ հարթակ տեղափոխել աշակերտին, որը կամավոր կցանկանա հաղթահարել եւ հաջողել:

Ցանկացած դարաշրջան ունի իր մարտահրավերները, խնդիրներն ու լուծումները: 21-րդ դարի տեխնոլոգիական աշխարհը իր հետ բերում է ֆանտաստիկ հարմարավետություններ, եւ միեւնույն ժամանակ, շատ մեծ դժվարություններ: Մենք պետք է ընդունենք այն իրողությունը, որ երեխան իր կյանքն նույնիսկ մեկ ժամ արդեն չի կարող պատկերացնել առանց համացանցի, ունի հոգեբանական կախում դրանից, սակայն համացանցն անկառավարելի մի աշխարհ է, որտեղ ոչ ծնողը, ոչ ուսուցիչը եւ ոչ էլ հասարակությունը չեն կարող կառավարել եւ վերահսկել երեխային: Այսպիսի ժամանակաշրջանում, երեխաներն էլ ավելի դյուրագրգիռ են, երբեմն անհանդուժող, շատ հաճախ զգացմունքային, առանձնահատուկ եւ յուրահատուկ: Ուստի եւ ցանկացած աշակերտ մի ուրույն անհատականություն է՝ իր առավելություններով եւ թերություններով: Շատ կարեւոր է ուսուցչի ինքնակատարելագործումը, որպիսի նա կարողանա համընթաց քայլել դարաշրջանի հետ, կարողանա ուսումնասիրել նոր մեթոդներ, ցանկություն ունենա մասնակցելու նորարարական նախագծերին, նախաձեռնություններին, հատկապես ուսումնասիրի ժամանակակից անհատների, դեռահասների, երեխաների հոգեբանությունն ու վարքագիծը: Չպետք է իր համար ստեղծի շրջանակներ, կարմիր գծեր եւ ցանկացած աշակերտի փորձի տեղավորել դրանց մեջ: Պետք է նայել այդ հորինված չափորոշիչներից դուրս՝ որպես ուրույն անհատականություն:

Որպես եզրափակում՝ ցանկանում ենք նշել, որ խարիզմատիկ ուսուցիչը, այսօրվա ժամանակակից կրթահամակարգի եւ կրթական պրոցեսի կարեւորագույն դերակատարն է եւ միեւնույն ժամանակ, դրա շարժիչ ուժն ու հիմնական շահառուն, որը պետք է իր ներկայությամբ ուժ եւ ջերմություն փոխանցի աշակերտին, ներգրավի այդ պրոցեսի մեջ՝ զարմանահրաշ գիտելիքների անծայրածիր աշխարհի մեջ, եւ դրանով նպաստի 21-րդ դարին համահունչ եւ պատրաստ քաղաքացու, անհատի եւ մարդու ձեւավորմանը:

***Ռուզաննա ՓԻԼԻՊՈՍՅԱՆ***
***Երեւանի Եղիշե Չարենցի անվան հ. 67***
***դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչուհի***

Վերհուշ

# Պըլը-Պուղին եւ ... ես

Թող արտառոց չթվա նման վերնագիրը: Ահա թե ինչու, 44-օրյա անիծյալ պատերազմից ավերված իմ բնակարանում անվնաս մնացած եզակի իրերի շարքում ամենատոկունը մեր երկուսի դիմանկարներն էին՝ Պըլը-Պուղու եւ իմ: Պատերազմի հենց առաջին շաբաթը՝ հոկտեմբերի 4-ին, թշնամու՝ Ստեփանակերտի վրա թափած սաստիկ հրթիռակոծությունից ու հրետակոծությունից մեր շենքի մի հատվածը, ուր էր նաեւ իմ բնակարանը, լրիվությամբ ավերվել է: Եվ հրաշքով փրկված այդ երկու նկարներն ամիսներ շարունակ մնացել են անդուռ,անպատուհան, անտանիք ավերակներում՝ անձրեւից,քամուց, արեւից՝ անպաշտպան: Բայց, չնայած այդ ամենին, ասես, հրաշքով՝ շնչավորված, ապավինելով իրենց ներքին ուժին , երկուսն էլ չեն գունաթափվել, մնացել են իրենց նախկին շենշող տեսքով:

Պատերազմի ընթացքում մոտակա շենքերից մեկի նկուղում ապաստանածիս համար անհնար էր անգամ մուտքի աստիճաններով բարձրանալ՝ ավերակված տուն կոչվածի մեջ որեւէ բան փրկելու հույսով:Միայն հրադադարից հետո, ձմեռնամուտին, հնարավոր եղավ բորբոսնապատ,իրենց խեղճացած տեսքով սիրտ կսկծացնող գրքերս ու մի քամի անդամահատված իրեր հանել տան ավերակներից:

Մեր երկուսի դիմանկարները խաղաղ ու բարի ժամանակներում, հավուր պատշաճի, բնականաբար, զարդարում էին իմ տան պատերը: Ուրախությամբ նշեմ, որ դրանք մշտապես գրավում էին իմ հյուրերի ուշադրությունը: Եվ ես էլ սիրով ներկայացնում էի եւ նկարիչներին, եւ ինձ մոտ այդ գործերի հայտնվելու պատմությունը: Այդ ժամանակ էլ ինձ համար խորհրդանշական էր, որ երկու նկարիչները կրում էին միեւնույն՝ Գաբրիելյան ազգանունը...

Թող հանճարեղ առակախոսը ինձ ների, բայց պետք է սկսեմ իմ դիմանկարի պատմությունից, քանզի այն առաջինն է հայտնվել իմ կյանքում: Հատկանշական է,որ կտավը ստեղծվել է արցախյան շարժման առաջին տարիներին, համարյա թե՝ պատերազմի նախաշեմին: Հիշում եմ Սամվել Գաբրիելյան նկարչի արվեստանոցը գտնվում էր Ստեփանակերտի կենտրոնական շուկայի հանդիպակաց շենքի առաջին հարկում՝ նախկին *«Մանկական աշխարհ»* հանրախանութի տեղը: Տողերիս հեղինակ նորաբաց հեռուստատեսության աշխատողս հաղորդում էի ուզում պատրաստել այդ ժամանակ իսկ իր ուրույն արվեստով առանձնացող նկարչի մասին, եւ նա համաձայնեց՝ շատ հետաքրքիր փոխադարձ առաջարկով՝ վրձնել իմ դիմանկարը:

Առաջին պահին տարօրինակ էր նման առաջարկը, քանզի, իմ կարծիքով, դա մեծահարուստների, ինքնասիրահարված նարցիսների մենաշնորհն էր՝ ժամերով կեցվածք ընդունել՝ սեփական դիմանկարն ունենալու համար: Բայց ժամանակ անց՝ համաձայնեցի, այն էլ նկարչի տիկնոջ, անվանի մանկավարժ, իր ամուսնու ամեն մի ձեռնարկմանը սատարող՝ Անժելայի հորդորով: Այդպես ամբողջացավ մտահղացումը, իսկ մեր աշխարհում արդեն որոտում էին թշնամու *«Ալազանները»*, որոնք, ի դեպ, նաեւ պայթել են հենց արվեստանոցի մերձակայքում՝ վնասելով դռներն ու պատուհանները, նկարները:

Պատերազմից հետո Սամվել Գաբրիելյանի արվեստանոցի տեղը փոխվեց, բարեբախտաբար, նա կարողացավ փրկել իր գործերի մեծ մասը,այդ շարքում նաեւ իմ դիմանկարը: Իմ բնակարանամուտի շնորհավորանքը եղավ նկարչի նվերը, եւ ես ամեն անգամ մտովի շնորհակալություն էի հայտնում նկարչին ու իր կնոջը՝ տաղանդավոր արվեստագետի մեկ գործն ունենալու հպարտությամբ: Սամվել Գաբրիելյանը ԼՂՀ վաստակավոր նկարիչ էր, ԽՍՀՄ նկարիչների միության անդամ,1993-ից մինչ 2014-ը բազմաթիվ խմբային եւ անհատական ցուցահանդեսներ է ունեցել ԱՄՆ-ում, Անգլիայում, Իտալիայում, Գերմանիայում, Հունաստանում,Կիպրոսում,Ֆինլանդիայում, Եգիպտոսում, Լիբանանում, ԱՄԷ-ում, Բրազիլիայում եւ այլ երկրներում: Նրա ստեղծագործությունները գտնվում են ՀՀ ազգային պատկերասրահում, ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ նկարիչների միության ֆոնդերում,արտասահմանյան մասնավոր հավաքածուներում: Նկարիչը 2013-ին Շուշիում բացված Կերպարվեստի պետական թանգարանի նվիրատուներից էր...Ափսոս, վաղ հեռացավ կյանքից... 2015-ին, ընդամենը 64 տարեկան էր...

...Պըլը –Պուղին,իհարկե, պատմական դեմք է, սակայն նրա դիմանկարը կերտելու համար անհարժեշտ էր բնօրինակի առկայությունը, ինչն իր պարագայում անհնար էր: Մեր սիրելի առակախոսն ապրել է 18-րդ դարում եւ, բնականաբար, իր դիմանկարն ստեղծելու համար նկարիչների երեւակայությանը լայն հորիզոններ է ուրվագծել,որոնք այնքան տեսանելի են իր թողած բանահյուսական նմուշներում: Ասել է թե՝ շինական Պողոսի դիմագծերն այլաբանորեն թաքնված են իր խոսքերում:

Հետաքրքիր է, որ նրա կենսագրական սուղ տեղեկությունները չեն վանել գրականագետ-ազգագրագետներին, գրողներին եւ ստեղծվել է պուղիագիտությունը՝ արժեքավոր աշխատություններով, նրա անվան հետ կապվող զվարճախոսությունների ժողովածուներով: Ժամանակի ամենակենսունակ երակը, բնականաբար, ժողովրդի հիշողությունն է,որի ամենավառ արտահայտությունն է բանահյուսությունը՝ իբրեւ նրա՝ երազանքների, կենցաղի, սովորությունների, պաշտամունքի ամփոփագիր: Պուղուն վերագրվող զվարճախոսությունները, որպես բանահյուսական գոհարներ՝ անգերազանց են,ունակ՝ ժամանակներն իրար կապել:Իրենց խորքում ունենալով խրատական շեշտեր, դրանք առանձնանում են ոչ միայն կյանքի վայրվերումներում զավեշտալի երեւույթների ձաղկման, այլեւ ինքնախարազանի, ինքնաքննության իմաստնությամբ ելք գտնելու արվեստով: Եվ այդ մեծ արվեստը նրա անունից, գործունեությունից արտածվող զվարթությունն է,ինչն էլ նրան պահում է ժամանակներից անդին...

Եվ հենց այս հանգամանքն է ոգեւորել նրա դիմանկարին անդրադարձող նկարիչներին՝ հուշելով, թե ինչ կերպար կունենար հանճարեղ ծաղրածուն:

Թերեւս Ռուբեն Գաբրիելյան նկարիչն էլ չի կարողացել զսպել Պուղուն պատկերելու գաղթակղությունը: Եվ դա իրականացվել է մի քանի վարիացիաներով,որոնցից յուրաքանչյուրն էլ յուրովի է մեկնաբանում միջնադարյան առակախոսի էությունը,նրա խառնվածի որակները, որոնք էլ իրենց հերթին հնարավորություն են տալիս դիտողին ամբողջացնել իր մտապատկերում ունեցած Պուղու կերպարը: Այս ամենի մասին իմ հիացական տպավորությունն եմ ներկայացրել նկարչին՝ իր երեւանյան բնակարանում՝ հարցազրույցին զուգընթաց: Արմատներով Ռուբեն Գաբրիելյանը Արցախի Քարագլուխ գյուղից է, ծնվել, հասակ է առել Բաքվում: Գերազանցությամբ ավարտելով տեղի գեղարվեստի ուսումնարանը՝ բարձրագույն կրթությունը շարունակել է Լենինգրադի Իլյա Ռեպինի անվան գեղարվեստի, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտում (ներկայումս՝ Սանկտ-Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիա): Դեռեւս ուսանելու տարիներին արժանանացել է ռուս անվանի արվեստագետների բարձր գնահատականին: Առաջ անցնելով ասենք, որ նա անհատական ցուցահանդեսներ է ունեցել Չելյաբինսկում (ուր ապրել է երկար տարիներ), Մոսկվայում, Երեւանում, Ստեփանակերտում, Մոնրեալում, Լոս-Անջելեսում, Սան Դիեգոյում:

Գործերի հիմնական մոտիվը Արցախն էր,ազատության եւ ազգային զարթոնքի թեման: Նրա աշխատանքներից կան ՀՀ ազգային պատկերասրահում, ՌԴ քաղաքների թանգարաններում ու պատկերասրահում: Իր համար ամենամեծ պատիվը Արցախում ճանաչվել էր, եւ պատահական չէ, որ ունեցած գործեր նվիրել է Ստեփանակերտի պատկերասրահին, իսկ Շուշիի Կերպարվեստի թանգարանի բաժինը ամենահարուստն էր՝ 23 նկար...

Անվանի նկարչուհի էր նաեւ իր տիկինը՝ առաջացած տարիքում էլ գեղեցիկ դիմագծերը պահած Քնարիկ Հովհաննիսյանը:Արցախյան շարժման նախաշեմին՝ 1986-ին Ռուբեն Գաբրիելյանը Բաքվից տեղափոխվել է Երեւան,ուր մինչ այդ բնակություն էին հաստատել կինն ու զավակները: Դրան նախորդել է իր՝ հայ մտավորականի հանդեպ հերթական սպառնալիքը՝ բնակարանի հրկիզման փորձը Բաքվում:

Երեւանում ապրում էին համեստ,ավելի ճիշտ՝ դժվարին կենցաղով:Եվ այդ դժվարություններն այնքան անհամատեղելի էին նկարներից հառնող նրա պատկերած արցախցիներին, որոնք ոչ միայն ազնվականի հագ ու կապ ունեին, այլեւ հայացք ու տրամադրություն: Որքան մեծ էր իմ ուրախությունը,երբ մեր հանդիպումից շատ չանցած ես ստացա Պըլը -Պուղու նկարը՝ համեմված արցախյան շքեղ կոլորիտով: Ազգային գորգարվեստի նախշերով զարդարուն խուրջինով ծածկված էշի համետին արքայավայել բազմած Պուղին՝ իմաստնորեն մատը տնկած հերթական առակն ու զվարճախոսությունն է ներկայացնում՝ բաց դարպասով մտնելով գյուղամեջ, ուր տարեցները՝ համբերանքի չիբուխով փիքր են անում աշխարհի անցուդարձի շուրջ:

Նկարը իր գունային գամմայով այնքան առինքնող է, սիրտ ջերմացնող, որ թվում է այդ աշխարհում ապրել են միայն երջանիկ մարդիկ:

Սա նկարչի երազանքն էր,որ իր հայրենի Արցախը դրախտավայր մնա՝ լի երջանկությամբ ու բարօրությամբ:Տխուր դիպվածով՝ կնոջ՝ Քնարիկի մահվան քառասունքը դեռ չլրացած, Ռուբեն Գաբրիելյանը նույնպես 2015-ին հրաժեշտ է տվել երկրային կյանքին:

..Եվ հիմա արցախյան երրորդ պատերազմը ցմրուր ապրածի՝ ջրում խեղդվողի եւ ծղոտից բռնողի ներքնատեսությամբ պատահական չեմ համարում երկու Գաբրիելյանների պատկերած Պուղու եւ իմ դիմանկարների անվնաս մնալը՝ իբրեւ եւս մեկ ապացույց՝ արհավիրքներին դիմակայելու մեր ուժի:

Շատ ուսումնասիրողներ Պուղու ծննդավայրը համարել են Շուշին, հայոց բերդաքաղաքը, որն այնպես ցավագնորեն այսօր էլ դարձել է թուրքի ոտքի կոխան:Տասնամյակներով աչքը ճամփին հարազատի պես սպասել է իր ազատությանը եւ, հազիվ շունչ քաշել, բայց կրկին գերության մեջ հայտնվել:

Ինչ կասեր խոսքաշեն ու իր գնահատականներում անխնա Պուղին մեր ժամանակների մելիքշահնազարների մասին...Ախր, ինքը հենց Շուշին քոչվոր ու իր ծագումով անհայտ ոչնչությանը նվիրող հերոսական Արցախի պատմության խարանի՝ Վարանդայի եղբայրասպան մելիքի մոտ էր ծառայում: Նա անողոք քննադատում եւ ծաղրի էր ենթարկում մելիքի պակասությունները, առանց հետեւանքների մասին մտածելու:

*«Իմաստուն, զվարճախոս Պողոսը՝ Պուղին, որին ժողովուրդը սիրում էր արդարացիության, պարզության, շիտակության,բարության եւ խորը իմացությունների համար, ծառայության մեջ է մտնում ժամանակի ծախու բռնավորներից մեկի՝ մելիք Շահնազարի մոտ: Եվ ահա այս դրամատիզմն է,որ կա Պուղու բոլոր զվարճախոսություններում,առակների ու զրույցների ենթատեքստում՝ իբրեւ նրա մտածողության հիմք: Սրախոսելու, կատակելու, զվարճախոսելու եւ առակախոսելու բացառիկ շնորհներն էին, որ, անշուշտ, ռամիկ Պողոսի համար ճանապարհ բացեցին դեպի մելիքի ապարանքը,սակայն նա, ծառայելով մելիքի մոտ, չծառայեց նրան, այլ շարունակեց մնալ, ինչպես մեծ գուսանն է ասում, «խալխի նոքար», «ժողովրդի նվիրյալ»,-* կարդում ենք գրականագետ Վարդան Հակոբյանի՝ Պուղուն նվիրված հոդվածում:

Եվ դա էր պատճառը, որ ժողովուրդը այդ խելոք, սրամիտ եւ համարձակ մարդուն սիրելով հանդերձ՝ *«պըել»*, այսինքն գիժ անունն է տվել: Ռաֆֆին դավաճան մելիքին համարել է Ղարաբաղի կործանիչ եւ ահա տեսեք մեծ գրողի կանխատեսման չհեռացած վտանգն ու մեր թրատված Արցախը:

Վահագն Դավթյանի տասնամյակներ առաջ երեւացած խոսքը,նույնպես, մեր ժամանակների համար է. *«Արցախցու առնական տխուր դեմքն այսօր ավելի քան երբեք, կարիք ունի ժպիտի: Այն ժողովուրդը, որ տառապանքի մեջ անգամ ժպտալ ու ծիծաղել գիտի, կենսունակ է եւ անպարտելի:պատահական չէ, որ Արցախը Պըլը-Պուղի է տվել հայ գրականությանը: Դա արցախցու կենսասեր ոգու,նրա զվարթ խոսքի առհավատչյան է»:*

Հիրավի, Պուղուն անդրադառնում ենք ամենադժվարին պահերին, մեծ արվեստագետի լավատեսությունը, կենսասիրությունը մեր դժվարին օրերին խառնելու,մեր հոգսաշատ առօրյան փոքր ինչ թեթեւացնելու առումով: Իսկ նշանները հարություն եւ զորություն են առնում, երբ դրանց հավատում են: Արցախի փառաբանմանն իրենց արվեստով լեցուն փայլուն գործունեությունը նվիրած երկու տաղանդավոր արվեստագետների այս նշանին անհնար է չհավատալ... Նրանց ոգեղեն ներկայությունն է պատերազմ ապրած իրենց կտավների գույներն անխաթար պահել, ինչպես ապրողներս Արցախի գույներն ենք պահում՝ դրանց մեկ առ մեկ վերստին շնչավորելու փափագով...

***Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***
***ք. Ստեփանակերտ***
***մեր սեփական թղթակից***

Հոբելյանի առթիվ

# Սրտի խոսք՝ կրթության եւ գիտության մշակին

Շնորհավորանքի, ակնածալից երախտիքի, մեծարանքի խոսք եմ ուզում ասել մի ողջ կոլեկտիվի անունից, որը 20 տարի Արմեն Ծատուրյանի հետ ու նրա ղեկավարությամբ վաստակած ճանապարհ է անցել:

Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ շնորհավորանքներն ու մաղթանքներն արձագանք պիտի գտնեն ու թեւածեն նրա հազարավոր սաների ու նրանց ծնողների, գիտության եւ կրթության շրջանակներում նրան ճանաչողների սրտերում ե՛ւ Հայաստանում, ե՛ւ մեր երկրի սահմաններից էլ դուրս: Նա արարող մարդ տեսակն է՝ մարդ կրթող ու դաստիարակող, մտքին՝ գիտելիք, սրտին ու հոգուն՝ ազնիվ զգացողություններ հաղորդող. նա իր ազնիվ գործի անխոնջ մշակն է՝ երկրին ու ժողովրդին պիտանի, հայրենանվեր, գիտակից քաղաքացիներ դաստիարակելու գործի նվիրյալը:

ՀՀ վաստակավոր մանկավարժ (2017 թ.), ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության բարձրագույն պարգեւի՝ *«Ոսկե հուշամեդալի»* մեդալակիր (2007 թ.), 1 մենագրության, 2 ուսումնամեթոդական ձեռնարկի եւ 71 գիտական հոդվածների հեղինակ, 5 գիտական ժողովածուների խմբագրական խորհրդի անդամ:

ՎՊՄԻ-ի ֆիզմաթ ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը գերազանցության դիպլոմով ավարտած եւ ֆիզիկայի ուսուցչի որակավորում ստացած շրջանավարտ (1979-1983 թթ.), ապա թեկնածուական թեզի պաշտպանություն (1990 թ.) Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանում եւ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (թեմա՝ *«Մեխանիկայի դասավանդման արդյունավետության բարձրացումը՝ կապված ադեկվատ (համապատասխան) մաթեմատիկական ապարատի ընտրությունից»*):

2007 թ.-ին ՎՊՄԻ գիտխորհրդի որոշմամբ նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում, 2009 թ.-ին Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի կողմից՝ պրոֆեսորի կոչում:

Գիտության անխոնջ մշակը կանգ չի առնում եւ 2013 թ. հոկտեմբերի 10-ին Սանկտ-Պետերբուրգի (ՌԴ) Ա.Ի. Գերցենի անվան ռուսաստանյան պետական մանկավարժական համալսարանում պաշտպանում է դոկտորական դիսերտացիա *«12-ամյա ուսուցման պայմաններում ֆիզիկայի ուսուցման բարձրացումը Հայաստանի միջնակարգ դպրոցներում»* թեմայով եւ ստանում մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Գիտական այսպիսի լուրջ ճանապարհ անցած անձը՝ Արմեն Միշայի Ծատուրյանը՝ մեր համաքաղաքացին, որն ապրում, աշխատում եւ արարում է մեր կողքին, արդեն գրեթե շուրջ 40 տարի: Երկար ու բեղմավոր է նաեւ նրա մանկավարժական գործունեությունը. աշխատանքային մկրտությունն ստացել է Սպիտակի Գոգարան գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես փոխտնօրեն եւ ֆիզիկայի ուսուցիչ (1983-1988 թթ.), ապա հաջորդաբար թիվ 10, թիվ 13, թիվ 12 դպրոցներում՝ զբաղեցնելով փոխտնօրենի, տնօրենի պաշտոններ, նաեւ ուսուցիչների կատարելագործման եւ ատեստավորման հանրապետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղում՝ որպես ֆիզիկայի կաբինետի վարիչ (1990-1996 թթ.), աշխատաել է Լոռու մարզի պետական տեսչությունում որպես ֆիզիկայի տեսուչ (1996-1999 թթ.):

1997 թ.-ից մինչ այսօր դասախոսում է ՎՊՄԻ-ի (այժմ Վանաձորի պետական համալսարան) ֆիզիկայի ամբիոնում:

Եվ վերջապես, 2001 թ. սեպտեմբերից, արդեն 20 տարի, Ա. Ծատուրյանը ՀՀ ԿԳՄՍՆ *«Վանաձորի մաթեմատիկայի եւ բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց»* ՊՈԱԿ-ի՝ բոլորին հայտնի *«Էվրիկա»*-ի տնօրենն է:

Պարոն Ծատուրյանն առաջին իսկ օրվանից ձեւավորեց առողջ, կրթական գործին նվիրյալ ուսուցչական կազմ, որի շնորհիվ՝ տարեցտարի, հետեւողականորեն դպրոցը դարձավ իսկական կրթական օջախ, որտեղ սաները ոչ միայն խորացված գիտելիքներ են ստանում, այլեւ շրջապատված են սիրով, հոգատարությամբ, ուշադրությամբ: Աշխույժ մեղվափեթակ հիշեցնող մեր դպրոցում՝ շենքային, մեղմ ասած, ոչ բարենպաստ պայմաններում, աշխատանքը եռում է:

Եվ պատահական չէ, որ նա 2006 թ.-ին ճանաչվել է Լոռու մարզի *«Տարվա լավագույն տնօրեն»*, իսկ 2007 թ.-ին՝ մարզի *«Տարվա լավագույն ֆիզիկայի ուսուցիչ»:* Ա. Ծատուրյանը ձեռք է բերել նաեւ ուսուցչի որակավորման տարակարգի երկրորդ աստիճան:

Եվ այս ամենի մեջ անուրանալի է մեր ղեկավարի դերը, ով հմուտ նավարարի նման 20 տարի վարում է մեր նավը՝ հաղթահարելով ցանկացած խութ ու խոչընդոտ:

Եվ ինչպե՞ս է հասցնում այս ամենը. մասնակցել է միջազգային գիտաժողովների ճապոնիայում, Խորվաթիայում, Թուրքիայում, Ռուսաստանում, Վրաստանում, Հունաստանում, ԱՄՆ-ում:

Մեր սիրելի տնօրենի այս բոլոր ձեռքբերումների, գիտական աստիճանների ու կոչումների մեջ, այնուամենայնիվ, ամենակարկառունը Մարդ կոչումն է, որն արտահայտվում է նրա պարզ, համեստ, անհավակնոտ, շիտակ ու անշահախնդիր կեցվածքով: Նա բոլորին լսելու, խորհուրդ ու խրատ տալու, սրտակցելու ու անհրաժեշտության դեպքում սփոփելու ժամանակ ու կամք ունի: Նա ուսուցիչ է՝ այս բառի գերագույն նշանակությամբ, նա հմուտ ղեկավար է, լավ ընկեր ու բարեկամ, լավ ամուսին, 2 զավակների հայր ու 6 թոռնիկների սիրառատ պապիկ:

Հարգարժա՛ն պարոն Ծատուրյան, մեր սիրելի՛ տնօրեն ու գործընկեր, Դուք, որ Վանաձորում պայծառ մի օր աշխարհ եկաք, խոսք ունեիք ասելու եւ ասացիք, գործ ունեիք անելու եւ արեցիք նվիրումով եւ արժանապատվորեն, ճանապարհ ունեիք անցնելու եւ անցնում եք հաղթանակներ ձեռք բերելով: *«Էվրիկա»*-ի ողջ աշխատակազմը ի խորոց սրտի շնորհավորում է Ձեզ հոբելյանի՝ ապրած ու ապրեցրած, իմաստավորված 60-ամյակի առթիվ, մաղթում է Ձեզ քաջառողջություն, անթիվ երջանիկ օրեր, նոր ձեռքբերումներ, եւ թող Աստծո՝ Ձեզ պարգեւած շնորհներն ընդհատում չունենան երբեւէ ...

***«Էվրիկա»-ի***
***աշխատակազմի անունից՝***
***Ա. Այվազյան***

**R**

# Կրթօջախի՝ մանկավարժի խաչը կրող ղեկավարը

Գրիշա Ղազարյանին ճանաչում են ոչ միայն Կոտայքի մարզում, այլեւ նրա սահմաններից դուրս: Ասել, որ նա տասնամյակներ շարունակ եղել է կրթօջախի հմուտ ու բանիմաց ղեկավար, նշանակում է ասել իրականության ընդամենը մի պատառիկի մասին:

Նա նախ եւ առաջ մանկավարժության մեջ մշակ է, կոմիտասյան խոսքերով ասած՝ դաստիարակությանը զգուշությամբ ու երկյուղածությամբ մոտեցող, բազմաբնույթ ու բազմաթիվ ինքնատիպ մանկավարժական հնարքների հեղինակ, ուրույն մեթոդներով ու ճանապարհներով մատաղ սերնդի սիրտն ու հոգին մխրճվող մանկավարժ: Նա ուսուցիչ է, ով հասկանում է, թե ինչպես պետք է մատուցել իր խոսքը, որպեսզի այն դրական ազդեցություն ունենա շրջապատի վրա: Սակայն Գրիշա Ղազարյանի՝ որպես դպրոցի հմուտ տնօրենի եւ բազմավաստակ ուսուցչի մասին խոսել ամենեւին չի նշանակում ամբողջն ասել:

Նա մարդկային մարդ է, ում համար ուրիշի ցավն ու հոգսը սեփական դարձնելը վաղուց դարձել է կյանքի նորմա: Դյուրընթռնողականություն ու նրբանկատություն, ապրումակցում ու դիտողականություն. ահա բնավորության այն հիմնական գծերը, որոնց շնորհիվ մեծավաստակ մանկավարժը տեղ է գրավել իրեն ճանաչողների նուրբ ու փխրուն, գեղեցիկ ու խորաթափանց հոգիներում:

Հրազդան քաղաքի N 6 հիմնական դպրոցի տնօրեն Գրիշա Ղազարյանը մանկավարժության ոլորտ է մտել, ինչպես ոմանք են կատակով ասում, անհիշելի ժամանակներից, իսկ իրականում՝ 1978 թվականին, Հրազդանի շրջանի Աղավնաձոր գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Չանցած մեկ ուսումնական տարի՝ կրթության ոլորտի ղեկավարները անմիջապես նկատում են նրա մեջ եղած կազմակերպչական ջիղը ու նշանակում նույն դպրոցի փոխտնօրեն: Ընդամենը մի քանի տարի հետո երիտասարդ մանկավարժի մոտ բացահայտվում են կրթօջախի ղեկավար լինելու բացառիկ հմտությունները, կարողությունները, ընդունակությունն ու ունակությունները: Խստաբարո ու իր տեսակով աշխարհում առաջադեմ կրթական համակարգ ունեցող խորհրդային դպրոցում մանկավարժական շնորհքով երիտասարդին նկատելը խոսում է այն մասին, որ նա ուներ առաքելություն, որի անունն է մանկավարժի խաչ: 1983 թվականին նա նշանակվում է Մարմարիկ գյուղի դպրոցի տնօրեն, ապա՝ Փյունիկ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն:

Սակայն նորանկախ Հայաստանում հմուտ ղեկավարի կազմակերպչական հնարավորություններն ավելի մեծ մասշտաբով օգտագործելու անհրաժեշտություն կար: Այդ նպատակով նրան նշանակում են տարածաշրջանում մեծ համբավ ձեռք բերած Հրազդանի N6 միջնակարգ դպրոցի տնօրեն, ում ղեկավարությամբ մինչեւ բոլորովին վերջերս դպրոցն իր հզոր առաքելությունն է կատարել Վանատուր թաղամասի ու հարակից շրջապատի բնակչության համար: Մեր սիրելի ու հարգված տնօրենն անցել է վաստակած հանգստի, բայց նա մեզ համար եղել, մնում ու կմնա որպես լավագույն խորհրդատու, ընկեր ու մեծ մանկավարժ:

Գրիշա Ղազարյանն իր աշխատանքային գործունեության ընթացքում բազում պարգեւներ է ստացել, բայց մենք համոզված ենք, որ նրա համար ամենամեծ պարգեւն իր հարազատ բնակավայրի բոլոր մարդկանց հետ ջերմ ու անկեղծ մտերմությունն է ու միշտ նրանց մի մասը լինելը:

Հարգարժա՛ն տնօրեն, սիրելի՛ մանկավարժ, հոգեհարազատ ու սրտառո՛ւչ մարդ, Ձեր կողմից ղեկավարած դպրոցի դռներն իր կրնկի վրա միշտ բաց են Ձեր առջեւ եւ մենք կարոտ ենք Ձեր հյութեղ ու քաղցր խոսքին, Ձեր ինքնատիպ մոտեցումներին, Ձեր ժպիտին ու լավատեսությանը: Մեր խոնարհումը Ձեզ՝ Ձեր անմնացորդ ու նվիրված աշխատանքի համար:

Հավատով լի ենք, որ կկարողանանք մեր դպրոցում եղած առաջադեմ ավանդույթների վրա Ձեր կողմից ավելացրած բարի ու հիանալի ավանդույթներին նորանոր ավանդույթներ ավելացնել, եւ Դուք այդ շղթայում կմնաք որպես մանկավարժի խաչը կրող անհատականություն:

***Ձեզ միշտ սիրող, հարգող,***
***վստահող ու նվիրված՝***
***Հրազդանի N 6 հիմնական***
***դպրոցի մանկավարժներ,***
***աշխատակիցներ,***
***թաղամասի բնակիչներ***

**R**

Փորձի՛ր լրացնել

# Գալդ բարի, Վագրի տարի



**Ուղղահայաց**

**1.** Ֆրանսիայում Ձմեռ պապին անվանում են…Նոել: **2.** Ձայլամի տեսակ: **4.** *«…, դու, …Քո գալդ բարի, Սիրուն Նոր տարի Նոր օրեր բեր մեզ: Ձյուն տուր սարերին, Անձրեւ՝ արտերին,Կարկուտը՝ չարին, Ձով արեւը՝ մեզ»:* (Ղ. Աղայան, *«Նոր տարի»*): **6.** Իսպանիայում սուրբ Կատարինեն Նոր տարվա գիշերը հսկայական ….ի վրա նստած *«թռչում»* է եւ լուսամուտագոգերին նվեր է թողնում երեխաներին: **7.** Ընտանի խոշոր եղջյուրավոր, բանող արու անասուն, որի էգը կոչվում է կով: **8.** Աստծու ստեղծածը: **9.** Թռչուն, որ ձմռանը, կանխազգալով եղանակի տաքանալը, *«լողում»* է ձյան մեջ: **10.** Մոծակի տեսակ: **12.** Արագավազ եւ արագաթռիչ թռչունը: **14.** Կենդանիների մարմնի ետեւից երկարող հավելվածական մասը, որ ողնաշարի շարունակությունն է: **15.** Ձմռանը քուն մտնող կենդանի, այն ծծում է իր թաթը՝ բավարարվելով թաթի հիմքում կուտակված ճարպաշերտով: **16.** Պետություն, ուր Ամանորին գիշերը բոլորը ուտում են սալորի պուդինգ, որի մեջ թխելիս ոսկե փոքրիկ զարդ են դնում: Նրան, ում բաժին է ընկնում զարդը, նա էլ գալիք տարում ամենաերջանիկն է լինելու: **20.** Սողուն, որ շատ ժողովուրդների դիցաբանության մեջ համարվում է բերրիության, հողի, ջրի, անձրեւի, ինչպես նաեւ օջախի եւ երկնային կրակի խորհրդանիշ: **21.** Այն գտնվում է աչքի վերեւում: **23.** Ոսկրային ձկների կարգի կենդանի: **25.** Սննդամթերք, որը Ճապոնիայում դրվում է ամանորյա սեղանին, որ խորհրդանշում է երկարակեցություն: 28.Մայրցամաք, որտեղ Նոր տարին գալիս է բոլորից ուշ:

**Հորիզոնական**

**2.** Կենդանիների սեռատեսակ: **3.** Այդպես են անվանում Ռուսաստանում Ձմեռ պապին՝ …Մորոզ: **5.** Գիշատիչ թռչուն, որ տեսնում է նշանակետը 8000 մետր բարձրությունից: **8.** Կենդանու սպանդից ստացված ելունք, որն օգտագործվում է որպես սնունդ: **10.** Լապլանդիայում ապրող Ձմեռ պապու կնոջ անունը: **11.** Կենդանի, որ Նոր տարվա օրերին փողոց են դուրս բերում Գվինեայում: Այդ կենդանին խորհրդանշում է հարստություն եւ հզորություն: **12.** Գարնան ավետաբեր թռչունը: **14.** Կոլումբիայում Ձմեռ պապին անվանում են …Պասկուալե: **17.** Երկարուկ անողնաշար կենդանի, որ շարժվում է մարմինը ճկելով: **18.** Մաշկոտանիների ընտանիքի արագավազ թռչուն: **19.** Ոչխարի ձագը: **21.** Փասիանների ընտանիքի արագավազ թռչուն: **22.** Ինչպես են անվանում Ճապոնիայում Ձմեռ պապին: **24.** Այդպես է կոչվում հին հայերենում տարին: **26.** Թռչնատեսակ, որը գնչուները Ամանորին դնում են սեղանին, ոտքերը գողացողը այդ օրը դառնում է սեղանապետ: **27.** Շինանյութի տեսակ, որ հույները Նոր տարվա նախօրեին իրենց ծոցը դրած նվեր են տանում: Նրանք ընտրում են ծանր … եւ ասում. *«Այս …ի չափ փող ունենաք»:* **29.** Կենդանի, որ խորհրդանշելու է 2026 թվականը: **30.** Նոր տարվա սեղանին դրվող համեմունք: **31.** *«-…Նոր տարի, գալդ բարի, Դու մեզ նվեր ինչ ես բերել: Քաղցր խնձոր, չիր ու սալոր, թե տանձ ու նուռ, չամիչ մի բուռ»:* ( Ն. Ստեփանյան, *«Նոր տարվա նվերը»*): **32.** Սողունների դասին պատկանող թունավոր օձ:

**Կազմեց Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ**

## Նախորդ համարի խաչբառի պատասխանները

**Ուղղահայաց**

**1.** դպիր, **2.** Լայկա, **3.** Նվարդ, **4.** Արամ, **6.** Նանսեն, **7.** Գայդար, **8.** Բայկալ, **9.** Խիտրուկ, **12.** Անան, **13.** Դալի, **15.** Կու, **16.** Ար, **19.** Վարանդա, **20.** Ասատրյան, **21.** Կալիգուլա, **23.** Վենետիկ, **26.** Տուշ, **28.** Աուլ, **32.** Արծվիկ, **33.** Ամազոն, **34.** Լեգրան, **35.** Մեն-շով, **38.** Մարկ, **39.** Անեն, **41.** Ակ, **42.** Սի, **45.** Սորնջան, **46.** Արաբական, **47.** Ակադեմիա, **49.** Նազարեթ, **52.** Շոու, **54.** Օրի, **58.** Վար-դան, **59.** Նարզան, **60.** Տերյան, **61.** Գայդայ, **64.** Գանա, **65.** Նպատ, **67.** Աղ, **68.** Տու, **71.** Նիվա, **72.** Նոնա, **73.** Աբել, **75.** Գոյա:

**Հորիզոնական**

**5.** Բրազավիլ, **6.** Նիգ, **8.** Բախ, **10.** Կարապ, **11.** Կադր, **14.** Պամիր, **15.** Կանադա, **17.** Ալ, **18.** Սեվակ, **20.** Անիկ, **22.** Թավուտ, **24.** Նար, **25.** Լեկ, **27.** Անատոլիա, **29.** Ուրան, **30.** Մեղու, **31.** Նորվեգիա, **32.** Ադա, **34.** Լիմ, **36.** Դրամա, **37.** Ամալ, **40.** Կեկել, **41.** Անանաս, **43.** Ռե, **44.** Փիսոն, **46.** Ակնա, **48.** Քանոն, **50.** Կոն, **51.** Նավ, **53.** Տրավիատա, **55.** Ոզնի, **56.** Վագր, **57.** Ալաշկերտ, **58.** Վան, **60.** Տեգ, **62.** Դանակ, **63.** Ագնի, **66.** Մեթան, **67.** Անապատ, **69.** Նա, **70.** Բանան, **72.** Նատա, **74.** Սագան, **76.** Նին, **77.** Նոյ, **78.** Էյնշտեյն:

# Ի՞նչ է նախապատրաստել Վագրի տարին մեզ համար՝ ըստ կենդանակերպի նշանների

## Խոյեր

**թիվը՝ 3, 4, 12,**
**գույնը՝ կարմիր, դեղին,**
**քարը՝ կորալ եւ դեղին շափյուղա**

Կենդանակերպի այս նշանի տակ ծնվածները 2022 թվականի առաջին եռամսյակից դանդաղ, բայց կայուն աճ կտեսնեն: Մի՛ նյարդայնացեք, մի՛ անհանգստացեք եւ մի՛ զարմացեք: Սկզբում գուցե ստիպված լինեք գործ ունենալ անցյալի խնդիրների ու թերությունների բեռի հետ: Բայց այս ամենը ժամանակավոր է, եւ դուք, անշուշտ, գլուխ կհանեք:

Քանի դեռ Սատուրն մոլորակը գտնվում է Այծեղջյուրի նշանում, ամեն ինչ լավ կլինի: Գլխավորը համբերությունն ու աշխատասիրությունն է. ջուրը քարը մաշում է: Այնուամենայնիվ, ստիպված կլինեք շատ ուշադիր հետեւել ձեր կարիերային, քանի որ աստղերը կարող են խանգարել առաջընթացին: Փաստ չէ, որ դա տեղի կունենա, բայց մի՛ մոռացեք այս փոքրիկ խոչընդոտի մասին:

## Ցուլեր

**թիվը՝ 2, 6, 7, 9,**
**գույնը՝ սպիտակ, կանաչ,**
**քարը՝ ադամանդ, նռնաքար**

Այս նշանի ներկայացուցիչներն են իրական հաջողակները 2022 թվականին: Նրանք շատ լավ նորություններ կստանան տարեսկզբին: Մի՝թե դա հիանալի չէ: Ուստի աշխատեք 2022 թվականի հունվարի 1-ից ուշադիր պլանավորել ամեն ինչ՝ հանդիպումներ, միջոցառումներ եւ այլն: Սա կօգնի ձեզ առավելագույն օգուտ քաղել նոր հնարավորություններից եւ հեռանկարներից: Ձեր հիմնական խնդիրն է համատեղել գործողություններն ու հնարավորությունները: Եթե ստացվի, հաջող ձեռնարկումները եւ ամենահամարձակ ծրագրերի իրականացումը երաշխավորված են:

Ամեն ինչ կախված է կոնկրետ անձից. որոշ Ցուլեր սիրում են ամեն ինչ պլանավորել եւ նկարել կետ առ կետ, մյուսները պարզապես փորձում են բաց չթողնել ներկայացված հնարավորությունները:

## Երկվորյակներ

**թիվը՝ 2, 3, 5, 6,**
**գույնը՝ սպիտակ, դեղին,**
**քարը՝ զմրուխտ, օնիքս, շափյուղա**

2022 թվականը ձեզ համար կլինի զարմանալի եւ եզակի: Նույնիսկ ավելին՝ իսկապես կախարդական: Դա կլինի հետաքրքիր ժամանակ՝ լի երազանքներով, նախագծերով եւ գաղափարներով: Եվ ամեն ինչ կընկնի ձեր վրա, ասես եղջյուրից:

Նախկինում դուք, հավանաբար, ամենից հաճախ գնացել եք հոսքի հետ: Հիմա ամեն ինչ փոխվել է. երազի՛ր, համարձակվի՛ր, ամեն ինչ կստացվի: Արդյունքում, ինչ էլ որ սովորել եք, վերջապես կարող եք կյանքի կոչել: Քանի որ 2022 թվականը ձեր տարին է:

## Խեցգետիններ

**թիվը՝ 1, 2, 4,**
**գույնը՝ կարմիր, նարնջագույն,**
**քարը՝ լուսնաքար, մարգարիտ**

2022 թվականին այս նշանի տակ ծնվածների համար շատ կարեւոր է կենտրոնանալ անձնական կյանքի, ֆինանսների, ունեցվածքի եւ կարիերայի վրա: Այս բոլոր ասպեկտները նրանց համար առանցքային նշանակություն կունենան: Խեցգետիններն այս ոլորտներում կարող են բախվել տարբեր անկանխատեսելի հանգամանքների, ուստի նրանք պետք է պատրաստ լինեն դրանց:

Կենդանակերպի այս նշանի ներկայացուցիչների համար 2022 թվականը քրտնաջան աշխատանք եւ հաստատակամություն է: Հաջողություն կլինի, սակայն, ինչպես ասում են, լճակից ձուկ հեշտությամբ չես բռնի:

Եթե փորձեք առավելագույնը եւ վճռականություն դրսեւորեք, անպայման կհասնեք այն ամենին, ինչ մտքում ունեք: Այս տարին կարող է լինել լավագույններից մեկը ձեր կյանքում:



## Առյուծներ

**թիվը՝ 1, 2, 3, 9,**
**գույնը՝ կարմիր, դեղին, նարնջագույն,**
**քարը՝ ադամանդ, սուտակ**

Առյուծի նշանի տակ ծնվածներին շատ իրադարձություններով լի տարի է սպասում: Նրանք պետք է ավելի շատ կենտրոնանան կարեւոր որոշումների եւ գործողությունների կայացման վրա, այլ ոչ թե ծրագրերի պլանավորման եւ զարգացման վրա:

Ամեն ինչ կախված է ձեզանից. ջանքերն ապարդյուն չեն անցնի, գլխավորը չնահանջելն ու չհանձնվելն է: Կարեւոր է նաեւ չշտապելը, չշտապելը եւ չհուզվելը՝ ամեն ինչ իր ժամանակն ունի: Զգուշորեն կշռեք եւ հաշվի առեք յուրաքանչյուր քայլը, հակառակ դեպքում ձեր բոլոր ջանքերն ավարտվում են:

## Կույսեր

**թիվը՝ 1, 4, 8,**
**գույնը՝ դեղին, կանաչ, մանուշակագույն,**
**քարը՝ ադամանդ, զմրուխտ, մարգարիտ**

Կենդանակերպի այս նշանի ներկայացուցիչների համար 2022 թվականը վերելքների ու վայրէջքների տարի է: Իրադարձությունների օրինաչափության ու կանխատեսելիության վրա հույս անգամ չես կարող ունենալ: Այս տարին ձեզ համար լի կլինի մարտահրավերներով:

Անկախ նրանից, թե դա անձնական է, թե մասնագիտական, դուք պետք է զգույշ լինեք: Մի շտապեք որեւէ գործողություն կամ քայլ անել, քանի դեռ ամեն ինչ ուշադիր չեք կշռել եւ վերլուծել: Սա կօգնի նվազագույնի հասցնել ռիսկերը եւ կազատի ձեզ սխալներից:

## Կշեռքներ

**թիվը՝ 3, 5, 6, 8,**
**գույնը՝ շագանակագույն, երկնագույն,**
**քարը՝ ադամանդ, նռնաքար, փիրուզ**

2022 թվականը շատ առումներով բարենպաստ ու առաջադեմ է լինելու. փորձելու եւ փորձելու ձեր տաղանդը օգտակար կլինի: Հնարավոր է, որ այն անսպասելի բախտ բերի, ինչի մասին այսօր նույնիսկ չեք համարձակվում երազել:

Դուք բնույթով հետազոտող եք, ուստի լիովին միացրեք ձեր աստվածատուր տաղանդը եւ ուսումնասիրեք, ճանաչեք ձեր շրջապատի ամեն ինչ եւ բոլորին: Հաջողությունն ու հաջողությունը շատ մոտ են: Փորձարկումը նորարարության բանալին է:

## Կարիճներ

**թիվը՝ 9, 18, 27, 36, 45,**
**գույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն,**
**քարը՝ մարգարիտ, շափյուղա, նռնաքար**

Կարիճի նշանի տակ ծնվածները վերջապես կզգան ցանկալի թեթեւությունը: Սա վերաբերում է ինչպես անձնական, այնպես էլ մասնագիտական կյանքին: Դուք հնարավորություն կունենաք ազատվել ձեր անհանգստությունից եւ պարզապես վայելել կյանքը: Այնուամենայնիվ, կյանքում ոչինչ չի տրվում արծաթե սկուտեղի վրա. ձերբազատվեք կործանարար եւ վնասակար սովորություններից, ձեռք բերեք նորը եւ առողջը:

Առողջ սովորությունները ներառում են գրքեր կարդալը, նկարելը, նվագելը եւ ցանկացած այլ բան, որը նպաստում է հոգու խաղաղությանը եւ ներդաշնակությանը:

## Աղեղնավորներ

**թիվը՝ 6, 8, 9,**
**գույնը՝ բաց դեղին, բաց շագանակագույն, դեղձի գույն,**
**քարը՝ օպալ**

Կենդանակերպի այս նշանի ներկայացուցիչների համար 2022 թվականը հաջողություն է խոստանում ֆինանսական ոլորտում: Հետազոտելու ձեր ունակության շնորհիվ դուք կկարողանաք կայուն դիրքի հասնել:

Ի դեպ, մի՛ հապաղեք խորհուրդներ փնտրել սիրելիներից կամ մասնագետներից: Գալիք տարում նրանց օգնությունը ձեզ համար անգնահատելի կլինի:

## Այծեղջյուրներ

**թիվը՝ 6, 8, 9,**
**գույնը՝ սեւ, գորշ, կանաչ,**
**քարը՝ նռնաքար, մարգարիտ**

Ի վերջո, դուք կարող եք ձեզ բավարարված զգալ: 2022 թվականին նոր հնարավորություններ կբացվեն ներդաշնակության ձեր ցանկության շնորհիվ: Տարին լի կլինի ուրախությամբ:

Դուք կբացահայտեք գեղեցկության եւ գրավչության նոր կողմեր, կհասկանաք եւ կբացահայտեք այն, ինչը նախկինում անկարեւոր էր համարվում:

## Ձրհոսներ

**թիվը՝ 3, 6, 9, 12,**
**գույնը՝ երկնագույն, վարդագույն, բաց դեղին,**
**քարը՝ զմրուխտ, սուտակ, փիրուզ**

Ներդաշնակությունն այն է, ինչը ձեզ համար հիմնական բառ կլինի 2022 թվականին: Համոզվեք, որ ձեր հոգում խաղաղություն եւ ներդաշնակություն կա, եւ այդ դեպքում կարող եք հույս դնել հաջողության վրա ցանկացած ձեռնարկում: Դուք չեք ճանաչի ձեզ. դուք կճառագեք խաղաղություն եւ երջանկություն, այն կտաք մարդկանց՝ ամբողջ տարին:

## Ձկներ

**թիվը՝ 3, 5, 12,**
**գույնը՝ սպիտակ, կանաչ, դեղին,**
**քարը՝ սպիտակ շափյուղա**

Կենդանակերպի այս նշանի տակ ծնվածներն ունեն հատուկ եւ եզակի ունակություններ: Ժամանակն է դրանք դրսեւորել: 2022 թվականին կարող են հայտնվել բարդ ու ոչ միանշանակ իրավիճակներ: Մի անհանգստացեք, ամեն ինչ կլինի ձեր օգտին: Այս տարի աննախադեպ էներգիա եւ արդյունավետություն կցուցաբերեք: Ձեր չափազանց ստեղծագործ բնույթի շնորհիվ՝ իսկական բեկում կլինի: Դուք նույնիսկ կսկսեք անհանգստանալ, որ չափից ավելի պրագմատիկ եք դարձել, բայց ոչ. պարզապես՝ 2022 թվականը ձեր հաջողության տարին է:

***Ըստ «newblog.am» կայքի***
***Պատրաստեց Հրաչյա ԲԱԼՈՅԱՆԸ***

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի *«Կաթնաղբյուրի հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի երաժշտության (6 դասաժամ), կերպարվեստի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***2022թ. հունվարի 12-ից մինչեւ հունվարի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունվարի 27-ին՝ ժամը 15:00-ին,*** ՀՀ Կոտայքի մարզի Կաթնաղբյուրի հիմնական դպրոցում, հասցեն՝ գ. Կաթնաղբյուր, 2-րդ փ., շ. 26:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 88-24-51 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի *«Եղեգի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի հայոց լեզվի եւ գրականության, ռուսաց լեզվի, ՆԶՊ-ի, ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***2022թ. հունվարի 12-ից մինչեւ հունվարի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունվարի 27-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Սյունիքի մարզի Եղեգի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կապան համայնք, Եղեգ բնակավայր, փ. 1, շ. 25/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 96-86-73 հեռախոսահամարով:

# Խոսք շնորհավորանքի



*Սուրբ գիրքն ասում է. «Բացում են կոչդաք, ասեցեք ասեցեք են ընկերդաք»: Սուրբ գրքի «ընկերդաք» բառի արժանի կրողներից մեկը մեր սիրելի տնօրենն է, ում հետ պարիս ունենք աշխատելու, մարդ, ով «մարդ» բառի իմաստը իր կերպարով ապնվայնում է, ում մասին խոսելիս «մարդ» բառը վեհորեն ես արտասանում:*

*Նա ֆիզմաթ դպրոցի աղն ու հայն է, գործն ու շարժն է, ճորտն ու տերն է: Նրա մտահղացումներն ու երեւակայությունը բացվում են յուրաքանչյուր նոր սերնդի հետ՝ նրանց փոխանցելով իր մտքի հյուսվածքի արարման լույսը: Հունվարի 10-ին լրացավ մեր սիրելի տնօրենի 65-ամյակը, լրացավ նրա մանկավարժական գործունեության 40 տարին, լրացավ նրա տնօրենության 20 տարին:*

*Բոլոր ասպարեզներում նա մնաց նույն որոնողը, կառուցողը, ստեղծողն ու ներմուծողը: Դարձ օրեր առաջ նա իր գործը հանձնեց նոր տնօրենին, բայց հանձնեց այնքա՛ն գեղեցիկ, այնքա՛ն անբասիր, այնքա՛ն շուքով, որ կրկին արժանացավ կոլեկտիվի հիացմունքին ու ծափողջույններին: Մեծությունները այսպիսին են լինում:*

*Սիրելի՛ պարոն Ղազարյան, սիրելի՛ հոբելյար, մեր ընկե՛ր, մեր բարեկա՛մ, շնորհավորում ենք Ձեզ՝ ծննդյան տարեդարձի առթիվ, ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն, երջանկություն, հոգու խաղաղություն, նվության վայելք: Դող երկնային բոլոր գանձերը սփռվեն Ձեզ վրա, իսկ երկրային ները չլինեն հասանելի:*

*Ապրե՛ք, ապրե՛ք վայելքով, ապրե՛ք Աստծո կողմից Ձեզ տրված Ձեր բոլոր օրերն ապրելով:*

***ԵՊՀ-ին առընթեր Ֆիզմաթ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ, ծնողներ, աշակերտներ, կառավարման խորհուրդ***

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ *«Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ»* ՊՈԱԿ-ի հանրահաշիվ եւ երկրաչափություն առարկայի դասախոսի թափուր տեղի համար (շաբաթական 12 ժամ):

Մրցույթը անց է կացվում բանավոր՝ հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդելիք առարկային եւ մանկավարժական գործունեությանը: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- Դիմում*

*- Կրթության մասին հավաստող փաստափուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը)*

*- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը)*

*- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)*

*- ինքնակենսագրություն*

*- մեկ լուսանկար՝3ճ4 չափի*

*- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը)*

*- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան,կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)*

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ 2022թ. հունվարի 25-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչեւ 15:00, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունվարի 27-ին՝ժամը 15:00-ին*** Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում, հասցեն՝ Արամ Մանուկյան 31:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 03-55-66 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ *«Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ում հայտարարվում է մրցույթ՝ պատմության դասախոսի (շաբաթական 16 դասաժամ «Հասարակագիտություն» առարկայի հետ միասին) թափուր տեղի համար:

Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն՝

*1. դիմում (Ձեւ 1),*

*2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համաձայն՝ փաստաթուղթ (դիպլոմ)՝ համապատասխան որակավորման վերաբերյալ (բնօրինակը եւ պատճենը),*

*3. անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),*

*4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),*

*5. ինքնակենսագրություն (Ձեւ 4),*

*6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

*7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինգրքույկ (բնօրինակը եւ պատճենը),*

*9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճանը, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):*

Մրցույթն անցկացվում է հարցազրույցի ձեւով՝ Հաստատության կողմից կազմված բանավոր առաջադրանքների հարցատոմսերով, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) ու մանկավարժական գործունեությանը:

Փաստաթղթերն ընդունվում են ուսումնական հաստատությանում ***2022թ. հունվարի 12-ից մինչեւ հունվարի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը՝ բացի շաբաթ եւ կիրակի օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2022թ. հունվարի 31-ին՝ ժամը 14:00-ին,*** Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն՝ ք. Հրազդան, Գործարանային 3:

Այլ տեղեկությունների համար զանգահարել (093) 93-80-45 եւ (091) 19-03-76 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

*«Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ»* ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետեւյալ առարկաների եւ մասնագիտությունների դասախոսական պաշտոնների համար

- 0811.01.5 *«Գյուղատնտեսագիտություն»*, ծանրաբեռնվածությունը՝ 144 ժամ,

- 0811.06.5 *«Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա»*, ծանրաբեռնվածությունը՝ 144 ժամ:

Նշված մասնագիտություններում ընդգրկված մասնագիտական ուսումնական մոդուլները կարող է դասանդել այն անձը, որը ստացել է դասընթացի բնույթին համապատասխանող միջին մասնասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքային փորձի առկայությունը ցանկալի է:

Դասախոսի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

*1) դիմում (Ձեւ 1),*

*2) կրթությամբ մասին հաստատող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),*

*3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),*

*4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),*

*5) ինքնակենսագրություն (Ձեւ 4)*

*6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

*7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.*

*8) Հայաստանի Հանրապետությունում արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ (բնօրինակը եւ պատճենը),*

*9) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*10) Ըստ պաշտոնի հավակնորդի հայեցողության՝ գիտամանկավարժական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:*

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը բնօրինակներով), ներկայացնել ***2022 թ. հունվարի 12-ից մինչեւ հունվարի 25-ը ներառյալ՝ ժամը 10:00-ից 16:00-ն (բացի շաբաթ, կիրակի եւ հանգստյան օրերից),*** *«Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ»* ՊՈԱԿ-ի մրցույթին հանձնաժողովին, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, փողոց Ուսանողական 5:

Մրցույթը տեղի կունենա ***հունվարի 26-ին՝ ժամը 11:00-ին,*** Կոտայքի մարզի Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում:

Մանրամասների համար զանգահարել (099) 32-35-45, (077) 15-88-27 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Հրուշակեղենի տեխնոլոգիա»* եւ *«Տրանսպորտայինմիջոցների շահագործում եւ նորոգում»* մասնագիտության գծով արտադրական ուսուցման վարպետի եւ մասնագիտական մոդուլների դասախոսի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է մեկ փուլով՝ բանավոր առաջադրանքով, որի հարցաշարը կազմված է ՄԿՈՒՀԶԱԿ-ի տվյալ մասնագիտության մոդուլային ուսուցման չափորոշիչից,որը հաստատված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

*- դիմում (Ձեւ 1),*

*-կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),*

*- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),*

*- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 4),*

*- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):*

Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթությանորակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամբարձրագույն կրթություն չի իրականացվում:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ 2022թ. հունվարի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:30-16:00, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2022թ. հունվարի 27-ին՝ ժամը 12:00-ին*** Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն՝ ք.Երեւան, Վ.Ավանեսովի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-17-31, (010) 47-17-32, (077) 38-07-02, (099) 34-56-44 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

*«Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետեւյալ թափուր աշխատատեղերի համար՝

- *«Ֆիզիկա»* առարկայի դասախոս (6 դասաժամ),

- *«Տրանսպորտային միջոցների շահագործում եւ նորոգում»* առարկայի ավտոփականագործ -արտադրական ուսուցման վարպետ (0,5-1 դրույք),

- *«Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում եւ նորոգում»* առարկայի ռադիոմեխանիկ- արտադրական ուսուցման վարպետ (0,5-1 դրույք),

- *«Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմահարդարում»* առարկայի դիմահարդար-արտադրական ուսուցման վարպետ (0,5-1 դրույք):

